

3572

ԱՆ ՍՈՒ ԼՈՒԾՎՈՂԿԱՄԱՏ  
ՅԱՆ ԱԿՈՒՄԲԱՑԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Ֆ. Ն. 016620ԻԿ

ՀԵԿԱՐԱՆԱԿԱՆ ՊՐԱՎԵԳՈՒՆԴԱՆ  
ԽԲԺԻԹ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆՈՒՄ ԵՎ,  
ԿՈԼԻՈԶԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

215  
0 - 32

ԼՈՒԾՐԱՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԼՈՒՍԺԱՂԿԱՄԱՏ 23 SEP 2009  
ՔԱՂԱՔԻ ՎԿԱՐՁՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԱՅՆ ՄԵՐՈԴԱԿԱՆ ԿԱԲՒՆԵՏ

215 45  
0-32

Ց. Ն. ՕԼԵՇՉՈՒԿ

СЕВЯРГИЧНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

## ՀԵԿԱԳՐՈՒԹԿԵՆ ՊՐԻՊԵԴԱՆԴԵՆ

# ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԿՈԼԻՌՈԶԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

## LITERATURE

P. B. U. S.

1940

02 SEP 2013

ՀԱԿԱՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԽՐԱՅ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ  
ԵՎ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

## Ի՞ՆՉՈՒ ԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԿՐՈՆԻ ԴԵՄ

Մեր երկիրը մտել է անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը:

Հնկեր Ստալինը համապատարում տված իր պատմական զեկուցման մեջ մատնանշեց, որ «Երկրի ներսում մեր պետության հիմնական խնդիրն այժմ անտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական խաղաղ աշխատանքն է»:

Զարդացման նոր շրջանում կուլտուրական-դաստիարակչական աշխատանքի վճռողական նշանակության վերաբերյալ այդ նույն միտքն ընդգծել է նաև ընկ. Մոլոտովը. «Մեր ներքին խնդիրների տեսակետից, — ասել է նա, — ծանրության կենտրոնն այժմ փոխադրվում է դաստիարակչական հարցերի վրա, կոմունիստական դաստիարակության հարցերի վրա, աշխատավորների գիտակցությունում կազմակերպմի գեռ այնքան կենսունակ մնացորդները վերացնելու խնդիրների վրա»:

Հետևաբար, նոր պայմաններում, մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի և շահագործող դաստիարակերի լիակատար ոչնչացման պայմաններում, գլխավոր նշանակություն են ստանում պլուտուրիտի դիկտատուրայի կազմակերպական-շինարարական և դաստիարակչական կողմերը: Երրորդ հնգամյակի քաղաքական վճռողական խնդիրը հանդիսանում է աշխատավորների՝ կոմունիզմը ակտիվ կառուցողների կոմունիստական դաստիարակության խնդիրը, մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու խնդիրը:

Մարդը, կենդանի մարդկային անձնավորությունը, միշտ

2597  
Կ/

եղել է կոմունիստական պարտիայի և սովետական իշխանության ուշադրության ու հոգատարության կենտրոնում։ Ընկեր Ստալինը բազմիցս հաստատակամորեն ընդգծել է, որ մեր հիմնական հոգսը—այդ կազմերի՝ կոմունիզմի կառուցողներին կատամարք հոգատարությունն է։

Նա բազմիցս մատնանշել է, որ մեր պլանների ռեալ լինելը կախված է նախ և առաջ հենց մեղնից, այն մարդկանցից, որոնք կառուցում են նոր, անդասակարգ հասարակությունը։

Սոցիալիզմը մարդուն բարձրացրեց չտեսնված բարձրության։ Առաջ մարդկանց ձնջող մեծամասնությունն իր քրտինքով և արյունով հարթում էր ուրիշների շահագործողների, ճրիակերների, պարագիտների ուղին։ Այժմ, սոցիալիզմի պայմաններում աշխատավորներն են հանդիսանում իրենց սեփական բախտի ստեղծողները։

Բայց մարդիկ, որոնք տապալեցին հին կազմերը և սկսեցին կառուցել նոր, անդասակարգ հասարակություն, դուրս են եկել հին հասարակարգից։ «Մենք կարող ենք,—գրել է Վ. Ի. Լենինը,—կոմունիզմը կառուցել միայն գիտելիքների, կազմակերպությունների ու հիմնարկությունների այն գումարից, մարդկային ուժերի ու միջոցների այն պաշարով, որոնք մնացել են մեզ հին հասարակությունից» (հ. XXV, ոռու. հրատ., էջ՝ 329)։

Այդ մարդկանցից շատերը վարակված են կապիտալիզմի օբյանին խալերով։ Նախապաշարմունքներով, հին մնացուկներով, սնոտիապաշտություններով, մանր բուրժուական սովորություններով, որոնք խանգարում են կոմունիստական հասարակություն կառուցելուն։ Ահա թե ինչու լենինն ու Ստալինը միշտ ընդգծել են աշխատավորների կոմունիստական դաստիարակության, մարդկանց սոցիալիզմի գիտակից ու ակտիվ կառուցողներ դարձնելու խոշորագույն նշանակությունը։

Դեռ 1920 թ. քաղլուսվարների համառուտական խորհրդակցության ժամանակ Վլադիմիր Իլյիչը շեշտում էր, որ կոմունիստական պարտիայի համար «հիմնական խնդիրը պիտի լինի՝ օգնել աշխատավոր մասսաների դաստիարակմանն ու կրթությանը, որպեսզի հաղթահարենք հին սովորությունները, հին ունակությունները, որոնք ժառանգություն են մնացել հին կազմերից, սեփականատիրական սովորություններն ու ունակությունները, որոնք ամբողջովին ներծծվում են մասսաների ստվար շերտերի մեջ» (հ. XXV ոռու. հրատ., էջ՝ 449—450)։

Երբ մեր երկրում առաջավոր բանվորների նախաձեռնությամբ ունողուցիայի առաջին տարիներում առաջացան կոմունիստական շաբաթօրյակները՝ որպես աշխատանքի նկատմամբ նոր, կոմունիստական վերաբերմունքի ցուցանիշ, լենինը շերմորեն խրախուսում էր այդ նախաձեռնությունը և այն գնահատեց որպես համարկայիշին նշանակությունն ունեցող փաստ։ Նա գրել է՝ «Դա հեղաշրջման սկիզբն է, ավելի դժվար, ավելի էական, ավելի արմատական, ավելի վճռողական, քան թե բուրժուազիայի տապալումը, որովհետև դա հաղթանակ է սեփական քարացածության, սանձարձակության, մասնը բուրժուական էպոյիզմի դեմ, այն սովորությունների դեմ, որոնք բանվորին ու գյուղացուն ժառանգություն է թողել անիծյալ կապիտալիզմը» (հ. XXIV, ոռու. հրատ., էջ՝ 329)։

Մեր երկրում հասարակության ունողուցիոն փոխակերպման ընթացքում անընդհատ կատարվել և կատարվում է մարդկանց սովորությունների, կենցաղի և գիտակցության արմատական փոփոխություն։

Հին ստրկական ունակությունները և սովորությունները, կապիտալիստական տրագիցիաները և նախապաշարմունքները շարունակ ավելի ու ավելի ընկնում են անցյալի գիրկը։ Աշխատավորներն իրենց մեջ զարգացնում են նոր, կոմունիստական մարդու բնորոշ գծերը՝ բոլցեիկյան կայունություն, հաստատակամություն, համարձակություն, կարգապահություն, ունողուցիոն զգնություն, սեր դեպի ժողովուրդը, նվիրվածություն հայրենիքին և կոմունիստական պարտիային։

Նոր, սոցիալիստական կուլտուրայի վառ ցուցանիշներից է հանդիսանում ստախանովական շարժումը, որը ժողովրդի ընդերքից վեր է հանում հազարավոր հերոսներ, առաջ է շարժում գիտությունն ու տեխնիկան։ Նոր մարդու դեմքը մարմնացած է սոցիալիստական հասարակության հարվածայինների, ստախանովականների, հերոսների մեջ, սովետական հայրենասերների մեջ, պարտիական և ոչ պարտիական բոլցեիկների հսկայական մասսայի մեջ։

Սակայն մարդկանց գիտակցության մեջ եղած անցյալի մնացուկները գեռ վերջնականապես չեն վերացված։ Ամենից ավելի շատ նրանք նկատելի են աշխատանքի նկատմամբ եղած վերաբերմունքի մեջ։ Մինչեւ հիմա բանվորների և ծառայողների մեջ կան մարդիկ, որոնք ձգտում են պետությանը տալ ավելի քիչ, 5

իսկ իրենց համար ավելի շատ պոկել: Մեր երկրում դեռ կան դատարկաշըջիկներ և լոգրեր, որոնք մնասում են պետությանը: ՍՍՌՌ Գերազույն Սովետի Հրամանագիրը՝ «Ուժինամյա աշխատանքային օրվա, յոթնօրյա աշխատանքային շաբաթին անցնելու մասին և ձեռնարկություններից ու հիմնարկներից բանվորների ու ծառայողների ինքնազլուխ կերպով հեռանալն արգելելու մասին» պահանջում է վճռական պայքար մղել այդ տեսակի տարրերի դեմ:

Գյուղացիների մեջ նույնպես պատահում են այնպիսիները, որոնք կոլտնտեսություններում անբարեխիզ կերպով են աշխատում և ձգտում են ապահովել իրենց անձնական շահերը՝ ի վեա կոլտնտեսությունների շահերի: Զախշախված կուլակության մնացորդները կոլտնտեսություններում մացնում են կոլտնտեսային կարգերին թշնամի մասնավոր սեփականատիրական բուրժուական տենդենցիներ: Պոկողական տրամադրություն ունեցող տարրերը կոլտնտեսություններում աշխատում են իրենց տնամերձ հողամասերն ավելացնել կոլտնտեսությունների հաշվին, կոլտընտեսության մեջ են գտնվում ձեր համար, որպեսզի, օգտվելով համապատասխան արտօնություններից, զբաղվեն սպեկուլյացիայով և այլն: Այդ տեսակի թշնամական տենդենցիների դեմ պայքարելու անհրաժեշտության մասին մեզ հիշեցնում է Համ Կ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌՌ Ժողկոմսովետի որոշումը՝ «Կոլտնտեսությունների հանրային հողերը վատնելուց պահպանելու միջոցների մասին»:

Կան հարյուրավոր այլ հին սովորություններ, տրամադրեաներ, ունակություններ, նախապաշարմունքներ, որոնք պատվաված են շահագործող հասարակության կողմից և այժմ մնասում են կոմունիզմի կառուցմանը մեր երկրում: Հնի այդպիսի այլանդակ մնացուկները, ինչպես օրինակ՝ գողությունը, կեղծիքը, հարբեցողությունը, կեղծագորությունը, անբարոյտանությունը, նախանձը, լակեռությունը, ոչ ընկերական վերաբերմունքը, հոգեկի կինը, աղահությունը, հսասիրությունը, մեր կենցաղում վերջնականապես վերացած չեն և լուրջ արգելք են սոցիալիզմից դեպի կոմունիզմն անցնելու գործում:

Մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի տարածված և համար մնացուկներից են կրոնական սնոտիապաշտությունները և նախապաշարմունքները:

Կրոնական մնացուկների ուսակցիոն դերն այն է, որ նրանք

կազկանդում են աշխատավորների կյանքը, մարում նրանց էներգիան, քնիցնում զգոնությունը:

«Այժմ,—ասել է ընկեր Մոլոտովը Համ Կ(բ)Պ ԽՎԻ համագումարում,—մեր երկրում ամեն ինչ արված է այն բանի համար, որպեսզի ադրբյուրի պես ըլիի ժողովրդական ստեղծագործությունը քաղմազդ Սովետական Միության հոկայական տարածությունների վրա, որպեսզի օրեցօր աճի ժողովրդական բարեկեցությունը, լայնությամբ ու խորությամբ ծավալվի սոցիալիզմի երկրի կուլտուրական շինարարությունը»:

Այժմ խնդիրն այն է, որ մարդիկ կոմունիզմի կառուցողները՝ ակտիվ կերպով ձեռք զարկեն բոլոր այդ հարուստ հնարավորությունների օգտագործմանը, որ նրանք իսկապես գիտակցին և իրենց շահերի տեսակետից առավելագույն գործնական արդյունքով օգտագործեն քաղաքական, տնտեսական, կազմակերպական և մյուս բոլոր հոկայական հնարավորությունները:

Կրոնական նախապաշարմունքները հավատացյալ մարդկանց խանգարում են մորիլիզացիայի ենթարկելու իրենց բոլոր ուժերն ու ընդունակությունները կոմունիզմի կառուցման գործի համար, խանգարում են նրանց գառնալու կոմունիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողները:

Կոմունիզմը և կրոնը անհաջողի են: Կոմունիզմը սովորեցնում է, որ պատմության ստեղծողները մարդիկ իրենք են: Դա աշխատավորներին ներշնչում է վստահություն՝ երջանիկ, կոմունիստական հասարակություն կառուցելու համար մղող պայքարում:

Կրոնն ընդունում է, որ հասարակական կյանքը, մարդկանց երջանկությունը կախված է աստծուց: «Մարդը մտադրվում է, իսկ աստված տնօրինում»: Կրոնի համաձայն մարդը չի կարող հասնել ցանկալի նպատակների՝ իրեն համար ստեղծել լավ կյանք, նա պետք է հույսը դնի «աստծո կամքի» վրա: Դա սպանում է աշխատավորների էներգիան, նրանց վարժեցնում է պասսիվության, անգործունեության:

Կոմունիզմը սովորեցնում է, որ աշխատավորները լավագույն կյանք պետք է նվաճեն այստեղ, երկրի վրա: Խոկ կրոնն աշխատավորների հայցքները դարձնում է դեպի երկինք և նրանց միթարում է այն մտքով, թե լավ կյանքը գալիս է միայն մահից հետո «հանդերձյալ կյանքում»:

Կոմունիզմն ասում է, որ աշխատավորները գոյության լա-

վագույն պայմաններ պետք է ձեռք բերեն դասակարգային պայմանությունը, շահագործող կարգերի ու ուղղուցիոն տապալման միջոցով։ «ոչ ոք չի տա մեզ փրկությունը, —երգվում է պրոլետարական հիմնի մէջ, —ոչ աստված, ոչ արքան, ոչ հերոսը, մենք պետք է մեր ազատությունը կունք ձեռքով մեր սեփական»։

Կրոնը ժխտում է դասակարգային պայքարին վերաբերող բուն միտքը, համարելով այդ պայքարը վնասակար, մեղսական, որն ուղղված է աստծու կողմից սրբագործված հիմքերի դեմ։ Կրոնը սովորեցնում է, որ լավ կյանքի հասնելու լավագույն միջոցն է համբերությունն ու հեղությունը, չարին բռնությամբ շընդդիմանալը։

Կրոնը աշխատավորներին միշտ խանգարել է մոբիլիզացիայի ենթարկելու իրենց ուժերը, որպեսզի պայքարեն անարդար շահագործողական կարգերը տապալելու համար։ Կրոնը այժմ էլ խանգարում է կապիտալիստական երկրների աշխատավորներին համախմբվելու և կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի ներքո կանգնելու, որպեսզի կապիտալիզմին տան վերջին և վճռական մարտը։

Մեր սոցիալիստական երկրում կրոնական մԽացուկներն առանձնապես վնասակար են։ Նրանք արգելակում են սոցիալիստական հասարակության կառուցման ավարտմանը, խոչընդուռ են հանդիսանում սոցիալիզմից կոմունիզմին անցնելուն։

Այդ պատճառով մեր հայրենիքի յուրաքանչյուր կուլտուրական, գրագետ քաղաքացի պետք է պայքար մղի կրոնի դեմ, կրոնական մԽացուկների դեմ։

Հավատացող մարդկանց անհրաժեշտ է ծանոթացնել բնության ու հասարակության երկույթների ճիշտ, մարքսիստական բացատրության հետ և նրանց օգնել, որ ուսումնասիրեն մարքսիստական-լենինյան թեորիան։

## ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԸ ԿՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցականները սովորաբար պնդում են, որ կրոնն ունի ոչ երկրային ծագում։

Կրոնը, ըստ նրանց խոսքերի, ինչ որ մի առանձին «աստվածային հայտնության» արդյունք է։

Տերտերները պնդում են նաև, որ կրոնն օգտակար է, որովհետեւ նա, իբր թե, հավատացող մարդուն ուղեցույց է տալիս

նրա կյանքում, առանց կրոնի մարդիկ դադաններ կդառնային, միմյանց կոչնչացնեին երկառակատիչ և եղբայրասպան պատերազմներում։ Հետեւաբար, հավատացող մարդկանց տեսակետով, կրոնը բարոյականության հիմքն է։

Սակայն ճիշտ է արդյոք այդ ամենը։ Հասկանալի է, որ ոչ։

Մարդկային հասարակության պատմությունը վկայում է, որ կրոնը ամեններին բարոյականության հիմքը չի հանդիսանում և որ ընդհանրապես երբեք չի եղել այնպիսի բարոյականություն, որ պիտանի լիներ բոլոր մարդկանց և բոլոր ժամանակների համար։ Յուրաքանչյուր հասարակություն, հասարակության մեջ յուրաքանչյուր դասակարգ մշակում են և ունենում իրենց բարոյականությունը, որը համապատասխանում է իրենց շահերին։ Այսպես օրինակ՝ բուրժուազիայի դասակարգը գտնում է, որ գործադուլը, բանագուլը, իսկ առավել ևս պրոլետարական ուղղուցիան, որի հետեւանքով իշխանությունն անցնում է աշխատավորների ձեռքը, —այդ ամենը վերին աստիճանի անբարոյական արարքներ են, որոնք խախտում են աստվածային պատվիրանները, ոչնչացնում են կապիտալիստական սեփականությունը և այլն։ Ընդհակառակը, կոմունիստական պարտիայի ղեկավարած աշխատավորական մասսաները և՛ բանագուլը, և՛ գործադուլը, և՛ ուղղուցիան, համարում են վերին աստիճանի բարոյական արարքներ։ Դրանց օգնությամբ աշխատավորները պայքարում են մեծագույն անարդարության դեմ՝ մարդու կողմից մարդուն շահագործելու և ճնշելու դեմ։ Միայն պրոլետարական բարոյականությունն է իսկական համամարդկային բարոյականությունը։

Միանգամայն սխալ է նաև տերտերների և բուրժուական գիտնականների պնդումն այն մասին, թե կրոնը միշտ գոյություն է ունեցել և հավիտյան գոյություն է ունենալու։ Պատմությունը ցույց է տալիս, որ մարդկային հասարակության ամենահին հպոխայում մարդիկ կրոնը չգիտեին և ոչ մի աստծու դեռ չէին հավատում։

Մենակ այդ փաստն արգեն ժխտում է տերտերների պնդումը կրոնի հավիտենականության մասին։ Բայց մենք զիտենք նաև ուրիշ փաստեր։ Բոլորին հայտնի է, որ անաստվածներ եղել են բոլոր երկրներում և բոլոր ժամանակներում, մարդկային հասարակության ամբողջ պատմության ընթացքում։ Մեզ հայտնի են հնադարի մեծ աթեստաներ՝ (անաստվածներ) Դեմոկրիտը, է-

պիկուրը, կուկրեցիոսը և մի շարք ուրիշները: Երկու հաղար տառուց ավելի առաջ, չնայած զաֆան ձնշումներին ու հալածանքներին, նրանք արդեն ժխտում էին աստծու գոյությունը և ապացուցում, որ կրոնը խարում է մարդկանց: XVI, XVII և XVIII դարերում, բուրժուական հասարակության ծագման ու զարգացման էպոխայում, նմանապիս կային բուրժուական մատերիալիստաների ամբողջ խմբեր:

Եժմ կապիտալիստական երկրներում բանվորների, գյուղացիների և ինտելեգենցիայի մեջ կան տասնյակ միլիոնափոք մարդիկ, որոնք ոչ մի կրոն չեն. ընդունում և ոչ մի աստծու չեն հալատում:

Տարեցաւարի աճում է անսատվածների թիվը,

Ամենացուցադրական օրինակը մեր Սովիտական Միությունն է, որտեղ անսատվածների շարժումն այնպիսի հսկայական թափ է ստացել, որ ուրիշ ոչ մի երկրում չի եղել մարդկաշին հասարակության գոյության ամբողջ ժամանակի ընթացքում:

Այս փաստերն անհերքելի ապացույցներ են այն բանի, որ կրոնը բոլորովին հավիտենական չէ, երբեք հասուլ չէ բոլոր մարդկանց, մարդկային հասարակության բոլոր էպոխաներին:

Բայց բուրժուազիան շահագրգռված է, որ պահպանի շահագրգռված կարգերը: Իսկ կրոնի հավիտենականության վերաբերյալ շահագրգռում քարոզող «պատվիրանների» հավիտենականության և անխորտակելիության վերաբերյալ ուսմունքը նրանաստում է շահագրգռվական կարգերի ամրապնդմանը: Ահա թե ինչու բուրժուազիան քարոզում է կրոնի հավիտենականության վերաբերյալ կեզծ ուսմունքը: Եվ ոչ միայն կրոնի: Բուրժուական դիտնականներն ամեն ջանք գործադրում են, որ ապացուցեն, որինակ, շահագրգռվական պետության հավիտենական ու անսասան լինելը, հասարակության դասակարգային բաժանման հավիտենականությունը, մարդկանց անհավասարության հավիտենականությունը: Այդ բոլորի մեջ արտահայտվում է իշխող դասկարգային շահը:

Իսկ իրականում ինչ է ներկայացնում իրենից կրոնը: Նա ինչպես է առաջացել և ինչ գեր է խաղում հասարակության մեջ: Այս հարցերին ճիշտ պատասխաններ տալիս է միայն մարքսիստական-լինինյան գիտությունը:

Վաղ ժամանակներից սկսած բնության և հասարակության բացատրության մեջ գոյություն ունեն երկու ուղղություն՝ մեկը մատերիալիստական և մյուսը իդեալիստական:

Իդեալիստ վիլիսովիաներն ընդունել և ընդունում են, թե գոյություն ունեցողի ամբողջ պատճառը ինչ որ մի առանձին հոգեկան սկզբնավորությունն է, որը տարբեր իդեալիստների մոտ տարբեր անուններ է կրում. ոմանք այն անվանում են ողի, մյուսները՝ միտք, երրորդները՝ գիտակցություն, չորրորդները՝ իդեալ, հինգերորդները՝ աստված և այն: Բայց այդ տարբեր անուններից անկախ բոլոր իդեալիստների մոտ էությունը նույնն է, այն է՝ ամբողջ գոյություն ունեցողի ստեղծողը համարվում է գերբնական ուժը:

Դիալեկտիկական մատերիալիզմը հերքում է սխալ իդեալիստական տեսակետը: Հիմնվելով գիտության հետևությունների վրա, գիալեկտիկական մատերիալիզմը ապացույցում է, որ ամբողջ գոյությունը ունեցողի պատճառն ու հիմքը ոչ թե աստված է, այլ ինքը մատերիան, բնությունը: Մատերիան իր բացատրության համար ոչ մի գերբնական ուժի կարիք չի գործ: Նա գոյությունը ունի հավիտյան և զարգանում է ներքին, իրեն հատուկ օրենքների պատճառով: Մատերիան իր զարգացման ընթացքում ծնում է իր գոյության դանագան ձևերը, սկսած ստորին ձևերից մինչև բարձր զարգացածները, ինչպիսին է մարդը:

Այդ պատճառով մարդկային գիտակցությունը նույնպես իրենից չի ներկայացնում ինչ որ առանձին «աստվածային շընորհ»: Դա «անմահ հոգի» չէ, «աստծու կայծ» չէ, որի մասին խոսում են տերտերները և բուրժուական իդեալիստ գիտնականները: Հոգեկան կյանքը, մարդու բանականությունը հենց մատերիայի հատկությունն է, որ անխղելիորեն կարգած է նրա հետ և առանց նրան զոյություն չունի: Բայց այդ հատկությունն ամեն մի մատերիայի հատուկ չէ, այլ հատուկ է միայն առանձին, բարձր զարգացած մատերիային: Այդ հատկությունը առաջանում է մատերիայի զարգացման միայն բարձր աստիճանի վրա: Հետեաբար, մարդը բանականությամբ, մատծողությամբ է օժտված ոչ թե այն պատճառով, որ զրանք աստված է շնորհել նրան, այլ այն պատճառով, որ մարդը բնության բարձրագույն արդյունքն է, որն օժտված է զարգացած ուղեղով «...մտածողությունը պրոդուկտն է այն մատերիայի, որն իր զարգացման մեջ հասել է կատարելության բարձր աստիճանի, այն է՝ մտածողությունը ուղեղի արդյունքն է...» («Համեկ(ր)Պ պատմության համարդար դասընթաց», էջ 150): Բանական կյանքը, ինարկե,

ավելի ցածր աստիճանի, հասուլէ է ոչ միայն մարդուն, այլև  
առանձին կենդանիների:

Մարքսն ու էնգելման աշխարհի մատերիալիստական ըմբռն-  
ման ասսակետը զբեցին նաև հասարակական կյանքի բացարու-  
թյան հիմքում, ստեղծելով հասարակության մասին գիտությու-  
նը՝ պատմական մատերիալիզմը:

Պատմական մատերիալիզմն ապացույցում է, որ մարդկանց  
հասարակական կյանքի հիմքում ընկած է նյութական սկզբնա-  
վորությունը: Հասարակության այդ նյութական հիմքը արտա-  
դրությունն է, այսինքն՝ մարդկանց այն գործունեությունը, որն  
ուղղված է գոյության միջոցներ արտադրելուն: Այդ նյութա-  
կան, արտադրական գործունեությունը որոշում է հասարակա-  
կան կյանքի մասցած բոլոր կողմերը: «Նյութական կյանքի ար-  
տադրության եղանակը,—գրել է Մարքսը,—պայմանավորում է  
կյանքի սոցիալական, քաղաքական և հոգեկան պրոցեսներն ընդ-  
հանրապես: Ոչ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նը-  
րանց կեցությունը, այլ ընդհակառակը, նրանց հասարակական  
կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը» (Կ. Մարքս,  
Քաղաքատնտեսության քննադատության նախարանը):

Հետևաբար՝ Մարքսի և էնգելմանի ուսմունքի համաձայն կրո-  
նը նույնապես, ինչպես պետությունը, իրավունքը, դրականու-  
թյունը, գիտությունը, արվեստը, մարդկանց հասարակական  
կյանքի պրոդուկտն է: Կրոնի մեջ գերբնական, հանդերձյալ, առ-  
վածային ոչինչ չկատ:

Սակայն բավական չէ ասել, որ կրոնը հասարակական հա-  
րաբերությունների պրոդուկտն է: Չէ որ գիտությունն էլ մարդ-  
կային հասարակության պրոդուկտն է: Իսկ բնչ տարբերություն  
կա կրոնի և գիտության միջև:

«Յուրաքանչյուր կրոն,—ասել է ընկեր Ստալինը, —գիտու-  
թյանը հակադիր մի բան է»: Այդ հակադրությունը նրանումն է,  
որ գիտությունը հիմնվելով մարդկային պրակտիկայի վրա, մեղ-  
տալիս է աշխարհի ճիշտ պատկերը: Այդ պացցուցված է մարդ-  
կության զարգացման ամբողջ ընթացքով, տեխնիկայի, արդ-  
յունաբերության աճումով: Իսկ կրոնը, հենվելով կույր, անա-  
պացուցելի հավատի վրա, խեղաթուրված պատկերացում է տա-  
լիս մեղ շրջապատող իրականության մասին, ընության մասին:

Էնգելման իր «Անտի Դյուրինդ» աշխատության մեջ գրել է.  
«Յուրաքանչյուր կրոն ոչ այլ ինչ է, քան այն արտաքին ուշ-

ժերի ֆանտաստիկ արտացոլումը մարդկանց ուղեղներում, որոնք  
իշխում են նրանց վրա իրենց առօրյա կյանքում, մի արտացո-  
լում, որի մեջ երկրային ուժերը գերբնական ձև են ընդու-  
նում»:

Այդ նշանակում է, որ կրոնը մեղ տալիս է իրականության  
խեղաթյուրված պատկերը, ինչպես զլիխվայր շուռ տված պատ-  
կերացում մեղ շրջապատող աշխարհի մասին: Օրինակ, հավա-  
տացող մարդուն ընության ուժերի ճնշումը պատկերանում է  
խեղաթյուրված, ֆանտաստիկ կերպով, որպես հզոր աստվածների  
գործողություն: Դասակարգային հասարակության մեջ հա-  
սարակական հարաբերությունների ճնշումը հավատացող աշխատա-  
վորներին սմանապես պատկերանում է որպես մի առանձին գերբ-  
նական անդրշիրմյան հոգիկան աշխարհի առկայություն, որի  
նկատմամբ մարդկանց երկրային կյանքը միայն կարճատե է-  
տապ է:

Մարքսն ունի գիտակցություն, մտածողություն, մտավոր  
կամ հոգեկան կյանքը.

Այդ հոգեկան կյանքը մարդու հատկությունն է, նրա ուղե-  
ղի պրոդուկտն է: Սինչեռո կրոնը կարծես գիտակցությունը,  
միտքը բաժանում է մարդուց և դրանք դարձնում է ինքնուրույն  
էակներ, հայտարարում է, թե հոգեկան կյանքը մի առանձին,  
մարդուց անկախ, աստվածային, գերբնական ընազավառ է: Դեռ  
ավելին, միտքը, որ մարդու ուղեղի պրոդուկտն է, հայտարա-  
րում է գիտակորը, հիմնականը: Հոգին, աստված, իդեան բոլոր  
սկզբների սկիզբն է: Խակ մատերիան, բնությունը երկրորդային  
է, ածանցյալ Այսպիսով կրոնի մեջ աշխարհը կարծես թի դուրս  
է գալիս շուռ տված, խեղաթյուրված: Խճա թի ինչ է նշանակում  
էնգելման զրույթն այն մասին, որ ամեն մի կրոն հանդիսանում  
է այն ուժերի ֆանտաստիկ արտացոլումը մարդկանց ուղեղնե-  
րում, որոնք նրա վրա իշխում են:

Հարց է ծագում, թե ինչու մարդկային հասարակության  
մեջ շրջապատող իրականության նկատմամբ գոյություն ունի այդ-  
պիսի սխալ, ֆանտաստիկ արտացոլում: Ինչու ճիշտ, գիտական  
իմացության կողքին զոյություն ունի այդպիսի սխալ խեղա-  
թյուրված պատկերացում:

XVII—XVIII դարերի բուրժուական անաստվածները, թե-  
պես և նրանք մատերիալիստներ էին, չէին կարող ճիշտ պա-  
տասխան տալ այդ հարցին: Նրանցից մեկը պարզապես ասել է,

որ կրոնն առաջացել է «հիմարի և տերտերի հանդիպումից»։ Այսպիսով կրոնի արմատներն էին հասարվում տղիտությունն ու խարեւայությունը։

Այս տեսակետը սխալ է և գործնական կյանքում ամբողջապես հերքվում է։

Մարքսիզմ-լենինիզմը տալիս է կրոնի արմատների մի այլ խիստ գիտական և միակ ճիշտ բացարությունը։

Նախնադարյան հասարակության մեջ մարդիկ անզոր էին բնության ուժերն իրենց հպատակեցնելու։ Գտնվելով տընտեսական զարգացման ցածր մակարդակի վրա, չունենալով զարգացած տեխնիկա, վայրենիները ճնշված էին բնության հզոր տարերքից, որը նրանց ահ ու դող էր ներշնչում։ Հետագայում, դասակարգային հասարակության մեջ, մարդիկ անզոր եղան նաև նրանց ճնշող հասարակական հարաբերությունների հանդեպ։ Մարքսիզմ-լենինիզմը կրոնի տառաջանալն ու գոյությունն ունենալը կապում է հինգ այդ երեսույթների հետ։ «Շահագործողների գեմ մղած կովում շահագործվողների անզորությունը նույնպես անխուսափելիորեն հանդերձյալ լավագույն կյանքի հավատ է ծնում, — գրում է Լենինը, — ինչպես բնության դեմ մղած պայքարի մեջ վայրենու անզորությունն աստվածների, սատանաների, հրաշքների ու այլ բաների հավատ է ծնում»։ («Սոցիալիզմ և կրոն», հայերեն հրատ. VIII, էջ 595)։ Նույն միտքը Լենինը շեշտում է մի ուրիշ տեղ, որտեղ գրում է. «Աշխատավոր մասսաների սոցիալական ճնշվածությունը, նրանց թվացող լիակատար անզորությունը կապիտալիզմի կույր ուժերի հանդեպ, որն ամեն օր և ամեն ժամ շարքային բանվոր մարդկանց հազար անգամ ավելի շատ մենասուկալի տանջանքներ, ամենավայրենի շարչարանքներ է պատճառում, քան պատերազմների, երկրաշարժերի և նման ուրիշ ամեն մի արտակարգ դեպք, — ահա թե ինչումն է կրոնի ժամանակակից ամենախոր արմատը» («Բանվորական պարտիայի վերաբերմունքը դեպի կրոնը» հատոր XIV, ոռուս., հրատ., էջ 71)։

Կրոնի արմատների այդ ճիշտ, միակ գիտական ըմբռնումից ենիներով, մարքսիզմ-լենինիզմը պատասխանում է նաև կրոնի բախտին վերաբերող հարցին։ Մարքսիստական-լենինյան գիտությունն ասում է, — որ կրոնը հավիտենական չէ։ Նրա գոյությունը սերտ, անխղելի կերպով կապված է դասակարգային հասարակության գոյության հետ։ Իսկ այն հասարակության մեջ, որտեղ դասակարգեր չեն լինի, որտեղ մարդու կողմից մար-

դուն շահագործելը, ոչնչացված կլինի, որտեղ մարդու վրայից կվերանա բնության ճնշումը, — այդ հասարակության մեջ չի լինի նաև կրոն։ Այդ մասին կոմունիստական պարտիայի ծրագրում գրված է. «...մասսաների ողջ հասարակական-տնտեսական գործունեության մեջ պլանաշափության և գիտակցության իրականացումը միայն առաջ կրերի կրոնական նախապաշար-մունքների լիակատար մահացումը»։

XVII և XVIII գարերի բուրդուական աթեխտները կարծում էին, թե կրոնական նախապաշարմունքների դեմ պայքարելու միակ հուսալի միջոցը մասսաների լուսավորությունն է, աշխարհի, կյանքի և այլնի մասին գիտական գիտելիքներ տարածելն է։

Մարքսիզմ-լենինիզմն ընդունելով լուսավորական աշխատանքի հսկայական նշանակությունը կրոնական մնացուկների հաղթահարման գործում, ընդգծում է, որ այդ նպատակի համար միայն գիտության տարածելը միանդամայն անբավարար է։ Դասակարգային հասարակության մեջ կրոնի արմատները գլխավորապես սոցիալական են։ Ուստի հիմունքների հիմքը կրոնի դեմ մղվող պայքարում պարունակում է դասակարգային հասարակական կարգերը փոխելու, մարդու կողմից մարդուն շահագործելը ոչնչացնելու և անդասակարգ սոցիալիստական հասարակությունն կառուցելու մեջ։

Մարքսիզմ-լենինիզմի այդ պնդման ձևությունը հաստատված է պրակտիկայով։ Միայն ՍՍՌՄ-ում, որտեղ վերացված են շահագործող դասակարգերը, ոչնչացված է մարդու կողմից մարդուն շահագործելը և ստեղծված է սոցիալիստական հասարակակարգ, — կրոնի հիմնական արմատներն իսկապես ոչնչացված են և աթեխտմի աճը չտեսնված թափ է ստացել գյուղում և քաղաքում աշխատավորների ամենալայն խավերում։

Մարքսիստական-լենինյան ուսմունքի մեջ հիմնականը, գրլիսավորը կրոնի մասին — այդ նրա դասակարգային, շահագործողական էության մերկացումն է։ Կրոնը «ժողովրդի հաշին է», — գրել է Կ. Մարքուր։

Այդ սահմանումը նշանակում է, որ կրոնը թունավոր միջոցի նման, որը կոչվում հաշին, թմրեցնում է աշխատավորների գիտակցությունը՝ աստվածների, ստանաների, անդրշիրիմյան աշխարհի մասին հորինած զանազան տեսակի հեքիաթներով, բնության և հասարակության մասին խեղաթյուրված պատկերացումով մթագնում է նրանց ուղղոները և դրանով խոկ թուլացնում մարդ-

կանց ուժերը բնության և դասակարգային ճնշման դեմ մղվող պայքարում: Բնության դեմ և դասակարգային ճնշման դեմ մըզ- վող պայքարի մեջ մարդկանց անզորությունից ծնունդ առած լրոնն ամրացնում է այդ անզորությունը նրանով, որ շրջապա- տող իրականության մասին մարդկանց տալիս է սխալ պատկե- րացում:

Նույն միտքը զարգացրել է նաև Վ. Ի. Լենինը, առելով՝ որ «Կրոնը հոգեոր օղու մի տեսակն է, որի մեջ կապիտալի ստրուկտուրը խեղում են իրենց մարդկային պատկերը, փոքր ի շատե մարդավայել ապրելու իրենց պահանջը» («Սոցիալիզմ և կրոն», հատոր VIII, հայ. հրատ., էջ՝ 596): Կրոնը օղու նման քննեցնում է մարդու գիտակցությունը, իրական, իսկական եր- ջանկության փոխարեն նրան տալիս խարուսիկ միխիթարանք:


Կրոնի շահագործողական դերը նրանումն է, որ «Ով իր ամ- բողջ կյանքում աշխատում է ու կարիքի մեջ է, կրոնը նրան երկնային կյանքում հեղություն ու համբերություն է ուսուցա- նում, միխիթարելով նրան երկնային հատուցման հույսով: Խա- կանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը բարե- գործություն է ուսուցանում երկնային կյանքում, նրանց ար- դարանալու շատ էժանագին միջոց առաջարկելով իրենց շահա- գործական ամբողջ գոյության համար, և ձեռնառ գնով երկնային- ւ արեկեցության տոմսեր ծախելով» (Լենին, նույն տեղ): Կրոնա- կան ուսմունքը զինաթափում է աշխատավորներին շահագործողնե- րի դեմ՝ նրանց մղած պայքարում: Կրոնը հանգերձյալ կյանքի, գը- րախտի և դժոխքի գոյության մասին ուսմունքով կապիտալիստա- կան երկրներում փորձում է աշխատավորներին հաշտեցնել իրենց անտանելի վիճակի հետ, նրանց մեջ դաստիարակելով համբերու- թյան, խոնարհության և դասակարգային թշնամիների նկատ- մամբ սիրո զգացմունք:

Կրոնի այդ գարշելի դերը նրան առանձնապես ձեռնուու և օգտակար է զարձնում շահագործողական դասակարգերի համար: Այն հասարակության մեջ, որն անհաշտելի թշնամի դասակար- գերի է բաժանված, այն հասարակության մեջ, որտեղ եռում է շահագործվողների կատաղի պայքարն ընդդեմ շահագործողների, — այդ հասարակության մեջ իշխող դասակարգերը միշտ կարիք ու- նին իրենց տիրապետությունը պահելու և ամրացնելու գործիք- ների: Դասակարգային հասարակության մեջ աշխատավորների ձորտացման և ճնշման հզոր գործիքը հանդիսանում է պետու-

թյունը, որին Լենինը անվանել է «ժահակ» տիբապետող դասա- կարգերի ձեռքում: Կապիտալիստական հասարակության մեջ աշ- խատավորներին ճնշելու նպատակներին են ծառայում նաև իրա- վունքը, բարոյականությունը, գիտությունը, արվեստը, կրոնը և այլն:

Վ. Ի. Լենինը իր մի շարք երկերում տվել է կրոնի դասա- կարգային գերի բնութագիրը: Այսպես, օրինակ, «Բանվորական պարտիայի վերաբերմունքը գեղի կրոնը» հողվածում Լենինը գրել է. «Ժամանակակից բոլոր կրոններն ու եկեղեցիները, բո- լոր և ամեն տեսակի կրոնական կաղմակերպությունները մարքսիզ- մը միշտ էլ քննարկում է իրեկ բուրգուական հետադիմու- թյան օրգաններ, որոնք բանվոր դասակարգի շահագործման պաշտպանության և հիմարացման են սպասարկում: (Ընտիր երկեր, հատոր VI, հայ. հր. էջ 412):

Մի ուրիշ հողվածում, «II ինտերնացիոնալի կրախը», Լենինը գրում է. «Բոլոր և ամեն տեսակի շահագործող դասակարգերն ի- րենց գերիշխանությունը պահպանելու համար կարիք ունեն սոցիա- լական երկու ֆունկցիայի՝ գահձի փունկցիայի և տերտերի փունկ- ցիայի: Դահիճը պետք է ճնշի հարստահարվածների բողոքն ու զայ- րությը, տերտերը պետք է նրանց համար պատկերի դասակարգային տիրապետությունը պահպանելու գեղքում աղետների և զոհերի մեղմացման հեռանկարները (այդ առանձնապես հարմար է անել՝ առանց երաշխավորելու այդպիսի հեռանկարների «իրագործե- լիությունը»...), դրանով իսկ նրանց հաշտեցնի այդ տիրապետու- թյան հիմ, հեռու պահի նրանց սևորուցիոն տրամադրությունը, քայլացի նրանց ուսուլուցիոն վճռականությունը» (հատոր XVIII, ոռու. հրատ., էջ 259): Որևէ կրոնի օրինակով կարելի է համոզվել, որ կրոնի սոցիալական էության լենինյան բնութագիրը միշտ է: Վերցնենք քրիստոնեական ուսմունքը: Քրիստոնեությունը երբեք կոչ չի անում աշխատավորներին պայքարելու շահագործողական կարգերի դեմ: Ընդհակառակը, նա սրբագործում է այդ կարգերը, սովո- րեցնում է հաշտվել նրանց հետ և հեղությամբ տանել գրանք: Քրիստոնեությունը շարունակ կոչ է անում աշխատավորներին համբերելու, խոնարհվելու, սիրելու, բոլորին ներելու: Ավետա- րանն աղքաներին քարոզում է. «սիրեցնեք ձեր թշնամիներին», սոտրուկներ, հնագանդվեցնեք ձեր տերերին», «եթի մեկը կիսի քո մի երեսին, դարձրու մյուսը», «բոնությամբ մի ընդդիմանա-



շարին, և այլն և այլն: Թե՛ս ստըռւկներին, թե՛ս ճորտերին, թե՛ս բանվորներին՝ բոլոր աշխատավորներին և ճնշվածներին՝ քրիստոնեությունը սովորեցնում է համբերությամբ տառապել, առանց բողոքի տանել շահագործողների լուծը:

Ահա թե ինչո՞ւ ոչ միայն այժմ, այլև իր գոյության ամենավաղ ժամանակներից սկսած քրիստոնեությունը եղել է տիրապետող դասակարգերի ձեռնուու կրօնը: Տիրապետող դասակարգերը քրիստոնեության մեջ տեսան այն ուժը, որն ընդունակ է ամբապնդելու շահագործող փոքրամասնության դիրքը և ամրացնելու ճնշված մեծամասնության սորգային վիճակը: Քրիստոնեությունն այդպիսին է մնացել իր գոյության ամբողջ քսան դարերի ընթացքում:

Մարդկային պատմության մեջ նույնպիսի սեակցիոն դեր են խաղացել և խաղում են մյուս բոլոր կրօնները՝ իսլամը, բուդզայականությունը, կոնֆուցիականությունը, շամանիզմը, լամաիզմը, հրեությունը և այլն:

## ԿՐՈՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԸ ՍՍՈՒՄ-ՌԻՄ

Ցարական Ռուսաստանում՝ ժողովուրդների այդ բանտում՝ շահագործողների ճնշումը բացառապես ուժեղ էր բոլոր աշխատավորների վրա: Ծանր ճնշումն իրենց վրա կրում էին նաև աշխատավոր գյուղացիները: Նրանք իրենց աշխատանքով կերպում էին հարցուր հազարավոր ծրիակերների և դատարկապորտների, իսկ իրենք ստրուկի կյանք էին վարում:

Ոչ պակաս խիստ կերպով, քան կալվածատերերի ճնշումն էր, գյուղացիներն իրենց մեջքի վրա զգում էին նաև եկեղեցիների և վանքերի ճնշումը: Եկեղեցիներն ու վանքերն ունեին մեծ հողատեսքեր, իսկ ճորտատիրական իրավունքի ժամանակ՝ նաև գյուղացիները: Սակավահող և հողագուրկ գյուղացիությունն ստիպված էր հողը կապալով վեցնել կալվածատերերից և վանքերից: Գյուղացիության մեծ կարիքի մասին վկայում է հետեւյալը՝ 1916 թ., այսինքն Հռկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեզուցիայից մեկ տարի առաջ, Ռուսաստանում կային 20 միլիոն հողագուրկ և սակավահող տնտեսություններ: Այդ նշանակում է, որ Ռուսաստանի գյուղացիության երկու երրորդը հող չուներ կամ ուներ շատ փոքր հողաբաժններ:

Գյուղացիությունը բազմիցս փորձել էր իրենից թոթափել կալվածատերերի և վանքերի լուծը: Հայտնի են գյուղացիական

ունելուցիոն պոռթկումները ԽVII դարում՝ իվան Բոլոտնիկովի, Ստեպան Ռազինի առաջնորդությամբ, իսկ XVIII դարում՝ Եմելյան Պուգաչովի առաջնորդությամբ: Սակայն այդ ապստամբություններն իրենց նպատակին չեին հանում: Գյուղացիությունը չուներ պայքարի պարզ ծրագիր: Գյուղացիները կարծում էին, որ կալվածատերերն ու հոգեորականությունն անարդար են վերաբերվում իրենց հետ, իսկ թագավորը իրենց հետ «իսկամատնաբով» կվերաբերվի՝ կպատժի կալվածատերերին և կթեթեացնի ժողովրդի վիճակը: Շատ հաճախ ճորտատիրական լծի դեմ ուղղված բողոքը գյուղացիների մոտ ընդունում էր կրօնական ձև՝ առաջանում էին աղանդներ, հերձվածներ, հավատացիալների մի մասը հեռանում էր ուղղափառ եկեղեցուց, կազմակերպում էր իր կրօնական համայնքները: Ցարական իշխանությունների և հոգեվորականության հետապնդումներից ազատվելու համար աղանդավորները, հերձվածովները վախչում էին Ռուսաստանի ծայրամասերը և թագնվում անտառներում: Այժմ աղանդավորները շատ հաճախ սիրում են վկայակոչել այդ հալածանքները, որոնք ինքնակալության կողմից տեղացել են նրանց վրա և հայտարարում են, որ աղանդավորները նույնպիս, իբր թե, ուեղուցիոններն են, որ իրենց հալածել է հին իշխանությունը և այլն:

Աղանդավորները ներկայիս ունելուցիոններականության հետ երբեք ոչ մի ընդհանուր բան չեն ունեցել: Աղանդավորները զինված, ունելուցիոն պայքար երբեք չեն մղել շահագործողների դեմ: Ամենաշատը, ինչի էին ընդունակ նրանք, — դա պաստիվ բողքն էր, լուս անհամաձայնությունը: Աղանդավորները վարվում էին «բռնությամբ մի ընդդիմանա չարին» պատվիրանի համաձայն և ուղում էին խաղաղ կերպով համաձայնության գալ ինքնակալության հետ:

Կարիք չկա ասել, ի հարկե, որ այդպիսի «պայքարը» շատ շահավետ էր շահագործողներին: Նա բնավ չի սպառնում նրանց բարեկեցությանը: Այդ պատճառով կալվածատերերն ու կապիտալիստները արագ կերպով իրենց բուռն էին հավաքում աղանդավորական շարժումը: Աղանդավորական համայնքների գլուխն են կանգնում խոշոր սեփականատերերը՝ կուլակները, առետրականները, սպեկուլյանտները, բարոնները, կոմսերը, իշխանները: Վերջինից պայանդավորական կազմակերպություններն, ուղղափառ եկեղեցու պես, դարձան ցարական, կալվածատիրական-ինքնակալական իշխանության հենարանը: Ուրեմն շահագործողական

ճնշումը դյուղացիների զիտակցության մեջ առաջացնում էր կրոսնական վասակար պատկերացումներ: Հենց նույն ուղղությամբ էր զործում նաև բնության ճնշումը:

Հողի մշակման հետամնաց եղանակների պայմաններում զյուղացին կախում ուներ բնության տարերային ուժերից և անգոր էր նրանց դեմ պայքարելու: Անձրև չինի՝ բերք չի լինի: Կարկուտ կգա, հեղեղ կամ կայծակից հրդեն կաղատահի և գյուղացին վերջնականապես դառնում է չքավոր: Մանր, ուժասպառ հողակտորների վրա անհատական տնտեսություն վարելու հետեւ վանքով, գյուղատնտեսության մեջ եղած տեխնիկայի ցածր մակարդակի հատեանքով հաճախակի անբերություն, սովոր էր լինում:

Բնության ճնշման հանդեպ անդոր լինելը նույնպիսի կրոսնականություն էր ծնում գյուղացիության մեջ: Գյուղացիները հավատում էին, թե աշխարհում կան ինչոր անհայտ էակներ՝ աստվածներ, հրեշտակներ, դեմք, որոնցից և կախված է բերքն ու անբերությունը, ցուրտն ու սովը, երաշտն ու անձրեց: Գյուղացիներն աղոթում էին «սրբերի» ու «բուժիչների» մի ամբողջ հաստիքի, որպեսզի բերք ստանան, ազատվեն երաշտից, կարկուտահարությունից, հրդեններից և այլն: Գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ ցիկլը, վարի, հնձի, ցանքսի, բերքահավաքի սկիզբն ու վերջը կառուցված էր ըստ կրոնական օրացույցի:

Կրոնական հավատալիքներն ամրանում և ուժեղանում էին նաև գյուղացիության խավար ու տղետ լինելու պատճառով: Թագավորները, կալվածատերերը և կապիտալիստները գյուղացիներին գիտակցաբար պահում էին տղիտության մեջ, նրանց հընարավորություն չէին տալիս գիտելիքներ ստանալու, վախենալով, որ ավելի զարգացած գյուղացիությունը չի ցանկանա հլուկերպով տանել ցարական և կալվածատիրական ճնշումը: Կառավարությունն ավելի շատ հոգ է տանում գինետներ և հկեղեցիներ կառուցելու մասին, քան գպրոցների կառուցման մասին: Հին Ծովասատանում կար մոտավորապես 80 հազար եկեղեցի և մոտ 300 հազար խավարամոլ տերաեր: Գյուղացիների երեխաները գյուղական դպրոցից այն կողմը չէին կարող գնալ: Իսկ գյուղական դպրոցում նրանց ամենից առաջ սովորեցնում էր քահանան, որը նրանց գիտակցաբար չէր տալիս ճիշտ գիտելիքներ, ոյլ խարբում էր աստծով և սրբերով:

Այսպիսով, գյուղացիության անզորությունը կուլակային և կալվածատիրական ստրկության ճնշման հանդեպ, նրա խավար

ու տղետ լինելը—ահա թե ինչումն էր հիմնական արմառը, որը սնուցում էր գյուղացիների կրոնականությունը:

1917 թվի հոկտեմբերին Ծովասատանի բանվորները գյուղացիական չքավորության հետ դաշն կապած, կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալեցին բուրժուազիայի ու կալվածատերերի իշխանությունը և հիմնեցին նոր հասարակակարգ՝ պրոլետարիատի ղեկավատությամբ:

Սովետական Միության աշխատավորները տարեց-տարի ամրացրին բանվորների և գյուղացիների իշխանությունը, կառուցեցին սոցիալիստական նոր հասարակություն: Պարտիայի XVII համագումարում ընկեր Ստալինն իր հաշվետու զեկուցման մեջ նկարագրեց ՍՍՌՄ-ում աելի ունեցած մեծ փոփոխությունների պատկերը:

«Հին գյուղն իր հկեղեցով՝ ամենաաչքի ընկնող տեղում, ուրյաղնիկի, տերաերի, կուլակի իր լավագույն տներով՝ առաջին պլանում, գյուղացիների իր կիսավեր խրճիթներով՝ հետին պլանում—սկսում է չքանար Նրա տեղը հանդես է գալիս նոր գյուղն իր հասարակական-տնտեսական շնոքերով, իր ակումբներով, ուղղիոներով, կինոներով, գպրոցներով, գրադարաններով ու մոուըներով, իր տրակտորներով, կոմբայններով, կալսիչներով, ավտոմոբիլներով: Զքացել են կուլակագործողի, արյուն ծծող վաշխառուի, սպեկուլյանտ վաճառականի, հայուուրյադնիկի հին ականավոր դեմքերը: Հիմա ականավոր մարդիկ են կոլտնտեսությունների ու սովորությունների, գպրոցների ու ակումբների գործիչները, ավագ տրակտորիստներն ու կոմբայնավարները, գաշտավարության ու կենդանաբուծության բրիգադավարները, կոլտնտեսային գաշտերի լավագույն հարվածայիններն ու հարվածայնուեինները»:

Ստալինյան առաջին և երկրորդ հնգամյակների փայլուն կատարման հետեւանքով մեր երկիրը ըոլորովին վերափոխվեց՝ ամբողջովին վերացված են շահագործող դասակարգերը, ընդմիշտ ոչնչացված են այն պատճառները, որոնք առաջ են բերում մարդու շահագործումը՝ մարդու կողմից և հասարակության բաժանումը՝ շահագործողների ու շահագործողների: Մեր երկրում սոցիալիզմը հիմնականում կառուցված է: Նա հաստատուն կերպով մտել է ժողովրդի կյանքի և կենցաղի մեջ: Մեր հասարակությունն այժմ կազմված է միմյանց հետ բարեկամ երկու գասակարգից, բանվորներից և գյուղացիներից, որոնք միացած են մեկ ընդհանուր գործով, կոմունիզմի կառուցման գործով:

«Ներկայիս սովետական հասարակության առանձնահատկությունը, ի տարբերություն ամեն մի կապիտալիստական հասարակությունից, այն է,—ասել է ընկեր Ստալինը Համ Կ(ը)Պ ԽVIII համագումարում, որ նրանում չկան այլքս անսովոնիստական, թշնամի դասակարգեր, շահագործող դասակարգերը լիկվիդացիայի ևն ենթարկված, իսկ բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան, որոնք կազմում են սովետական հասարակությունը, ապրում և աշխատում են բարեկամական համագործակցության սկզբունքներով»:

Մեր հայրենիքի դեմքը ուսուցիայի տարիներում անձանաշերեն փոխվել է:

ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգը և սովետական գյուղացիությունը բոլորովին նոր, շահագործումից ազատված դասակարգեր են: Դրանք դասակարգեր են, որոնց նման մարդկության պատմությունը դեռ չգիտե: Բանվորները, գյուղացիները՝ դրանք սոցիալիստական հասարակության աշխատավորներն են, որոնք չեն իմանում աղքատություն, գործադրելություն, սով, քայլայիշ ճգնաժամեր:

Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում արմատախիլ արեց կրոնի արմատները: Շահագործող դասակարգերի ոչնչացման հետ միասին ոչնչացված են կրոնը մասով հիմնական սոցիալական արմատները: Կրոնը դարձել է անցյալի մնացուկ մարդկանց դիտակցության մեջ:

Շահագործող դասակարգերի՝ կալվածատերերի կապիտալիստների, կուլակության լիկվիդացիան նշանակում էր հասարակության մեջ լիկվիդացիա այն խմբերի, որոնք օժանդակում են պահպանում էին կրոնը, որպես աշխատավորների ճնշման գործիք: Գործադրելության վերացումը, երկրի ինդուստրիալիզացիան և գյուղատնտեսության կոլեկտիվացումը, աշխատավորների քաղաքական և կուլտուրական մակարդակի աճը, նրանց նյութական բարեկեցության վերելքը՝ այդ ամենը նույնպես նպաստել են մասսաների մեջ, աթերզմի, անաստվածության աճմանը:

Քաղաքի և գյուղի աշխատավորների մեջ անսատվածություն էր առաջ բերում նաև այն լայն կուլտուրական լուսավորական ու հակակրոնական գործունեությունը, որ մեր երկրում կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ծավալեցին կոմերիտական, լուսավորական, պրոֆմիութենական ու այլ հասարակական կազմակերպությունները:

Հոկտեմբերի հենց առաջին տարիներից սկսած՝ բանվորները և գյուղացիները մասսայաբար հեռանում էին կրոնից, գուրս էին զալիս կրոնական կազմակերպություններից և մտնում կրոնական ըթացման դեմ պայքարող մարտիկների շարքերը: Կրոնից այդ հեռանալը առանձնապես լայն չափեր ընդունեց սոցիալիստական ծավալուն հարձակման տարիներում, երբ պարտիան անտական ցավ կոլեկտիվացման և այդ հիման վրա կապիտալիստական ցերծին դասակարգի՝ կուլտակության լիկվիդացիայի քաղաքանությանը:

Սակայն սխալ կլիներ մոռանալ կրոնական մնացուկների առկայությունը և կենսունակությունը մեր երկրում:

«...կարելի՞ է արդյոք ասել—հարցը է ընկեր Ստալինը պարտիայի ԽVII համագումարում, —թե մենք արդեն հաղթահարել ենք կապիտալիզմի բոլոր մնացուկներն էկոնոմիկայում: Ոչ, այդ չի կարելի ասել: Առավել ևս չի կարելի ասել, թե մենք հաղթահարել ենք կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ: Հետեւքար, չի կարելի ասել որ մենք հաղթահարել ենք կրոնական մնացուկները: Առայժմ մեր երկրում հավատացող մարդիկ դեռ բավական շատ են, թե քաղաքում և թե մանավանդ գյուղում: Դասակարգային թշնամի տարրերը հաշվի են առնում կրոնական մնացուկների ուսակցիոն դերը և ձգտում են օգտագործել այդ մնացուկներն իրենց հակասովետական նպատակների համար:

Զէ որ ամեն սի կրոն, ինչպես մենք արդեն ասել ենք, թըշնամի է կոմունիզմին: Կրոնական մնացուկները՝ զրանք պարզապես հին ուսակցիոն տեսակետների մնացուրդներ չեն, որոնք մինչև այժմ պահպանվել են հավատացող մարդկանց ուղղությունը: Կրոնական մնացուկները վասակար են, որովհետև նրանք ամրացնում և աստծու անունով սրբագործում են կապիտալիզմի մյուս բոլոր մնացուկները մարդկանց կյանքի, կենցաղի, գիտակցության մեջ:

Որպես օրինակ քննարկենք կրոնի վերաբերմունքը դեպի աշխատանքը: Սոցիալիզմի երկրում աշխատանքը բացառիկ հարաշմանական է, թե գանք ու պատիվ է վայելում: Ընկեր Ստալինը մատնանշել է, թե ՍՍՌՄ-ում աշխատանքը պատվի գործ է, փառքի գործ է, առիության ու հերոսության գործ է: Դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունքի օրինակ է հանդիսանում հարվածայնիստական վերաբերմունքի օրինակ է հանդիսանում հարվածայնությունը: Մեր երկրում լայն ծավալված ստախանովյան շար-

ժումը ցույց է տալիս, թե Առվետական Միության աշխատավորական մասսաներն ինչպիսի սիրով են վերաբերվում աշխատանքին, թե մեր երկրում բանվորների և կրտնտեսականների աշխատանքն ինչպիսի հասրավորություններ է պարունակում մեր ժողովրդական տնտեսության հետագա վերեւքի համար:

Իսկ կրոնը սրբագործում է սորիկական, կապիտալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը: Կրոնը սովորեցնում է, որ ռաստու անեծքն է, «մեղքերի համար պատիժ է, որ մարդու ուղարկված է աստծոց»: Եթե մեր լոգունքն ասում է. «Ով չի աշխատում, նա չի ուտում», ապա կրոնի լոգունքը հակառակն է՝ «մի հոգացեք վաղվա մասին, ապրեք, ինչպես երկնքի թուզունները»: Կրոնը «զրախտի երանությունը» նկարագրում է առաջին հերթին որպես անգործություն, ձրիակերություն:

Զարմանալի չէ, որ կրոնն աշխատանքի մասին ունեցած իր ուսմունքով ամրացնում և սրբագործում է անցյալի ամենազգվելի մնացուկները՝ լոգություն, պոկողականություն, պարապուրդներ, աշխատանքի կարգապահության խախտում և այլն: Մինչև այժմ մի շարք կոլտնտեսություններում կրոնական տոների օրերին հավատացողները աշխատելու փոխարեն զբոսնում են, եկեղեցի են գնում:

Վերցնենք այն հարցը, թե ինչ վերաբերմունք ունի կրոնը դեպի գիտությունը: Լենինը և Ստալինը բազմից ուշադրություն են դարձրել այն բանին, որ առանց գիտության լիակատար օգտագործման հնարավոր չէ սոցիալիզմ կառուցել, առանց ուսուցչություն թեորիայի չի կարող լինել նաև ուսուցչուն պրակտիկա: Գիտությունը սովետական երկրում ստանում է տմենալայն օժանդակություն: Խոկ կրոնը հանդես է դալիս որպես գիտության թշնամի, գիտելիքների թշնամի: Կրոնը ընդունում է միայն կույր հավատը և ժխտում է գիտական իմացությունը: Կրոնը ժխտում է, որ բնության մեջ ամեն ինչ օրինաչափորեն է կատարվում, այլ ընդունում է Շնախտախնամության պատահմունքի, հրաշքի և այլնի գերը: Կրոնը դուրս է գալիս հասարակության գիտական ուսումնասիրության դեմ, նրա զարգացման օրենքների իմացության դեմ և այդ իմացության վրա հիմնված ուսուցչուն պայքարի դեմ: Կրոնավորներն ուղղակի նշում են, որ մարդուն կրթություն հարկավոր չէ և ֆլաստակար է: «Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը», — ուսուցանում է ավետարանը: Կրոնը դարերի ընթաց-

քում անգաղար պայքարն և պայքարում է գիտության դեմ: Մտածող մարդկության լավագույն սերկայացուցիչները, օրինակ Զորդանո Բրունոն և ուրիշները զոհվել են եկեղեցու խարույկների, կախաղանների վրա, դահճի կացնի տակ, եկեղեցիների և վանքերի զնդաններում: Կրոնն ամբաղնդում է բարբարոսությունը, անկուլտուրականությունը, տղիտությունը, վայրենությունը և կապիտալիստական, դասակարգային հասարակության այլ մնացուկները:

Ամբողջ մի շարք տեղերում աղանդավորները դեռ այժմ էլ մեղք են համարում սովետական գրականություն, թերթեր և ժուռնալներ կարդալը, կինո և թատրոն հաճախելը, դպրոցում սովորելը:

Վերցնենք մի օրինակ ևս՝ կրոնի վերաբերմունքը դեպի կինը: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղղուցիչայի շնորհված մեր երկրում կինն ստացավ տղամարդուն հավասար իրավունքներ: Մեր երկրում կինն աշքի ընկնող տեղ է գրավում պիտական, անտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բընագավառներում: Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունն անողոք պայքար են մղում նրանց դեմ, ովքեր փորձում են կնոջ հետ վարվել հին ձևով: Գյուղում, որտեղ կինն ամենից ավելի ծեծկված ու իրավազուրկ էր, նա Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղղուցիչայից հետո առաջ շարժվեց դեպի սոցիալիզմի կառուցղոների առաջին շարքերը:

«Միմիայն կոլտնտեսային կյանքը կարող էր աշխատանքը դարձնել պատվիր գործ, միմիայն նա կարող էր ծնել գյուղում իսկական հերոս կանայք: Միմիայն կոլտնտեսային կյանքը կարող էր ոչնչացնելանհավասարությունը և կնոջը ուաքի կանքնեցնել»: 1935 թ. նոյեմբերի 10-ին ճակնդեղի դաշտերի հարվածային կոլտնտեսուհիների ընդունելության ժամանակ ընկեր Ստալինի արտասանած այս խոսքերը ցույց են տալիս, որ մեզ մոտ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետեւանքով կնոջ դրության մեջ վճռական հեղաշրջում է կատարվել:

Կրոնը դեպի կինը բոլորովին այլ վերաբերմունք ունի: Կը ըստու ստածել անգամ թույլ չի տվել կնոջ և տղամարդու հավասարության մասին: Կրոնի ուսմունքի համաձայն՝ կինը «տղամարդու ստրուկն է»: Յուրաքանչյուր «սուրբ գրքում»՝ ավետարանում, աստվածաշնչում և դուրանում մենք գտնում ենք տաս-

նյակ կանոններ և գրավոր պատվերներ, որոնք օրինականացնում են կնոջ ստրկական, իրավագուրկ վիճակը:

Մեր երկրում կրօնն ամեն կերպ աշխատում է արդելակել կնոջ կուլտուրական հսկայական աճումը, նրան հետ պահել սոցիալիստական շինարարության մեջ ակտիվ կերպով ժամանակելուց, խանգարել նրա և տղամարդու լիակատար հավասարությունը: Ահա թեկուղ մի քանի օրինակներ: Ստալինի անվան կոլտնտեսության մեջ, Բաղդատի շրջանում (Ռուզեկական ՍՍՌ), 1938 թ. Ռւմունիստա Ռւտանովան ցանկացավ մտնել կոմերիտոմիության մեջ: Բայց այդ բանը գուր չեկավ նրա ամուսնուն, որը կնոջ վերաբերմամբ հին կրօնական հայացքների կողմանակից էր: Ռւտանովան սպանվեց ամուսնու ձեռքով:

1937 թ. «Կոմսոմոլ» կոլտնտեսության մեջ Միրզա Կոլիմովը մորթեց իր կնոջն ու մորն այն բանի համար, որ նրանք հանել էին փարանջան:

Հետեւաբար՝ կրօնը մնաստակար, ոեակցիոն գեր է խաղում: Հանդիսանալով շահագործողական հասարակության մնացուկը, նա փորձում է աշխատավորների գիտակցության մեջ ամրապնդել կապիտալիզմի մի ամբողջ շարք մնացուկներ, որոնք խանդարում են կոմունիստական շինարարությանը: Պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ մի շաբթ կոլտնտեսություններում մինչև այժմ գեռ կենսունակ են անցյալի այնպիսի մնացուկներ, ինչպիսիք են կրօնական տոները: Կարելի է տասնյակ օրինակներ բերել, որոնք վկայում են, թե ինչպիս բաղմաթիվ «աթոռական» (պրետունայ) և այլ տոների օրերին որոշ կոլտնտեսություններում աշխատանքը գալարեցնում են և մի քանի օր ման են գալիս: Հարբեցողության հողի վրա այդ օրերին հազվադեպ չեն հրդեհները, խեղությունները, ամեն տեսակի դժբախտ պատահարները:

Գյուղերում տարածված են նաև անցյալի այլ մնացուկները՝ մնահավատություններ, սնոտիւալաշտություններ, կանխագուշակ երաղների հավատալը: Մինչև այժմ գոյություն ունեն կախարդներ, գրքացներ, գուշակներ: Հավատացող մարդիկ հաճախ նըրանց են դիմում խորհուրդ և օգնություն ստանալու համար: Այդ խավարամոլներն ու շառլատանները, ի հարկե, ոչ մի օգնություն չեն կարող տալ: Նրանք հարստանում են հավատացող մարդկանց տգիտությունից օգտվելով, իսկ օգնության համար իրենց դիմողներին, նրանք մնասում են:

Ահա ինչու համար կապիտալիզմի մնացուկների հաղթահարման խնդիրը, որը կոմունիստական պարտիան առաջ է քաշել որպես երրորդ հնդամյակի հիմնական, քաղաքական խնդիր, պահանջում է նմանապես պայքարել նաև կրօնական մնացուկների հաղթարման համար:

Աշխատավորների գիտակցության մեջ եղած կրօնի հաղթահարման համար պայքարելը՝ կոմունիզմի համար աշխատավորների մղած ընդհանուր պայքարի անբաժանելի բաղադրիչ մասն է, որովհետեւ կապիտալիզմի ամեն մի մնացուկ, այդ թվում նաև կրօնը, հակասովետական տարրերի ձեռքում մի դրամիք է կոմունիզմի կառուցման դեմ նրանց մղած պայքարում:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄԸ ԵՎ ԿՐՈՆԸ

Կրօնը կապիտալիստական երկրներում վայելում է շահագործողների բացառիկ օժանդակությունն ու ուշադրությունը: Եվ այդ պատահական չէ:

—«Գլխավորը, որին առանձնապես ձգտում են բոլոր երկրների բուրժուազիան և նրա ուժորմիստական պոչուկները՝ ասել է ընկեր Ստալինը Համեկ(թ)Պ 18-րդ համագումարում, —այդ այն է, որպեսզի բանվոր դասակարգի մեջ արմատախիլ անեն հավատը գեղի իր ուժերը, նրա հաղթության հնարավորության և անխուսափելիության հավատը և դրանով իսկ հավերժացնեն կապիտալիստական ստրկությունը»:

Սահմանից այն կողմ քիչ չեն այնպիսի աշխատավորներ, որոնք թունավորված են բուրժուազիան պրոպագանդայի թույնով:

Նրանք չեն հավատում բանվոր դասակարգի ուժերին, կապիտալիզմը խորտակելու հնարավորությանը, իշխանությունն իրենց ձեւքը վերցնելու և պահելու հնարավորությանը:

Այդ թերահավատության տարածման մեջ մեծ գեր է խաղացել նաև կրօնը, տերտերականությունը: Կրօնական կազմակերպությունները աշխատավորներին շարունակ ետ են պահում դասակարգային պայքարից, նրանց մեջ մտցնում են այն միտքը, որ դասակարգային հասարակարգն անսասան է, հավիտենական, որ նա հաստատված է հենց աստծու կողմից:

Եթե բանվորները կապիտալիստներից պահանջում են աշխատանքի լավ պայմաններ, եկեղեցու սպասավորները բանվոր-

ներին կոչ են անում դեմ չգնալ այն կարգերին, որոնք «սրբազործված են աստծու կողմից»։ Աշխատավորների որոշ մասի վրա այդ բանն աղդում է։

Անգլիայի բանվորները 1926 թ. աշխատանքը դադարեցրին, հայտարարելով, որ չեն վերսկսի այն, մինչև որ կապիտալիստները չըրաժարվին բանվորական օրը երկարսցնելու և աշխատավարձը պակասացնելու փորձից։ Եկեղեցու ներկայացուցիչները դիմեցին բանվորներին, կոչ անելով վերսկսել աշխատանքը և հաշտվել կապիտալիստների հետ։

Կրոնը թուլացնում է աշխատավորների միությունը շահագործողների դեմ նաև նրանով, որ նա հավատացող մարդկանց մեջ կրոնական թշնամություն է սերմանում։

Երկրագնդի վրա ապրում են հազարավոր տարբեր ազգություններ։ Շահագործողներին օգտավետ է, որ աշխատավորները համատեղ հանդես չդան, որովհետև այն ժամանակ ավելի հեշտ կլինի նրանց ստրկացներ Ահա թե ինչու համար շահագործողները միշտ ձգում են, որպեսզի ազգային ու կրոնական թշնամանք բորբոքելու միջոցով ջլատեն աշխատավորների ուժերը։ Ցարական կառավարությունն այդպես էլ անում էր։ Նա ուսւներին հանում էր հրեաների, լիների դեմ, զրացիներին՝ հայերի դեմ և այլն։ Ցարական կառավարությունը սարքում էր հրեական չարգեր, հայ-թուրքական կոտորածներ և այլն։ Այդ միջոցով նա բնակչության մի մասին գրգում էր մյուսի դեմ և աշխատավորներին հեռացնում ցարի, կալվածատերերի և կապիտալի դեմ մղվող պայքարից։

Ցարական կառավարությունն ինչ որ անում էր Ռուսաստանում, նույն էլ ներկայումս կատարվում է բուրժուական բուլոր երկրներում։ Օրինակ՝ անգլիական բուրժուազիան մի քանի հարյուր տարի առաջ գրավել է մի հարուստ երկիր՝ Հնդկաստանը, և պինդ պահում է նրան իր ձեռքում։ Անգլիայում կա 43 միլիոն բնակիչ, Հնդկաստանում՝ 319 միլիոն։ Իսկ ինչպես է հաջողվում ստրկության մեջ պահել մի այդպիսի բազմաքանակ ժողովուրդ։ Անգլիական բուրժուազիան Հնդկաստանում դիմանում է, հենվելով տեղական ֆեոդալ-կալվածատերերի վրա, զորքի վերա։ Սակայն այդ բավական չէ։

Այդ պատճառով նա Բուդղայական կրոն դավանող Հնդկաստանի բնակչության մի մասին գրգում է մուսուլմանական կըրոն դավանող մյուս մասի դեմ։

Անգլիական ոստիկանությունն ամեն տեսակ խորաման-կությունների միջոցով այդ թշնամանքը մինչեւ ճակատամարտերի և ընդհարումների է հասցնում։ Դրա հետևանքով ստացվում է այն, որ Հնդկաստանի աշխատավորներից շատերը, զբաղկած լինելով փոխազարձ ծեծկուուքով, հեռու են մնում գլխավոր թըշնամու՝ անգլիական կապիտալի դեմ պայքար մղելուց։

Ազգային և կրոնական թշնամությունը շահագործողների համար իշխանությունը պահպաննելու ամենաշահավետ միջոցներից մեկն է։ Ահա թե ինչու կապիտալիստական բոլոր երկրներում կրոնը վայելում է բուրժուազիայի և կալվածատերերի լայն օժանդակությունը։

Շահագործողները ոչ միայն եկեղեցին ու տերտերականությանն են օգտագործում, որպեսզի խարեն ու թմրեցնեն հավատացող մարդկանց։ Բացի եկեղեցիներից, կապիտալիստներն ստեղծել են ամեն տեսակի կրոնական ու կիսակրոնական կազմակերպությունների, ընկերությունների, միությունների և միավորումների հսկայական ցանց, որպեսզի նրանց օգնությամբ առվելի լավ տիրապետեն աշխատավորների գիտակցությանը։ Համարյա յուրաքանչյուր կապիտալիստական երկրում գոյություն ունեն, այսպես կոչված, կղերական, այսինքն՝ կրոնական, քաղաքական պարտիաներ, կղերական պրոֆմիություններ, կղերական կազմակերպություններ՝ երեխաների համար, կանանց համար, երիտասարդության համար։ Այդ կազմակերպություններում միավորված են միլիոնավոր աշխատավորներ, որոնք տերտերների բոլոր մեջ են գտնվում։ Բուրժուազիան պրոպագանդայի համար լայն կերպով օգտագործում է կրոնական մասուլը, կինոն, ուղիոն, արվեստը։ Մինչև անգամ գիտությունն էլ ֆալսիֆիկացիայի է ենթարկվում, խեղաթյուրվում է բուրժուական զիտնականների կողմից, որպեսզի «ապացուցեն» կրոնի օգտակարությունը, «ապացուցեն» աստծու գոյությունը և դրանով իսկ հավատացող աշխատավորներին հեռու պահեն իսկական մատերիալիստական զիտությունից։

Այժմ, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի էպոլսայում, գասակարգությն ամենասուր պայքարի էպոփայում, գիշտաիչ իմպերիալիստներն իրենց փրկության միջոցը տեսնում են աշխատավորների հետ արյունալի դատաստան անելու, համաշխարհային նոր պատերազմի հրդեհ բորբոքելու մեջ։

Սովետական Միության դեմ պայքարելու նպատակով՝ կա-

պիտալիստական շրջապատռություն ուժեղ կերպով մեր երկիրն է ուղղարկում իր ազենտներին՝ լրտեսներին և դիվերսանտներին։ Իմապերիալիստները քիչ ազենտներ չեն հավաքագրել նաև մեր երկրի ներսում ժողովրդի թշնամիներից՝ տրոցկիստներից, բուխարինականներից, ինչպես նաև ոեակցիոն հոգեուրականության միջից։

Վերջին ժամանակվա դեպքերն առանձնապես համոզիչ կերպով ցույց տվին մեր երկրում եղած կրօնական կազմակերպությունների իսկական, թշնամական դեմքը։ Ներդործ ժողովում ամրող շարք երկրամասերում ու մարզերում հայտնաբերեցին և արմատախիլ արին լըրտեսական-դիվերսանտական բները, որոնք կազմված էին եկեղեցականներից։ Կրօնական պաշտամունքների ամենատարբեր սպասավորները, սկսած սաղմոսասացներից և վերջացրած մետրոպոլիտներով, գարշելի քայլքայիչ աշխատանք էին տանում մեր երկրում։ Այդ հողի վրա «սրտառուչ» միաբանությամբ միահյուսվել էին ուղղափառները կաթոլիկների հետ, եկեղեցականներն աղանդավորների հետ, տիսոնականները նորոգչականների հետ, ըաբրիները մոլլաների հետ, քսենճները լամաների հետ և այլն։ Երանց հետ ձեռք ձեռքի տված գործում էին կապիտալիտոցիստական բուխարինական վարձկանները, բուրժուական բոլոր գույնի նացիոնալիստները, օտարերկրյա հետախուզությունների լրտեսներն ու դիվերսանտները։

Օրինակ՝ Գորկու մարզում լիկիդացիայի հնթարկվեց գիշվերսանտերտերների մի ամբողջ խումբ։ Նրա գլուխ կանգնած նիժեգորոդյան մեարոպղիտ ֆեովան Տուլյակովսկին, Սերէկին նիժեգորոդյան մեարոպղիտ Պուտյակին, Վետլուգի եպիսկոպոս Կորոբովը և գաչի եպիսկոպոս Պուտյակին, Վետլուգի եպիսկոպոս Կորոբովը և ուրիշները։ Խումբը բաժանմունքներ ուներ մարդի մի շարք շրջաններում։ Խմբի նպատակն էր, ըստ եպիսկոպոս Կորոբովի սեփական խոստովանության, կոլտնտեսությունների քայլքայումը, արդյունաբերության վիճեցումը, տրանսպորտի քայլքայումը, լրտեսական տեղեկություններ հավաքելը, տեսորիստական հավաքագրերը հավաքագրելը և այլն։ Նույն այդ Գորկու մարզում Կրիկացրեր իմաստական լով տերտերի խումբը (Լիսկովյի շրջան, իվանկովսկոյե գյուղ) այրել է 12 կոլտնտեսականի տուն։ Տերտերական, դիվերսանտական մի ուրիշ խումբ այրել է Բորսկոյեի «Մետալիստ» գործարնը և այլն։

«Սուրբ հայրերը» տրոցկիստական-բուխարինական լրտես-

ների և դիվերսանտների սերտ համագործակցությամբ կատարում էին տեսորիստական ակտեր, սպանում էին սովետական ակտիվիստներին, հրկիզում էին ֆարբիկաներ, գործարաններ, կոլտնտեսային շենքեր, թունավորում էին անասուններին և մարդկանց։

Տրոցկիստական-բուխարինական բանդիտները և բոլոր գույնի բուրժուական նացիոնալիստները, որոնք տեղատեղ խցկվել էին սովետական ու պարտիայի օրգաններում, ամրացնում և պաշտպանում էին ուսակցություն հոգեուրականության դիրքերը։ Բուխարինական գարշելի լակեյ, խոշոր լրտես իկրամովը դատարանում խոստովանվեց, որ նա իր «ատբորչից»՝ Բուխարինից ցուցում էր ստացել պահելու և պահպանելու մուսուլման հոգեուրականության կադրերը Միջին Ասիայում, որովհետեւ կապիտալիզմի ևստավլրացիայի համար զրանք միանգամայն հարմար մարդկի էին։ Թուրքմենիայում ժողովրդի թշնամի Այտակովը հրամայում էր կոլտնտեսություններում ընդունել կրօնական պաշտամունքի սպասավորներին, իսկ զրանք այնտեղ տանում էին քայլքայիչ աշխատանք։ Օտարերկրյա հետախուզություններին ծառայող եկեղեցական լրտեսները տրոցկիստների և բուխարինականների հետ միասին հանդիսանում էին և հանդիսանում են արյունարու կապիտալիզմի վարձու ագենտները։

Մոսկվայում գոյություն ուներ եկեղեցական լրտեսական-տեսորիստական կենտրոն, որը ղեկավարում էր տեղական բաժանմունքների աշխատանքը։ Օտարերկրյա հետախուզություններին ծառայող եկեղեցական լրտեսները տրոցկիստների և բուխարինականների հետ միասին հանդիսանում էին և հանդիսանում են արյունարու կապիտալիզմի վարձու ագենտները։

Մոսկվայում գոյություն ուներ եկեղեցական տեսորիստական կենտրոնական կենտրոն, որը ղեկավարում էր տեղական բաժանմունքների աշխատանքը և իր հերթին գործում էր արտասահմանյան գլխավոր շտաբների առաջադրանքների համաձայն։

Մուսուլմանական սեպակցիոն հոգեուրականությունն իր կոն-

տերություն գործունեության համար ցուցումներ էր ստանում ուն կուրբանգելին մոլլայի միջնորդ, որը ունուցեցիայի ոկրում փախել էր ՍՍՌՄ-ից և բնակվել ճապոնիայում։

1936 թ. պարզվեց, որ Ուֆայի մուֆթի (բարձր հոգեուրանձ) Թարջիմանովը ոչ այլ ոք է, եթե ոչ ճապոնական լրտես։

Կենտրոնական հոգեուրական աշխատանքը վարչության ցուցանակի տակ նա կազմակերպել էր լրտեսական ագենտության

Մեր սոցիալիստական հայրենիքի ամենանողկալի թշնամիներ դուրս եկան աղանդավորական բազմաթիվ «եղբայրներ», որոնք շարունակ իրենց հետևողներին հավատացնում էին, թե իրենք «նոր յազիս կոմունիստներ են»։ Ինչպես պարզվել է, բապտիստների ղեկավարները՝ Պրոխանովը, Օղինցովը և ուրիշները

1914-18.թվի համաշխարհային պատերազմից դեռ շատ առաջ կապված են եղել գերմանական հետափուղության հետ, փող են ստացել անձամբ Վիլհելմից (գերմանական նախկին կայսրից) և դրա փոխարեն պարտավորվել են ոռւսական բանակում քայլքայիչ աշխատանք տանել. Օտարերկրյա պետությունների օգտին լրտեսություն անելուն տերտերների, մոլլաների և քսենաների հետ հավասարապես մասնակցում էին աղանդավորների գլխավորները: Խոսքով գովեստներ շոայելով սովետական իշխանության հասցեին, այդ ժամու կեղծավորները սուր դանակ էին պահում հետեւում, որպեսզի հարմար դեպքում այն խրեն մեր երկրի աշխատավորների մեջքը և նրանց նորից ենթարկեն կապիտալիստական ստրկության:

Այս բոլոր փաստերը բավականաչափ համոզչությամբ բացահայտում է մեր երկրում եղած կրոնական կազմակերպությունների խական դեմքը: Կրոնական պաշտամունքների սպասավորներից շատերը բնավ պատահարար չեն դառնել մեղ թշնամի կապիտալիստական պետությունների ագենտները: Այս կամ այն եկեղեցին ինչպես էլ կուզե իրեն անվանի, նրանցից յուրաքանչյուրն ըստ էության թշնամի է աշխատավորների շահերին: Ինչպիսի «սովետական» լեզվով կուզե պճնաղարդվեն այս կամ այն տերտերներն ու աղանդավորները, նրանք ըստ գործի էության խավարամոլներ, ուսակցիոններներ, կոմունիզմի թշնամիներ են: Նրանց գործունեությունը խորապես թշնամական է սոցիալիստական շինարարությանը:

Ահա ինչու համար կապիտալիստական շրջապատումը սոցիալիզմի երկրի դեմ մղած պայքարում այդպիսի գործոն օժանդակություն է ստանում ուսակցիոն հոգևորականության կողմից:

## ՍՍԱԼԻՆՅԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒԾԻԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Ստալինյան Կոնստիտուցիան սոցիալիստական մեր մեծ հայրենիքի բոլոր քաղաքացիների համար ապահովում է խղճի լիակատար ազատություն: ՍՍԱԼԻՆ-ի Կոնստիտուցիայի 124 րդ հոդվածն ասում է. «Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով եկեղեցին ՍՍԱԼԻՆ-ում բաժանված է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրո-

պագանդայի ազատությունը ձանաչվում է բոլոր քաղաքացիների համար»:

Խղճի ազատության և եկեղեցին պետությունից անջատելու պահանջը գեռ 1902 թվին առաջադրել էր կենքը, որպես ուղղուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային պահանջ, «Սոցիալիզմ և կրոն» հոդվածում կենքնը բացատրել է, թե ինչ է խղճի ազատությունը: Նա գրել է.

«Պետությունը ոչ մի գործ չպետք է ունենա կրոնի հետ, կրոնական ընկերությունները չպետք է կապված լինեն պետական իշխանության հետ: Ամեն ոք պետք է միանգամայն ազատ լինի իր ցանկացած կրոնը դավանելու կամ ոչ մի կրոն չընդունելու, այսինքն՝ անառաված լինելու, ինչպես և լինում է սովորաբար ամեն մի սոցիալիստ: Քաղաքացիների միջև իրավունքների ոչ մի խտրություն թույլատրելի չէ կրոնական հավատալիքներից նրանց կախում ունենալու տեսակետից: Քաղաքացիների այս կամ այն դավանանքի մասին պաշտօնական փաստաթղթերում արվող նույնիսկ որևէ հիշատակություն պետք է ոչնչացվի» (Լենին, հատոր VIII, հայ. հր., էջ 596):

Լենինի առաջադրած այդ պահանջները իրականացան միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեզուլտացիայով: Սովետական իշխանությունը 1918 թվի հունվարի 23-ին հրատարակեց եկեղեցին պետությունից անջատելու մասին դեկրետը, որտեղ հրոշակում էր խղճի ազատությունը: Այդ դեկրետի 3-րդ կետ ասում է.

«Յուրաքանչյուր քաղաքացի կարող է դավանել ուզած կրոնը կամ ոչ մեկը չդավանել, որևէ հավատ դավանելու կամ ոչ մի հավատ չդավանելու հետ կապված ամեն տեսակի իրավազրկումները վերացվում են»:

Մեր երկրում խղճի ազատությունն ապահովված է եկեղեցին պետությունից անջատելով, այսինքն՝ եկեղեցին զրկելով պետական ամեն տեսակի օժանդակությունից, խղճի ազատությունն ապահովված է եկեղեցին զպրոցից անջատելով, այսինքն՝ վերացնելով կրոնի վնասակար ազդեցությունն աճող սերնդի դաստիարակության վրայից: ՍՍԱԼԻՆ-ի Կոնստիտուցիան հավատացիալների համար ապահովում է կրոնական պաշտամունքների ազատ կատարումը, չհավատացողների համար՝ ամեն մի կը-ընի վնասակարությունը, անզիտականությունը և ուսակցիոնու-

թյունը մերկացնող հակալրոնական պրոպագանդայի ազատությունը:

Մի քանի բուրժուական երկրների կոնստիտուցիաներում նույնպես հայտարարված է խղճի ազատությունը: Բայց այնտեղ խղճի ազատությունը մնում է դատարկ հնչյուն, որովհետև բուրժուագիան ծայրահեղորեն շահագրգոված է կրոնի ամրացման ու պահպանման գործում: Ուստի բուրժուական պետությունները խոսքով հայտարարելով խղճի ազատություն, գործով ամեն կերպ օժանդակում են եկեղեցուն՝ շահագործման վստահելի պատվարին:

Իսկ Սովետական իշխանությունը կրոնի կարիքը չի գոռում իր հեղինակությունը պահպանելու համար: Սովետական իշխանության միակ նպատակն է ստեղծել բոլոր աշխատավորների համար երջանիկ, ազատ, կուլտուրական կյանք, իսկական ժողովրդական իշխանությունը ոչ մի «աստվածային» պաշտպանաքողի կարիք չունի, որովհետև նա ժողովրդից թաքցնելու բան չունի: Այդ պատճառով Սովետական իշխանությունը միակ իշխանությունն է, որը կարողացավ լրիվ անջատել եկեղեցին պետությունից և իրականացնել խղճի իսկական ազատությունը:

Տերտիքականությունն ամեն եկեղեց ճգնում է խեղաթյուրել Ստալինյան Կոնստիտուցիայի իմաստը: Այսպես օրինակ՝ Կոնստիտուցիայի 124-րդ հոդվածը տերտիքներն ու աղանդավորները փորձում են մեկնաբանել այն իմաստով, որ նա, իր թե, կրոնական պրոպագանդայի ազատությունն է տալիս Սովետական Միությունում:

Պետք է մերկացնել տերտիքների այդ խարդախ խաղերը: Կոնստիտուցիայի մեջ պարզ կերպով ասված է, որ հավատացողների համար ապահովվում է «կրոնական պաշտամունքների կատարման աղատությունը», բայց ամեններն ոչ կրոնական պրոպագանդայի աղատությունը:

Մեր երկրում յուրաքանչյուր հավատացող կարող է աղատ կերպով կատարել իր կրոնական պահանջները՝ աղոթել, եկեղեցի գնալ, կատարել այս կամ այն ծեսերը և այլն: Սովետական իշխանությունն այդ բանի համար հավատացող մարդկանց արամադրության տակ է դնում եղած աղոթատները՝ նրանց ամբողջ ունեցվածքով միասին, խիստ կերպով հետեւում է, որպեսզի հավատացողներին ոչ ոք չխանգարի՝ իրենց կրոնական պահանջները բարարարելու համար: Ստեղծյան այդ բնավի չի նշանակում, թե Աղ

վետական իշխանությունը տերտիքներին թույլ է տալիս ազատ կերպով տարածելու կրոնական խավարամությունը:

Պրոլետարիատի դիլտատուրայի երկրում չկա և չի կարող լինել այնպիսի դրություն, որ վնասակար, ունակցիոն հակագիտական, սոցիալիզմի թշնամի զաղափարներն անարգելք կերպով քարոզվեին ու տարածվեին: Ժողովրդի շահերին պահապան կանգնած Սովետական իշխանությունը թույլ չի տա ազատ քարոզելու կրոնական գաղափարները, որոնք թմրեցնում են աշխատավորների գիտակցությունը:

Կոմունիստական պարտիան իր ծրագրում և համագումարների որոշումներում բազմից մատնանշել է, որ կրոնը հանդիսանում է շահագործողների գործիքը աշխատավորների դեմ նրանց մղած պայքարում: Ընկեր Ստալինը, ընդգծելով կրոնի վնասակար բնույթը, գրել է: «Յուրաքանչյուր կրոն գիտությանը հակագիր մի բան է»:

Կրոնի նկատմամբ մարդսիստական-լինինյան այդ ըմբռանումից ենելով կոմունիստական պարտիան և Սովետական իշխանության օրգանները միշտ պայքարել են և այսուհետև էլ վճառկանորեն պայքարելու են կրոնի դեմ: Կրոնական մնացորդների հաղթահարման խնդիրները հանդիսանում է կարեռագույն խընդիրներից մեկը աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում: Ապահովելով խղճի աղատությունը և կրոնական պաշտամունքների կատարման աղատությունը, Ստալինյան Կոնստիտուցիան կոչ է անում աշխատավորներին՝ ուժեղացնել գաղափարական պայքարը կրոնի դեմ:

Կրոնական պաշտամունքի սպասավորները փորձում են աղավաղել Կոնստիտուցիան այն իմաստով, որ Կոնստիտուցիայով իրը թե իրենք՝ պաշտամունքի սպասավորները հավասարված են աշխատավորներին: Դրանից ենելով, տերտիքները տեղադրություն են, որ իրենց ընդունեն կոլտնտեսությունների մեջ, համատեղության կարգով աշխատանքի ընդունեն սովետական հիմնարկներում և այլն: Որոշ դեպքերում Սովետական իշխանության տեղական օրգանների աշխաթողանքի պատճառով կամ նրանց կողմից ակնհայտ թողարկության պատճառով տերտիքները խցկում են կոլտնտեսությունների մեջ, նույնիսկ նրանց համար հողամասեր են հատկացվում, եկեղեցիները տաքացվում և վերանորոգվում են կոլտնտեսային աշխարհերի հաշվին:

Հարկ կա՞ արդյոք ապացուցելու, որ դա եկեղեցին պետությունից անջատելու մասին նորած սովորական գեկրօնական բացահայտ խախտումն է, գյուղատնտեսական արտելի Ստալինյան Կառուսադրության ամենակոպիտ խեղաթյուրումը:

Ստալինյան կոնստիտուցիան տերուերներին տալիս է ընտրական իրավունք, բայց այդ ամենեին չի նշանակում, թե տերուերները դառնում են աշխատավորներ։ Տերուերն աշխատավոր չէ, այլ ձրիակեր, խավարամոլ է։ Այդ պատճառով էլ ոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, թե տերուերը լինի կորոնտեսության անդամ, կամ որևէ աշխատանք ատանի սովորական օրգաններում։

Ստալինյան կոնստիտուցիան կրոնական պաշտամունքի սպասավորներին տալիս է բոլոր հնարավորությունները, որպեսզի դառնան սովորական երկրի ագնիվ աշխատավորներ։ Դրա համար նրանք պետք է թողնեն իրենց հոգեոր աստիճանը, դադարեն աշխատավորների ուղեղները թմրեցնելուց և զբաղվեն օգտակար աշխատանքով։

Սովորական իշխանության գոյության քսան տարվա ընթացքում շատ տերուերներ, բարբիներ, մոլլաներ, քսենձներ, շամաններ թողին իրենց գարշելի արհեստը և զբաղվեցին օգտակար աշխատանքով։

Առաջ անմիջապես չեր վերականգնվում կարգաթող տերուերի ընտրական իրավունքները։ Հինգ տարի նա շարունակում էր մեալ որպես ձայնագուրեկ և այդ ժամկետն անցնելուց հետո միայն դառնում էր իրավահավասար քաղաքացի, եթե իր վարքով ապացուցում էր Սովորական իշխանության նվիրված լինելը։ Այդ ժամկետը վարանցնում էր կրոնական պաշտամունքների որոշ սպասավորներին։ Այժմ, Ստալինյան կոնստիտուցիայի համաձայն, այդ սահմանափակումները վերացել են։

Պաշտամունքի սպասավորների հոգեոր աստիճանից հրաժարվելը ուժեղացել է վերջին։ Կարգաթողները դիմում են աշխատավորներին, բացատրելով կրոնից իրենց հեռանալու դրապատճառները և կոչ անելով պաշտամունքի այլ սպասավորներին հետեւելու իրենց օրինակին։ Այսպես օրինակ՝ Լենինգրադի մետրոպոլիտ Ն. Ֆ. Պատոնովը 1938 թ. ապրիլին դիմեց Մարտնչող անսամբլածների միությանը, հայտարարելով, որ ինքը վերջնականապես խղել է կապը կրոնի հետ։

Հրաժարվելով իր հոգեոր աստիճանից և զատապարտելով իր անցյալ ամբողջ գործունեությունը, Ն. Ֆ. Պատոնովը առաջ-

ջարկեց անսատվածների Միությանն ու հակակրոնական թահգարաններին հրապարակել մի շարք հոգվածներ և փաստաթղթերը, որոնք մերկացնում են եկեղեցականների կոնտրուելուցին գործունեությունը։ Ն. Ֆ. Պատոնովը մերկացրեց հայտնի խավարամուներ՝ հպիսկոպոս Բոյարսկուն, մետրոպոլիտ Ալեկսանդր Վվեդենսկուն և ուրիշներին։ Նա պատմեց եկեղեցականների կոնտրուելուցին աշխատանքի մեթոդների մասին՝ քարոզները կոնտրուելուցին նպատակներով օգտագործելու մասին, եկեղեցիներում տարվող անլիգալ աշխատանքի մասին, հոգեորականների գաղտնի ձեռնադրումների մասին և այլն։

Ամբողջ մի շարք տեղերում տերուերականությունն ուժեղ կերպով լուրեր է տարածում այն սասին, որ կրոնական կազմակերպությունները, իրեն թե հանդիսանում են աշխատավորների հասարակական կաղմակերպություններ և կոնստիտուցիայի համաձայն՝ իրավունք ունեն իրենց թեկնածուներն առաջազրելու աշխատավորների գեպուտատների սովորներում։ Դրան համապատասխան որոշ տեղերում տերուերները հավակնություն ունեն սովետների անցած ընտրություններում առաջադրելու իրենց թեկնածուներին։ Փետք է մերկացնել եկեղեցականների այդ մեքենայությունները։ Ստալինյան կոնստիտուցիան կրոնական կաղմակերպություններին իրավունք չի տալիս թեկնածուներ առաջազրելու սովետներում։ Կոնստիտուցիայի համաձայն՝ ճանաչված է կաղմակերպությունների միայն մեկ ֆունկցիա՝ կրոնական պաշտամունքների կատարում։ Բացի դրանից, այսինքն՝ բացի ժամասացություններ կատարելուց և այս կամ այն գավանանքի պատվիրագրած ծեսեր կատարելուց, կրոնական կաղմակերպություններն ուրիշ ոչ մի իրավունք չունեն։ Այստեղ է կապիտալիստական պետություններում գտնվող եկեղեցու և պրոլետարիատի դիկտատուրայի երկրում գտնվող եկեղեցու գրության միջև եղած արմատական տարբերությունը։ Այնտեղ եկեղեցին հանդիսանում է բուրժուական պետության քաղաքական սպասարկը Մեզ մոտնա հավատացյալների մասնավոր կաղմակերպությունն է։ Կրոնական կաղմակերպությունները քաղաքական ոչ մի իրավունք չունեն։ Ճետեաբար, կրոնական կաղմակերպություններն իրենց թեկնածուներն առաջադրելու իրավունք չունեն։

ՍՍԻՄ կոնստիտուցիայի մեջ ճշգրիտ ասված է, թե որ կաղմակերպությունները կարող են թեկնածու առաջադրել։ 141-րդ հոդվածն ասում է. «Թեկնածուները առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորական հասարակական կաղմակերպու-

թյունների ու ընկերությունների՝ կոմունիստական պարտիական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոռապերատիվների, երիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների համար:

«Այդ ցուցումը, — գրում է ընկեր Վիշինսկին, — միանգամայն պարզ է և հստակ:

Ընկերություններ կամ հասարակական կազմակերպություններ ասելով, անհրաժեշտ է հստականալ կամավոր ընկերությունները և նրանց միությունները որոնք, ինչպես այդ ասված է 1932 թ. հուլիսի 10-ի ՌՍՖՍՌ Համառուսական կենտրոնակոմի և Ժողկոմսովետի «Կամավոր ընկերությունների և միությունների օրենսդրություն»-ում, «հանդիսանալով քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների հասարակական ինքնազործունեության կազմակերպություններ, իրենց խնդիր են դնում ակտիվ մասնակցել ՍՍՌ Միության սոցիալիստական շինարարությանը, ինչնական աժես նաև օժանդակել երկրի պաշտպանության ամբարձմանը»:

Ստալինյան կոնստիտուցիան ապահովում է հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունքը՝ «Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնազործունեություն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով» (հոդված 126), Պարզ է, որ ամեն տեսակի միավորումները, որ այլ նպատակներ են հետապնդում, քան այն, որոնք նշված են ՍՍՌՄ կոնստիտուցիայի 126-րդ հոդվածում և «Կամավոր ընկերությունների և միությունների օրինադրության» մեջ, ոչ մի հիմք չունեն ընտրությունների ժամանակ իրենց թեկնածնուներն առաջազըելու իրավունքի հավակնություն ունենալ:

Աշխատավորների ընկերություններ և հասարակական կազմակերպություններ չեն նաև այսպես կոչված եկեղեցական քառանյակները, որոնք գրանցվում են առանձին կարգով, որ «քառանյակները», որոնք գրանցվում են առանձին կարգով, որ նրանց համար հաստատված է 1929 թ. ապրիլի 8-ին ՌՍՖՍՌ Համառուսական կենտրոնակոմի և ժողովրդության որոշմամբ և ոչ շամառուսական չունտրությունների չորսից մեջ այդ որոշման համաձայն չունեն իրենց կանոնադրությունը, չեն օգտվում իրավական անձի իրավունքով, չունեն իրենց ընտրովի ներկայացուցչական օրդանները: Իրենց դործունեության ընթացքում նրանք պետք է սահմանափակվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նրանք կազմակերպված են, այսինքն՝ ինչպես այդ ժամանակաված է 1929 թվի ապրիլի

8-ի որոշման մեջ, «իրենց կրոնական պահանջները բավարարեն լու համար»:

Հետեւաբար, կրոնական միավորումները երբեք չեն ընկնում այն ընկերությունների և կազմակերպությունների հասկացողության տակ, որոնք իրավունք ունեն թեկնածուներ առաջադրելու սովետների համար:

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկեր Ստալինն ամերիկյան առաջին բանվորական պատվիրակության հետ ունեցած զրույցում միանգամայն պարզ կերպով որոշել է հակակրոնական պրոպագանդայի տեղը մեր պարտիական աշխատանքում: Ընկեր Ստալինն ասել է.

«Մենք պրոպագանդա ենք մղում ու պրոպագանդա ենք մղելու կրոնական նախապաշարմունքների դեմ: Երկրի օրենսդրությունն այնպիս է, որ ամեն մի քաղաքացի իրավունք ունի զավանելու ցանկացած կրոնը: Դա յուրաքանչյուրի խղճի գործն է: Հենց այս պատճառով է, որ մենք կիրառել ենք եկեղեցու բաժանումը պետությունից: Բայց կիրառելով եկեղեցու բաժանումը պետությունից ու դավանանքի ազատություն հռչակելով՝ մենք դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացացու իրավունք ենք վերապահել համոզելու միջոցով, պրոպագանդայի ու ազիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ...»

Պարտիան չի կարող չեզոք լինել կրոնական նախապաշարմունքների նկատմամբ և նա պրոպագանդա է մղելու այդ նախապաշարմունքների դեմ, որովհետև դա շահագործող դասակարգերին աջակցող և այդ դասակարգերի նկատմամբ հնագանդություն քարոզող հետազեմ հոգեորականության ազդեցությունը խսիրանության ազդեցությունը մեկն է... Հակակրոնական պրոպագանդան այն միջոցն է, որը պետք է մինչեւ վերջը հասցնի հետապիմական հոգեորականությանը լիկվիդացիայի ենթարկելու գործը» (ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, հայերեն հրատ. 1935 թ., էջ 246):

Վ. ի. Լենինը բազմիցս ընդգծել է, որ հակակրոնական պրոպագանդան ամբողջ պարտիայի գործն է:

Լենինը «Սոցիալիզմ և կրոն» հոդվածում գրել է.

«Մեր պարտիան բանվոր դասակարգի ազատազրման գիտակից, առաջավոր մարտիկների մի միությունն է։ Մի այդպիսի միություն չի կարող և չպետք է անտարեր վիրաբերվի դեպի անդիտակցականությունը, դեպի տգիտությունը կամ խավարամոլությունը, ինչպես կրոնական հավատալիքներն են։ Մենք պահանջում ենք եկեղեցին լիովին անջատել պետությունից, որպեսզի կրոնական մշուշի դեմ պայքարենք զուտ գաղափարական ու միայն գաղափարական զենքով, մեր մամուլով, մեր խոսքով։ Բայց մենք մեր միությունը ՌՍԴԲՊ հիմնել ենք ի միջի այլոց, հենց այդպիսի պայքար մղելու համար բանվորների կրոնական ամեն մի հիմքարցման դեմ (Լենին, հատոր 8, հայ. հր., էջ 598):

Լենինն ուղղակի ասում է, որ կրոնի դեմ պայքարը մեր քաղաքական-դաստիարակչական աշխատանքի խնդիրներից մեկն է։ Ինչպես պատասխան այն ընկերներին, որոնք այժմ էլ կարծում են, թե հակակրոնական պրոպագանդայով կարելի է զբաղվել, թե այդ բանը միայն անաստվածների Միության գործն է, այլ ոչ թե պարտիական բոլոր կազմակերպությունների, ոչ թե յուրաքանչյուր բոլշևիկի։ Լենինն իր հոդվածում գրում է.

«... Մեր ծրագրի պարզաբանումը անհրաժեշտորեն պարունակում է նաև կրոնական մշուշի իսկական պատմական ու տընտեսական արմատների պարզաբանումը։ Մեր պրոպագանդան անհրաժեշտորեն պարունակում է նաև անաստվածության պրոպագանդան...» (նույն տեղը, էջ 599):

Իսկ ինչպես պետք է տարվի հակակրոնական պրոպագանդան։ Հակակրոնական պրոպագանդայի բովանդակությունը սպառիչ կերպով բնորոշված է Լենինի և Ստալինի ցուցումներում և այդ հարցի վերաբերյալ կոմունիստական պարտիայի ընդունած որոշումներում։

«... կրոնական մշուշի իսկական պատմական և անտեսական արմատների պարզաբանումը—ահա թե ինչ էր ամենից առաջ պահանջում Լենինը հակակրոնական պրոպագանդայից։ Թուրաքանչյուր հակակրոնական պետք է կարողանա խելացիորեն, պարզ և հասարակ կերպով ապացուցել հավատացյալներին, թե կրոնը ինչ որ գերբնական բան չէ, այլ որ նա երկրային երեսությ է, որն անխուսափելիորեն աճում է դասակարգային, շահագործողական հասարակության հողի վրա։ Հակակրոնական պրոպագանդան պետք է բացահայտի կրոնի դասակարգային դերը, կրոնական կազմակերպությունների ռեակցիոն բնույթը։

Մյուս կողմը, որը չպետք է մոռանալ հակակրոնական պլուտագոնադայում,—դա կրոնի հակադիտական բնույթի մերկացումն է։ Ցույց տալ և ապացուցել հավատացյալին, որ առմեն մի կրոն գիտությանը հակադիր բան է» (Ստալին)։ Դա հակակրոնական պրոպագանդայի կարևորագույն խնդիրն է։ Պետք է ցույց տալ, թե կրոնը պայքարում է իսկական գիտության դեմ, գիտություն, որն օգնում է բանվորներին և կոլտնտեսականներին կառուցել սոցիալիզմը։ Պետք է ցույց տալ, թե կրոնը փորձում է ամրացնել մեր կինցաղի, կյանքի և անտեսության մեջ մնասակար, գիտությանը հակասող կանոնները։ Դա առանձնապես երեսում է գյուղատնտեսությունից առաջ օրինակներից, վերցնենք թեկուղ հենց հավատը դեպի աղոթքները, մաղթանքների, նշանների ուժը և այլն։

Մեր իրականության վաստերի վրա կարելի է համոզեցուցիչ կերպով ցույց տալ թե ինչպես սոցիալիստական գիտությունն օգնում է աշխատավորներին երջանիկ ունեող կյանք կառուցել վերափոխել և իրեն ենթարկել բնությունը, իսկ կրոն նը անկուլտարականության, տգիտության, բարբարոսության և շահագործման է մատնում մարդկությանը։ Գյուղատնտեսության նվաճումները ՍՍՌՄ-ում, կոլտնտեսականների ուներության աճը, միլիոնատեր կոլտնտեսությունները, Միջուրինի, Լիսենկոյի, Տիցիբանի փայլուն նվաճումները, այդ բոլորը համոզեցուցիչ փաստարկումներ են կրոնի դեմ պայքարելու գործում։ Հակակրոնական պրոպագանդան պետք է այնպես տանել, որպեսզի նա օգնի կոմունիզմի համար մղվող պայքարին, որը վարում են գիտակեցից աշխատավորները կոմունիստական պարտիայի դեկալարությամբ։

Օրինակ, ոմանք կարծում են, թե ընդհանրապես կրօնի վրա երկար ու բարակ մտածելու կարիք չկա, պետք է հրատարակել կրոնական ծիսակատարություններն արգելող մի օրենք, և կրոնին վերջ կտրվի։

Այդ տեսակետը սխալ է և վանդագոր։ Դեռ պարտիայի XII համազումարը որոշեց՝ «Անհրաժեշտ է վերջնականապես վերացնել կրոնական նախապաշարմունքների դեմ վարչական միջոցներով պայքարելու ամեն տեսակի փորձերը», եկեղեցիների բռնի փակումը խանգարում է կրոնական նախապաշարմունքների հաղթանականը։ Այնտեղ, որտեղ եկեղեցիները փակված են, բայց մնացի են շատ հավատացյաներ, կրոնական հերն իրենց աշխա-

տանքը տանում էն ծածուկ, քողարկված կերպով։ Նբանք տանն էն կատարում ծիսակատարումները և ժամերգությունները։ Հաճախ տերտերների փոխարեն ժամերգությունները կատարում են իրենք հավատացյալները, երբեմն մինչև անդամ կանայք։ Առաջ են գալիս «շրջիկ տերտերներ», որոնք զբում են գյուղից գյուղ և խմբովին կնքում ծնված երեխաներին, վաղուց արդեն մեռածների թաղման ծեսը կատարում և այլն։ Հետեւապես կրոնի դեմ պայքարելու գործում բռնի միջոցները ոչ թե օդուտ է տալիս, այլ վսաս։

Կրոնի դեմ պայքարելու գործում պետք է խուսափել նաև հավատացյալի կրոնական զգացմունքները ծաղը ու ծանակի ենթարկելուց։ Հակակրոնական պրոպագանդայում այդպիսի եղանակը բացի վնասից ոչինչ չի կարող տալ։ Հավատացող մարդը կը ըստունի դա որպես վիրավորանք և երես կդարձնի հակակրոնական պրոպագանդայից։

«Դիտավորյալ կոպիտ պրիոնները,—ասում է Համ Կ(բ)Պ XII համագումարը,—... ծաղրանք է հավատի և պաշտամունքի առարկաների նկատմամբ, փոխարեն լուրջ վերլուծմանը և բացատրությանը, չեն արագացնում, այլ դժվարացնում են աշխատավոր մասսաների ազատագրումը կրոնական նախապաշարմունքներից»։

Հակակրոնական պրոպագանդան գյուղում պետք է կրի հանգիստ, զգուշ զրույցի, լսողների գիտակցության վրա խորացրած պրոպագանդիստական աղեցեցության բնույթ։

Պետք է հիշել հակակրոնական պրոպագանդայի հարցի վերաբերյալ ընկեր Ստալինի կողմից կոմսոմոլին տված ցուցումը։ Այդ ցուցումը գրված է Համ ԼկեՄ ծրագրում։ Նա ասում է «Համ ԼկեՄ-ը համբերատար կերպով պարզաբանում է երիտասարդությանը սնոտիապաշտության և կրոնական նախապաշարմունքների վնասը, այդ նպատակով կազմակերպելով հատուկ խըսքակներ և դասախոսություններ հակակրոնական պրոպագանդայի գծով»։

Կրոնի դեմ հաջող պայքարելու համար պետք է ճանաչել թշնամուն, տեղյակ լինել նրա ուսակցիոն գործունեության մեռողներին և ձեռքին։

Վերջին ժամանակներս պաշտամունքի սպասավորների շարքերում որոշակի պարզել են երկու խմբեր։ Մեկ խումբը՝ դրանք այն մարդիկ են, որոնք ակտիվ պայքարում են սոցիալիզմի դեմ, ժողովրդի թշնամիները, մյուս խումբը՝ հարմարվող կանոնադրության վերաբերյալ շահատավորներին ըստ կրոնական հատկանիշի, գրգռել հավատացյալներին ոչ հավատացյալների դեմ, թուլացնել աշխ-

դիկ, որոնք սոցիալիզմի հաղթանակների ազգեցության տակ ձգտում են այս կամ այն կերպ պահպանել իրենց ազգեցությունը և դրա համար էլ հարմարվում են նոր իրազբությանը։ Պաշտամունքի որոշ սպասավորներ, հատկապես հոգևորականության ստորին շարքերից, փորձում են, օրինակ, հարապարակորին անջատվել եկեղեցու վերին խավերից, մատնանշելով, թե իր եպիսկոպոսներն ու մետրոպոլիտները ժողովրդի թշնամիներն են, իսկ շարքային հոգևորականությունը՝ կոմունիզմի կողմանակիցներ։ Մի քանի տերտերներ անվերջ դիմում են Սովետական իշխանության մարմիններին՝ երեխաների, երիտասարդության և աշխատավորների դաստիարակության սպասարիզում ամեն տեսակի ծառայությունները մատուցելու իրենց առաջարկություններով։

Սովետական իշխանության պայմաններին հարմարվելու տեսնդենցները տեղի ունեն կրոնական ամենատարբեր կազմակերպություններում՝ քրիստոնեական, հրեական, մուսուլմանական և այլն։

Ուշադրության է արժանի նաև տերտերականության կողմից տարվող գիծը՝ եկեղեցական-աղանդավորական ակտիվի շարքերում ներգրավելու սովետական ազնիվ մարդկանց—կոլտնտեսականներին, հարվածայիններին, ստախանովականներին։ Օրինակ, կիսկի մարզի Պիշչիկա և Բեզուգլյանկա գյուղերում կրոնավորները փորձել են ներգրավել իրենց շարքերը ստախանովական-կոլտնտեսուհիներին։

Մեր խնդիրներն այն են, որպեսի մերկացնենք կրոնավորների խորամանկ մանյովըները, ցույց տանք հավատացյալներին, թե պաշտամունքի սպասավորների հարմարվածությունը հանդիսանում է ոչ ավելի, քան ճարպիկ մի պրիում, որի նպատակն է խաբել հավատացյալներին, թթացնել նրանց ուսուցիոն զգնությունը։ Մենք պետք է ցույց տանք հավատացյալներին, թե կրոնական կազմակերպություններն ու պաշտամունքի սպասավորները չեն կարող կոմունիզմի իսկական կողմանակիցներ լինել, ինչքան էլ որ դրա համար նրանք պատեպատ ընկնեն։ Յուրաքանչյուր կրոն ուսակցիոն է, յուրաքանչյուր տերտեր հանդիսանում է խավարամոլ և ըստ էությամբ Սովետական իշխանության թշնամի, աշխատավորներին թշնամի։ Յուրաքանչյուր կրոնական կազմակերպություն իր գործունեությամբ ձգտում է ջատակ աշխատավորներին ըստ կրոնական հատկանիշի, գրգռել հավատացյալներին ոչ հավատացյալների դեմ, թուլացնել աշխ-

տավորների ուժը կոմունիզմի համար մղվող պայքարում, ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարում, կապիտալիստական շրջապատման դեմ մղվող պայքարում:

Այժմ տեղի են ունենում կրօնական կազմակերպությունների քայլքայումը, որն անդրագանում է նրանց կազմակերպական կառուցվածքի վրա: Այդ կառուցվածքը փոփոխվում է եկեղեցական և աղանդավորական կազմակերպությունների ավելի ու ավելի մասնատվելու և մանրանալու ուղղությամբ: Հակայական, հուժկու և ցարիզմի պայմաններում իշխող ուղղափառ եկեղեցին այժմ ունի բավականին խղճուկ պատկեր: Պաշտամունքի տասնյակ հազար սպասավորներ՝ ահա այն ամենը ինչ մնացել է եկեղեցու վաղեմի հզորությունից, Բայց չէ որ հին ժամանակ եկեղեցականներն իրենց շարքերում ունեին 295 հազար սկզբանականներ: Մանրատվածության պրոցեսն առանձնապես վերջերս ուժեղ կերպով ընդգրկեց աղանդավորական կազմակերպությունները:

Եկեղեցու և աղանդավորական կազմակերպությունների քայլքայման պրոցեսում մի շարք տեղական համայնքներ ծագում և անհետանում են որպես սապոնի պղպջակներ: Նրանց սահմանները շատ հաճախ մի գյուղի շրջանակից գորոս չեն գալիս:

Այդ աղանդների հիմնադիրները մեծ մասամբ հանդիսանում են թշնամական տարրեր՝ շահակործողական դասակարգերի մասցուկները: Նրանք ձգուում են ստեղծել կրօնական կազմակերպություններ, ներդրավել նրանց մեջ հավատացյալ աշխատավորներին և նրանց օգտագործել իրենց վնասարարական շահերի համար:

Կրօնական կազմակերպությունների բնորոշ գիծը նաև այն է, որ նրանք գնալով ավելի ու տվելի սկսում են յուլա գնալ առանց տերտերների, առանց պաշտամունքների պաշտոնական սպասավորների, ըստ որում կրօնական պաշտամունքի կատարումը չի կապվում անպայման եկեղեցու առկայության հետ, այլ կատարվում է տանը: Այսպես, օրինակ՝ Դնեպրոպետրովսկի մարզի Պավլովկա գյուղում եկեղեցին փակված է և տերտեր չկա: Բայց տերտերի փոխարեն այստեղ գործում է եկեղեցական խորհրդի նախկին անդամը, որն իր տանը կատարում է մաղթանքներ, ծեսեր և այլն: Կիեվի մարզում, Սանժարիխա գյուղում, մենատնտեսուհին իր խրճիթում կատարում է պատարագ և մաղթանքներ, ըստ որում այդ բոլորը նա կատարում է տերտերի լրիվ

գգեստներով: Նույն կիեվի մարզի Սինյավա գյուղում կոնտրակուլյոցին տերտերի ձերբակալումից հետո քահանայի պարտականությունը վերցրեց իր վրա տերտերակինը: Նա ծառայում է եկեղեցում, խոստովանություն է ընդունում, կատարում է հաղորդություն և պատակադրություն, արարողություն և այլն:

Կրօնական կազմակերպությունների գործունեության նոր ձևերի այդ անցումն անհրաժեշտ է հաշվի առնել հակակրոնական պրոպագանդայի ժամանակ: Դեռք է հիշել, որ եկեղեցու փակումը և տերտերի վերացումը գեռ չի նշանակում, թե վերացված է նաև կրօնական կազմակերպությունը: Երբեմն այդ կազմակերպությունը շարունակում է իր գոյությունը, ընդունելով միայն այլ ձևեր, այլ տեսք:

Կրօնական կազմակերպությունների գործունեության հետեւյալ բնորոշ գիծն այժմյան էտապում՝ դա պաշտամունքի պարզեցման փորձերն են: Ժամերգություններն այժմ ոչ բոլոր տեղերում են կատարվում այն ձևերով, ինչպես նրանք կատարվում էին առաջներում և ինչպես նրանք շարադրված են ժամագրերում: Պաշտամունքի սպասավորները ձգտում են պարզեցնել ժամերգությունները, դուրս են գցում շատ բան նրանից, որը ներկայիս պայմաններում բացահայտորեն անհեթեթ է հընչում: Այսպես, օրինակ, մի քանի տերտերներ թաղումները կատարում են հեռակայորեն վերցնում են մի բուռ հող, կատարում են նրա վրա թաղման արարողությունը, իսկ այնուհետև այդ հողը տարվում է գերեզմանի վրա: Նույնպես կատարվում է մկրտության ծիսակատարությունը: Տերտերն օրինում է ջուրը, այդ ջուրը շշի մեջ տալիս է ծնողներին, իսկ նրանք իրենք թրջելով երեխայի գլուխը, համարում են մկրտությունը կատարված: Պատակադրությունն էլ հեռակայորեն է կատարվում, առանց երիտասարդների ներկայությանը: Տերտերը կատարում է ծիսակատարությունը նշանադրության մատանիների վրա, որը հետագայում կրում են երիտասարդները:

Պաշտամունքի այդպիսի պարզեցումն ուղղափառ եկեղեցուն մոտեցնում է աղանդավորական կազմակերպության, նա նպաստում է նաև կրօնականների միավորմանը՝ նրանց համատեղ հակասովետական գործունեության համար:

Զպետք է աշքաթող անել մի շատ կարեռ գիծ ևս:

Հակասովետականորեն տրամադրված տերտերականությունը ձգտում է այժմ ամեն կերպ ընդհատակ անցնել, ծածկել Սովետական իշխանությունից և աշխատավորությունից իր ստոր

գործունեությունը։ Այդ ձեր խավարամոլները փորձում են կազմակերպիլ ընդհատակյա եկեղեցիներ և վանքեր, հավաքագրում են միանձնուհիներ մոլունգորեն տրամադրված կանանցից, ձեռնադրում են նրանց։ Մի խոսքով խիստ կոնսպիրացիայի են ենթարկում իրենց ամբողջ գործունեությունը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ հանձնն նման ձեր կրոնական կազմակերպությունների մենք հանդիպում ենք կոնտրունշտին ըների։

Այդպիսով, կրոնական բանակում կատարվում են որոշ պրոցեսներ՝ եկեղեցական աղանդավորական կազմակերպությունների քայլքայման, նրանց կազմակերպական կառուցվածքի փոփոխման ուղղությամբ։ Մեր խնդիրներն այն են, որպեսզի հետևենք այդ պրոցեսներին, ուսումնասիրենք դրանք, տեղյակ լինենք կրոնականների գործունեությանը։ Հակակրոնական պրոպագանդան պետք է նպաստի կրոնական կազմակերպությունների քայլքայմանը, արագացնի այդ պրոցեսը, ձգտի մեկուսացնել եկեղեցականներին հավատացյալ աշխատավորներից, հավատացյալների առաջ մերկացնի կրոնական կազմակերպությունների ռեակցիոն, կոնտրունշտին զերը։ Այդ ամենը կարևոր է առանձնապես այժմ, երբ պետք է տեղի ունենան աշխատավորների գեղուտատների սովետների ընտրությունները։ Ուեակցիոն հոգեորականությունն անշուշտ կփորձի մորթիվացիայի ենթարկել հավատացյալներին նրա համար, որպեսզի հենվելով նրանց կրոնական նախապաշտունքների վրա, խցկեն սովետների մեջ իրենց հովանավորյալներին «աստծուն հաճելի մարդկանց»։ Զանազան տեսակի «ուխտավորներ», «մարդարեներ», «սրբեր» ագիտացիա կտանեն այդ ուղղությամբ։ Պետք է ժամանակին հաջվի առնել այդ հանգամանքը և մերկացնել տերտերականությանը և նրա աղենտներին։ Իսկ թշնամուն ճանաչելու, նրա գործունեությանը տեղյակ լինելու համար, պետք է ինչպես հարկն է կազմակերպել հակակրոնական աշխատանքը հավատացյալ աշխատավորների մեջ։ Միայն գործնական աշխատանքում, հակակրոնական պրոպագանդայի ընթացքում, զասախոսություններում, զրույցներում, հավատացյալների հետ խոսելիս մենք կարող ենք ուսումնասիրել կրոնականների գործունեությունը և համապատասխան ձևով օպերատիվ կերպով կառուցել մեր հակակրոնական աշխատանքը։

## ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ, ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԱՅՑՈՒՄ

Խրճիթ-Ընթերցարանի և կոլտնտեսային ակումբի աշխատողները պետք է ամենից առաջ հիշեն, թե կրոնական նախապաշտունքների գեմ մղվող պայքարը մեծ և պատասխանատու գործ է, որը պահանջում է ամենառոշադիր վերաբերմունք։

Կրոնական մասցուկների գեմ հաջող պայքարելու համար, մեր աշխատողները չպետք է սահմանափակվեն միայն հակակրոնական պրոպագանդայի հատուկ ձևերով և պրիորներով։

Խրճիթ-Ընթերցարանը կամ կոլտնտեսային ակումբը իրենց լուսավորական աշխատանքները պետք է կապեն հակակրոնական պրոպագանդայի հետ։

Իերենք մի քանի օրինակներ։

Յուրաքանչյուր խրճիթ-Ընթերցարան անց է կացնում թերթերի բարձրաձայն ընթերցանություն և բացատրական աշխատանք է տանում ընթերցածի մասին։ Ընթերցողը լայն հսարավորություն ունի այդ ընթերցանություններն օգտագործել նաև հակակրոնական պրոպագանդայի համար։ Ընթերցանության համար պատրաստվելիս, թերթը աչքի անցկացնելով և նշելով իր համար, թե ինչ պետք է ընթերցի և ինչի մասին տանի զրույցը, ընթերցողը պետք է նշե և այն նյութը, որն ամենահաջող կերպով կարելի է օգտագործել կրոնի զեմ։ Օրինակ՝ թերթերում հաղորդվում է Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսի մասին, այն մասին, թե ինչ էքսպոնատներ են այնատեղ ցուցադրվում, թե որ կոլտնտեսություններն են աճեցրել նրանց։ Խրճիթ-Ընթերցարանն ունի բոլոր հնարավորությունները այդ հաղորդվումների շուրջը մեծ հակակրոնական աշխատանք ծավալիլու համար։ Ցուցահանդեսն ակնառու կերպով ցույց է տալիս սովետական հասարակարգի հզորությունը, որի ժամանակ շահագործումից ազատ գյուղացիներն առանց աստծու երջանիկ կյանք են կառուցում։ Նախկինում, տերտերների, եկեղեցիների թագավորության մեջ, գյուղացին սովոր էր, տանջվում։ Այժմ նա ապրում է ուներ կյանքով։ Ցուցահանդեսը, կողեկտիվ աշխատանքի, գիտության, տեխնիկայի հիման վրա կառուցվող սոցիալիստական գյուղատնտեսության ուշագրավ հաջողություննե-

ըի ցուցանիշն է: Հակակրոնական հետևողյունների համար ցուցահանդեսը շատ հարուստ նյութեր է տալիս:

Կազ թե, օրինակ, թերթում հաղորդվում է Զավոլժիկ ան-  
ջղի-չորային գաշտերը ոռոգելու նպատակով Վոլգայի վրա  
կատարվող ամբարտակների շինարարության մասին: Ինչու կանգ  
չառնել այդ փաստի վրա և չպատմել, թե ինչպես փոխանակ  
մաղթանքների և թափորների Սովետական իշխանությունը և  
կոլտնտեսային գյուղացիությունը պայքարում են երաշտի դեմ,  
հենվելով գիտության և աշխատանքի վրա: Այստեղ հենց կարելի է  
ցարական, եկեղեցական Ռուսաստանի անբերություններին հա-  
կազմել սոցիալիստական դաշտերի առատ բերքերը:

Խրճիթ-ընթերցարաններին կից տրվում են դասախոսու-  
թյուններ զանագան թեմաների շուրջը, գիտական, գյուղատնտե-  
սական և այլն, աշխատում են բաղմաթիվ խմբակներ և այլն:  
Անհրաժեշտ է փորձված հակակրոնական աշխատողների հետ  
մանրկրկիտ ստուգել այդպիսի խմբակների ծրագրերը, դասախո-  
սությունների թեղիսները և հագեցնել նրանց նույնպես հակակրո-  
նական բովանդակությամբ: Որեէ թեմայի շուրջը ցուցահանդես  
կազմակերպելիս, խրճիթ-ընթերցարանների աշխատողները պետք  
է մտածված ձեռվ կազմեն ցուցահանդեսի պլանը այնպիս, որ  
ցուցահանդեսի նյութերն օգտագործվեն նաև հակակրոնական  
նպատակների համար և, հասրավորին չափ, լրացնեն ցուցահան-  
դեսը հատուկ հակակրոնական նյութով: Եվ այսպես սովետական  
գյուղի քաղաքական-լուսավորական աշխատողներն իրենց բոլոր  
աշխատանքներում չպետք է բաց թողնեն և ոչ մի դեպք ու ա-  
սիթ կրոնի դեմ հանդես գալու համար:

Իսկ ինչ ձեռքով ավելի լավ է հակակրոնական պրոպագան-  
դան տանել կոլտնտեսային ակումբներում, խրճիթ-ընթերցա-  
րաններում:

Ամենից պարզ ու մատչելի ձեռ հանդիսանում է հակակրո-  
նական դրականություն, թերթերի ու ժողովների բարձրաձայն  
ընթերցանությունը:

Նա, ով կազմակերպում և անցկացնում է ընթերցանու-  
թյունը, պետք է վազորոք նախապատրաստվի դրա համար, այ-  
սինքն նշի շարք հետաքրքիր, կոլտնտեսականներին հուզող  
հարցեր, որոնք մտքերի փոխանակություն կառաջացնեն:

Պետք է ընթերցանության համար նախատեսնված թերթը  
կամ գրքույկը վազորոք ընթերցողը ինքը կարդա, նշի նրա մեջ

այն տեղերը, որոնց վրա պետք է կանգ առնենք զբույցը ծավա-  
լելու համար:

Նշել և այն հարցերը, որոնց վերաբերյալ պետք է զրույց  
տարվի: Պետք է նշել այնպիսի հարցեր, որոնք կհետաքրքրեն  
կուսանտեսականներին և մտքերի փոխանակություն կառաջացնեն:  
Ընթերցանությունն ու զրույցն աշխույժ անցկացնելու համար  
այդ հարցերը պետք է կապել տեղական կյանքից, իրենց կոլ-  
տնտեսականների կյանքից վերցրած փաստերի և օրինակների  
հետ, ցույց տալ տեղական հոգեւորականության գործունեությու-  
նը, լսողների մեջ հուշեր առաջացնելու համար օրինակներ բե-  
րել անցյալի կյանքից:

Ընթերցանության վայրը գյուղում մեծ մասամբ լինում  
են՝ կարմիր անկյունը, կոլտնտեսային ակումբը, խրճիթ-ընթեր-  
ցարանը:

Բայց պետք է ընթերցանություններն անցկացնել և այն-  
տեղ, որտեղ ընդհանրապես հավաքվում են կոլտնտեսականները,  
օրինակ. աշխատանքի վայրում՝ ճաշվա ընդմիջումի ժամանակ,  
ճաշարանում ճաշեց կամ ընթրիքից հետո և այլ վայրերում: Հա-  
ջող են անցնում ընթերցանությունները և տանը, այս կամ այն  
ակտիվիտետ-կոլտնտեսականների մոտ, որի հետ վազօրոք պայ-  
մանավորվում են ընթերցանության մասին և այն մասին, թե  
ում պետք է հրավիրել զրույցի համար:

Ի՞ոչ կարդալ կարդալու համար շատ նյութ կա: Ամենից  
առաջ պետք է օգտագործել „Բեզօյնիկ“ թերթը, որը պարբե-  
րաբար լույս է տեսնում ամսական Յ անգամ: Նրա մեջ տպա-  
գրվում են շատ հանրամատչելի հոդվածներ, դիտողություններ,  
գեղարվիստական պատմվածքներ հակակրոնական թեմաների  
շուրջը:

Պետք է օգտագործել նաև „Բեզօյնիկ“ ժուռալը, որը  
լույս է տեսնում ամեն ամիս: Ընթերցանությունների հա-  
մար հաջողությամբ կարելի է օգտագործել հակակրոնական գրք-  
քույկներ, օրինակ՝ Յարուսավակներ, «Ինչպես են ծնվում, ապրում  
և մեռնում աստվածները» կամ «Աստվածաշունչ հավատացյալ-  
ների և ոչ հավատացյալների համար», Степанов-Сևորցով —  
„Օ ուրաքանչ և ուրաքանչ վեր“, „Օ տանտես սուրբություն-  
ության համար Պետական հակակրոնական հրատարակչության կող-  
մից լույս ընծայված ժողովածուների մեջ:

Հակակրոնական աշխատանքի գործոն ձեզ հանդիսանում է դասախոսություն-զեկուցումը: Դասախոսության համար, ի հարսկե, հակակրոնական որակալա աշխատող է պահանջվում: Նրան կարելի է ըրավիրել շրջանային կենտրոնից: Բայց դա ոչ բոլոր դեպքերում է հաջողվում: Այդ պատճառով էլ կոլտնտեսային ակումբի, խճիթ-ընթերցարանի խնդիրն այն է, որ պարտիական կազմակերպության օգնությամբ պատրաստի իր դասախոսներին և զեկուցողներին: Դրա համար պետք է օգտագործել տեղական ինտելեկտիվներին: Գյուղատնտեսը, ուսուցիչը, բժիշկը, ծանոթանալով հակակրոնական դրականության հետ, կարող է այդ թեմայի շուրջը դասախոսություն կարդալ կամ թե զրույց անցկացնել: Օրինակ՝ ուսուցիչը կարող է դասախոսություն կարդալ հետեւյալ թեմաների շուրջը: «Մարդու ծագման մասին» «Ստեղծված է արդյոք աշխարհը աստծու կողմից», գյուղատնտեսը հետեւյալ թեմաների շուրջ: «Ինչից է առաջ գալիս անձրև», «Ինչով է մնասակար կրոնը զյուղատնտեսության համար», բժիշկը հետեւյալ թեմաների շուրջ: «Բժշկությունը և կրոնը», «Սնուիապաշտությունների, նշանների և երազների մասին»: Տեղի պարտիականը կարող է կարդալ դասախոսություն հետեւյալ թեմաների շուրջը. «Ստալինյան Կոնստիտուցիան և կրոնը», «Ում է օգտակար և ում մնասակար կրոնը» և այլն:

Տեղական կուլտուրական ուժերի այսպիսի օգտագործման դեպքում կոլտնտեսային ակումբը, խճիթ-ընթերցարանը կարող է հակակրոնական թեմաների շուրջը սիստեմատիկ դասախոսական աշխատանք կազմակերպել: Տեղական հակակրոնական. դասախոսները առանձնապես արժեքավոր են և այն պատճառով, որ նրանք ավելի լավ են ճանաչում իրենց շրջապատող մարդկանց, գիտեն, թե ինչ ոնահավատություններ և նախապաշարմունքներ են ապրում իրենց շրջապատող հավատացյալ մարդկանց գիտակցության միջ, ինչպես են գործում հողեռականները և աղանդավորները: Տեղական դասախոսը ամբողջ ժամանակ գտնըվում է այնպիսի մարդկանց շրջապատում, որոնց շրջանում նատանում է հակակրոնական պրոպագանդան: Նա զիտի, թե ով է կատարում կրոնական տոներ, ինչ մնաս են հասցըրել այդ տոները կոլխոզային տնտեսությանը: Հավատացյալների հետ տարվող իր աշխատանքում, տեղի դասախոսը կարող է հենվել այնպիսի փաստերի վրա, որոնք ավելի լավ են հասնում տերտիերների կողմից թմրեցված աշխատավորների զիտակցությանը:

Զեկուցումներն անցկացնելու ժամանակ որպես մեծ օժանդակություն ծառայում են սովորաբար պրոեկցիոն լամպերը, կինոն, դիտողական փորձերը: Կան մի շաբթ հակակրոնական ֆիլմեր, որոնք հաջողությամբ կարող են օգտագործվել որպես գեղարվեստական պարզաբանումներ հակակրոնական զեկուցումների համար: Օրինակ, կաթոլիկության մասին արվող զեկուցումը, կարելի է զուգակցել «Սուրբ Յորդենի տոնը» ֆիլմին, կուսակրոնության դերի և բարքերի մասին արվող զեկուցումը՝ «Խավարամուլության բնում» ֆիլմին, հակակրոնական պրոպագանդայի համար կարելի է օգտագործել նաև «Հուղար», «Կենդանի աստված», «Հակակրոնական թանգարանում», «Սևանի ձկնորսները» և այլ ֆիլմեր:

Հակակրոնական աշխատանքի հետաքրքիր ձև են հանդիսանում հարցերի և պատասխանների երեկոները Հարցերի և պատասխանների երեկոները լավ անցկացնելու համար, պետք է լավ նախապատրաստել այն: Զպիտք է սահմանափակվել միայն խըրճիթ-ընթերցարանում կամ ակումբում հայտարարություն տալով, այլ պետք է խճիթ-ընթերցարանի ակտիվի միջոցով նախօրոք լայնորեն տեղեկացնել բնակչությանը երեկոյի մասին:

Նախօրոք պետք հավաքել կոլտնտեսականներին ամենից շատ հետաքրքրող հարցերը, որպեսզի առաջին հերթին դրանց համար պատարաստվեն պատասխաններ: Այդ պայմաններում յուրաքանչյուր պատասխանը նոր հարց է առաջացնում և այդպիսով կարծիքների աշխատյժ փոխանակում է սկսվում: Կարելի է կիրառել և այսպիսի մեթոդ՝ յուրաքանչյուր արված հարցին զեկավարը առաջարկում է պատասխանի որևէ մեկին լսարանից: Դեկավարն ուղղում է պատասխանողներին, ցույց է տալիս, թե նրանց պատասխաններում ինչն է ճիշտ և ինչը սխալ: Առողիտուրիստի ակտիվությունը հայտնաբերելու իմաստով այդ մեթոդը շատ օգտակար է: Բայց պետք է հսկել այն բանին, որպեսզի հարցերի և պատասխանների երեկոն չվերածվի կրոնական դիսպուտի:

Որպես հակակրոնական պրոպագանդայի մեթոդ, դիսպուտը բոլորովին պետքական չէ: Նա չի նպաստում հարցի պարզաբանմանը, այլ զրոյում կրքերը:

Գեղարվեստական երեկոներ: Աշխատանքի այս ձեզ սովորաբար զործագրվում է միայն հակակրոնական կամպանիաների օրերին: Պատը է դեղարվեստական երեկոն կազմակերպել սիստե-

մատիկորեն, ըստ որում վազօրոք մշակված պլանով և ամենաշաղան թեմաների վերաբերյալ:

Հակակրոնական գեղարվեստական երեկոն նրանով է լավ, որ նա միշտ բնակչության մեջ մեծ հետաքրքրություն է առաջցնում և մեծ առողջապարիս հավաքում, նույն թվում և հավատացյաներ: Գեղարվեստական երեկոյի կազմակերպումը, ճիշտ է բավականին ուժեղ ու միջոցներ է պահանջում, բայց եթե կոլտնտեսության ակումբին, կամ խրճիթ-ընթերցարանին կից աշխատում են դրամատիկական, երաժշտության, երգեցիկ խմբեր, առաջապես գեղարվեստական երեկոներ կարելի է հեշտությամբ կազմակերպել:

Անա հակակրոնական երեկոների օրինակելի նյութերը \*).

1. ԳԼԵԲՈՎ, „Մարես“ պիեսը նկարագրում է տերտերների կոնտրակոլուցիոն դիվերսիոն աշխատանքը մեր օրերում: Պիեսն ունի 7 պատկեր և 16 գործող անձինք: Այդ պիեսի բեմադրումը պետք է ձևուարկի միայն այն դրամատիկական խմբակը, որն ունի ոչ միայն լավ կատարողներ, այլև բեմադրական միջոցներ (բեմ, բուտաֆորիս, գրիս): Պիեսը հրատարակված է ապակամիպով «Ծակուստվո» հրատարակչության կողմից, Մոսկվայում, 1938 թ. (ոռուսերեն լեզվով):

2. ԳՐ. ԳՐԱԴՈՎ, „Օվեչյա պկուր“ պիեսը նկարագրում է եկեղեցակաների հարժարվողականությունն ու վասարարական լրտեսական աշխատանքները կոլանտեսային գյուղում: Պիեսն ունի 3 արարված, 5 պատկեր և 7 գործող անձինք (5 կանացի գերեր և 2 տղամարդու): Բեմադրման համար պիեսը պարզ է, բարդ բուտաֆորիս չի պահանջվում և կարող է խաղացվել ամեն մի դրամատիկական խմբակի կողմից, որն ունի ոչ վատ կատարողներ: (Տես «Հակակրոնական պիեսներ» հավաքածուն (ոռուսերեն լեզվով) ՀԱԻՅ, 1938 թ., Մոսկվա, ինչպես նաև «Պիեսներ» ժողովածուն, Լենինգրադ, „Արևոտ“, 1938 թ., տիրաժ 10.000, ոռուս, լեզվով):

3. ԳՐ. ԳՐԱԴՈՎ, „Կոմ Լյուքյան“: Կատակերգություն տերտերների կոնտրուելուցիոն-լրտեսական գործունեության մասին: Գործող անձինք 6 հոգի, կահավորումը՝ կոլտնտեսային խրճիթ, տես «Եզնոյնիկ». Ժուլիոնալի 1937 թ. 9-րդ համարը, ինչպես նաև վերևում նշված «Հակակրոնական պիեսները» (ՀԱԻՅ) և «Պիեսներ» («Արևոտ»):

\* ) Հայերեն գրականության ցուցակը տես ՀՍՍՌ Պիտական Քրապալատի «Հակակրոնական դրամատիկան ցուցակը», 1939 թ.:

4. ԳՐ. ԳՐԱԴՈՎ, „Փոքրիկ կատակերգություն“, որը ցույց է տալիս աղանդավորների առաջնորդների տիպերն ու լըրտեսական գործունեությունը: Կահավորումը՝ սովորական սենյակ: Գործող անձինք՝ 4: Տես „Եզնոյնիկ“ ժուլիոնալի 1938 թ. № 2 և վերևում նշված «Հակակրոնական պիեսներ» ու «Պիեսներ» (ժողովածուները):

5. ՍՈՒԲԲՈՏԻՆ, „Շաբաթացյալների“, նոր սոցիալիստական լյանքի պայմանների աղղեցության տակ, կրոնից հեռանալու մասին: Գործող անձինք՝ 3: Կահավորումը՝ սովորական սենյակ: „Արևոտ“, 1938 թ., Մոսկվա:

Մի արարվածով պիեսներից յուրաքանչյուրը միջին հաշվով կիւլի 30—40 բոպե: Այսպիսով, այդ բեմադրությամբ կլրացվի երեկոյի առաջին բաժինը: Երկրորդ բաժնի ծրագիրը (մոտավորապես մեկ ժամ) պետք է կազմել հետևյալ նյութերի արտասանությունից և ընթերցումից:

ԿՈՐՈԼԵՆԿՈ, „Խա զամենի“: Պատմվածքը նկարագրում է ցարական խավար Ռուսաստանի կենցաղը: Հակադրվում է միշտ գիտական իմացությունները բութ անահավատությանը: Պատմվածքը կարդալը կտեսի 20—25 բոպե: Նրա մեջ կան շատ ծիծաղաշարժ տեղեր (Բացի Կորոլենկոյի երկերի ժողովածուից այդ պատմվածքն ամբողջությամբ տպագրված է նաև «Հակակրոնական պիեսներ» պըռզա» հավաքածուի մեջ, Պետական հակակրոնական հրատարակչություն, 1938 թ., Մոսկվա):

ԶԵԽՈՎ, „Կանուն“: Բնթերցումը կաբելի է անցկացնել երկուսով, առանց կոստյումների և գրիմի: Այդ պատմվածքն առաջցնում է անկեղծ ծիծաղ լսողների մեջ և նուրբ կերպով ծաղրում եկեղեցական ծիսակատարությունը (Տես Զեխովի երկերի ժողովածուն, ինչպես նաև «Հակակրոնական պիեսներ» հավաքածուն ոռուսերեն լեզվով):

ՍԵՐԱՖԻՄՈՎԻԶ, „Առողջապահություն“: Այդ պատմվածքը հակադրում է զյուղատնտեսի կողմից զեկավարվող տնտեսությունը տներտերով զեկավարվող գյուղացիական տնտեսության հետ: Համոզեցուցիչ կերպով ցույց է տրված, որ ոչ թե տերտերն է իր մաշթանքներով օգնում լավ բերք ստանալուն, այլ ագրոտեխնիկան և համառ աշխատանքը (Տես «Հակակրոնական պիեսներ» պըռզա» հավաքածուն):

ՍԵՐԱՖԻՄՈՎԻԶ, „Եղեցներ տարածությունում“: Փոքրիկ պատմվածքում նկարագրվում է տերտերի գաժանությունն ու լկտիությունը:

Գետանցի ժամանակ ընկղմելով հավակը և խեղդելով նրա մեջ դանվող ուխտավորներին, տերտերն իր սեփական փրկությունը բացարձում է «հրաշքով» (նույն տեղ):

ՍԵՐԱՏԻՄՈՎԻ, „ԵՍԻՆ“: Պատմվածքը ցույց է տալիս կալվածատիրական բռնացումը ցարական Ռուսաստանում և տերտերների լրտեսական գործունեությունը հօգուտ շահագործողների: Պատմվածքը կարգավոր կտեր 25—30 բոպե (նույն տեղ):

ԿԵՐԵՍԱՅԵՎ, „Օտեց Ճայօն“: Կուլակ Սադիլչի ընդհանուր նկարագրման մեջ մերկացվում է կուլակության ընդհատակայա, կոնտրուկուցիոն գործունեությունը սովետական գյուղում մինչ կոլեկտիվացումը: Պատմվածքը կարգավոր կտեր 15—20 բոպե (նույն տեղ):

ԿԵՐԵՍԱՅԵՎ, „Բ ստեպ“: Պատմվածքը հավատացյալ հնձվոր Նիկոլիտի ապրումների մասին, որը զործ է ունեցել կրոնական խարեցի և խարդախ «ուխտավորի» հետ (նույն տեղ):

ՆԵՎԵՐՈՎ, „Պօրօնօք“: Պատմվածքը նկարագրում է եկեղեցականների ագաճությունն ու ստորությունը (նույն տեղ):

ՆԵՎԵՐՈՎ, „Յոլոտոյ“: Նույն թեման, նույն տեղ:

ԳԼԵԲ ՌԻՍԵՆՍԿԻ, „Պատմական անահավատությունն ու աշխատանքն է: «Հակակրոնական գեղարվեստական հավաքածու», ՀԱԻԶ, 1936 թ., Մուկվա:

ՊՈՒՇԿԻՆ, „Сказка о попе и о работнике его Балде“ («Հեքիաթ տերտերի և իր Բալդի ծառայի մասին»):

ՇԵՎՉԵՆԿՈ, „Гимн чернин“, „Юродивый“, „Сон“.

ՆԵԿՐԱՍՈՎ. „Знахарка“, „Кому на Руси жить хорошо“ (համաձներ):

ՄԱՅԿՈՎԻԿԻ, „Товарищи-крестьяне, вдумайтесь раз хоть—зачем крестьянину справлять пасху“. „Ни знахарство, ни благодать бога—в болезни не подмога“. „Прошение на имя бога—в засуху не подмога“. „Ни знахарь, ни бог, ни слуги бога—нам не подмога“. „На горе беднякам, богатейшим на счастье и исповедники, и причастие“. „От примет кроме вреда ничего нет“.

ՅԱԿՈՒՔ ԿՈՒՍԻ, „На замке“, „Мужик“, „Дед колхозник“. Այդ բոլոր ստանավորները զետեղված են «Հակակրոնական պոեզիա» պրոզա հավաքածուում, ՀԱԻԶ, 1938 թ., Մուկվա:

Կարելի է նշել հակակրոնական երեկոյի ծրագրի հետևյալ օրինակելի պլանը:

## 1-ի ն թ ա ժ ի ն

1. Սերաֆիմովիչ—„Պոմուտավում“.
2. Զեխով—„Կանիլյուս“.
3. Բայանիստի ելույթը:
4. Նեկրասով—„Յնախարկա“.
5. Մայկովսկի—„Օտ պրատում քառական առաջարկությունը“.

## 2-ր դ թ ա ժ ի ն

1. Վերեսայով—„Վ ստեպ“.
2. Նեկրով—„Յոլոտոյ“.
3. Երգեցիկ խմբակի ելույթը, կամ բայան, կամ սոլո ելույցուղություն:
4. Պուկին—«Հեքիաթ տերտերի և իր Բալդի ծառայի մասին»:

5. Դեդ-բեզբոյնիկ—„Итоги поповской дороги“ („Անձնական ժողովում կատարման համար հանձնարարվում է սուսական ժողովում հեքիաթները, որոնք տալարված են «Հակակրոնավրդական հավաքածու» և «Հակակրոնական գեղարվեստական կամ պոեզիա և պոպուլյար կամ պուլպա»-ի, ինչու նաև «Անաստվածք» ժողովի 1938—1939 թ.թ. և այլ ժողովներում):

Կարելի է նաև օգտագործել հետևյալ երկերը, որոնք տպագրված են „Անձնական ժողովում կատարման համար հանձնարարվում է սուսական ժողովում հեքիաթները, որոնք տալարված են «Հակակրոնավրդական գեղարվեստական կամ պոեզիա և պոպուլյար կամ պուլպա»-ի, ինչու նաև «Անաստվածք» ժողովի 1938—1939 թ.թ. և այլ ժողովներում):

1. ԳՈՒԲՐՈՎԻՆ, „Գրույա“, պատմվածք, 1939 թ., և 2:
2. ԳՐ. ԳՐԱԴՈՎ, „Նովայ լուսու ցածր“, ստանավորներ,

1938 թ., և 1:

3. Օ. ՌՈՒԽՈՎԱ. „Պատմվածք, 1938 թ., և 1:
4. Ա. ԳՈՐԿԻ, «Մայր» (համաձայն), «Ֆումա Դորդիկ» (համաձայն),

1938 թ., և 5:

5. Բ. ԿՈՎԻՆԵՎ, „Մրոյ“, „Մոնաստիր և գորաք“, ստանավորներ,

1938 թ., և 8—9:

6. ՊՈՎՅԱԼՈՎԻԿԻ, „Մրոյ“ (համաձայն), 1938 թ., և 8—9:
7. „Մոնաստիր և գորաք“, ստանավորներ, կյանքից), 1938 թ., և 8—9:

Պատիք քեցը: Խըմիթ-ընթերցարանը ոչ բոլոր գեղարվերում է համարավորություն ունենալու հատուկ հակակրոնական պատիք թերթ լույս ընծայելու: Բայց անպայման պետք է մշտական հակակրո-

նական բաժին կազմակերպել պատի թերթում: Այդ բաժնում պետք է լուսաբանել անաստվածների ամենօրյա աշխատանքը: Տալիուստրացիաներ, կինդանի, գունադեղ հակակրոնական նյութեր տեղական թեմաների շուրջը, կրոնականների գործունեությունը մերկացնող տեղեկություններ և այլն: Նկարները կարելի է վերցնել „Եզրոյն“ գուռնալից: Բայց, ի հարկե, ավելի լավ է դրանք պատրաստեն տեղի նկարիչները տեղական թեմաների վերաբերյալ:

Անաստածի անկյունը: Անկյունի խնդիրն է՝ 1. գրավել կուտնտեսային ակումբ, խրճիթ-ընթերցարան հաճախողի ուղադրությունը, նրան նյութ տալ հակակրոնական հետեւթյունների համար. 2. ծառայիլ որպես մեթոդական անկյուն ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի հակակրոնական ակտիվի համար, հակակրոնական խմբակների համար, իսկ եթե խրճիթ-ընթերցարանին կից աշխատում է Մարտնչող անաստվածների միության բջիջը, ապա նաև բջջի համար:

Սովորաբար անաստվածի անկյունը բաղկացած է հակակրոնական պլակատներից, լոգունգներից, նկարներից, գրքերի ցուցադրումից, հարցերի և պատրասխանների համար ծառայող գրատախակից և այլն:

Շատ վատ է, որ անաստվածների շատ անկյուններ հազվագյուտ դեպքում են լրացվում նոր նյութով: Անաստվածի անկյունը հաճախ վեր է ածվում իր ձևի մի ինչ որ «պատկերակալի», փոշոտված, անհետաքրքիր: Դրանից խուսափիլու համար, պետք է անկյունի աշխատանքը կապել հակակրոնական խմբակի աշխատանքի հետ: Հենց որ խմբակի անդամները դասագրքով անցնեն որևէ թեմա, պետք է որ նրանք այդ թեմայի վերաբերյալ անաստվածի անկյունում իսկույն պատրաստեն պլակատներ, դիագրամներ, լոգունգներ: Անկյունում պետք է կազմակերպել Մարտնչող անաստվածների միության բջջի անդամների հերթափոխությունը: Հերթապահները պետք է հակակրոնական աշխատանքի խնդիրների շուրջը կոնսուլտացիաներ տան:

Եթե անաստվածի անկյան շնչքը թույլ է տալիս, ապա նրա մեջ կարելի է կուտակել թանգարանային ընույթ կրող այլ հաշկակրոնական նյութեր: Ընդհանրապես պետք է ձգտել չսահմանափակելու միայն հատուկ հակակրոնական նյութի ցուցադրումով, այլ միացնել այն գիտական հանրամատչելի նյութին:

Կարելի է ցույց տալ, թե ինչպես է գոյացել արեգակնային սիստեմը (պատրաստել անոթ), ինչպես է զարգացել կյանքը Երկ-

րի վրա: Անկյունում, ինքնագործ գործիքների և էքսպոնատների վրա անցկացնել պարզ փորձեր և այլն:

Լավագույն խրճիթ-ընթերցարանների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ այդ տեսակի փորձերն ու աշխատանքները պարզ գործիքների և էքսպոնատների պատրաստումը կարելի է հանձնարարել բարձր դասարանների աշակերտներին բնագիտության ուսուցչի ղեկավարությամբ, կամ թե անաստվածների ակտիվից հատուկ ընտրած խմբին: Ընդհանրապես անկյան աշխատանքի հանդեպ բավարար ուշադրություն ցրցաբերելիս նա կարող է մեծ ժողովրդականությունն ուվաճել կոլտնտեսականների մեջ և նշանակելի գեր խաղալ հավատացյաների միջև տարգող հակակրոնական լուսավորական աշխատանքում: Այդ աշխատանքի հաջողությունը ապահովված կլինի, եթե ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի վարչիչը անկյունում աշխատելու համար կարողանա առաջ քաշել այդ գործը սիրող, դրանով գրավող ակտիվիտ անաստվածի:

Էֆեկտուրսիաներ: Էֆեկտուրսիայի արժեքը նրա գիտողականության մեջ է: Էֆեկտուրսանուր հենց այդտեղ, տեղում ստանում է դիտողական հաստատում այն բանի, որի մասին խոսքերով ասել է նրանց դասախոսը:

Ինչպիսի էֆեկտուրսիաներ կարելի է կազմակերպել կոլտընտեսությունում: Էֆեկտուրսիանը զեպի մոտակա սովորական տնտեսությունը կամ գիտահետազոտական ազգունումիական հողամասը, խրճիթ-ընթերցարանը, էֆեկտուրսիա զեպի մոտակա էլեկտրոկայանը, էֆեկտուրսիա՝ զեպի վանք, եթե այդպիսին կա մոտակայքում, զեպի մոտակա թանգարանը և այլն:

Դեպի էլեկտրոկայան կազմակերպվող էֆեկտուրսիայի նպատակը կլինի մարդու հզորության դիտողական ապացույցը, տեխնիկայի նվաճումների ցուցադրումը և դրա օգնությամբ հրաշքեների մասին եղած կրոնական առասպելների և հեքիաթների ցըումը: Դեպի էլեկտրոկայան կազմակերպվող էֆեկտուրսիան դյուղացիների համար առանձնապես հետամնաց որոշ խավեր դեռ հավատում են եղիա մարգարեին և նրա «ամպլուպային նետերին»:

Էֆեկտուրսիան զեպի վանք՝ հարուստ նյութ կտա հոգեորականության դասակարգային գերի, շահագործական սիստեմի տնտեսավարության հայտնաբերման համար, կծանոթացնի էֆեկտուրսիայի մասնակիցներին հոգեորականության կենցաղին և բարքերին:

ԽՄԲԱԿԸ Խմբակը հանդիսանում է հակակրոնական պլրոպական կամ կամ կամ աշխատանքի հարմար մի ձև: Խմբակի նպատակն է տալ սիստեմատիկ հակակրոնական գիտելիքներ: Խմբակի մասնակիցների թիվը չպետք է մեծ լինի, 15—20 մարդ: Խմբակի մեջ պետք է ներդրավեն ոչ միայն անաստվածներին, այլև հավատացյալներին:

Ի՞նչ է պետք խմբակ կազմակերպելու համար:

Ամենից առաջ անցկացնել խմբակներում պարապելու ցանկություն ունեցողների զրառում: Ի հարկե, ցանկալի է, որ խըմբակի մեջ զրվեն շատ հավատացյալներ: Խմբակի մեջ մտնելու համար տարրվող ագիտացիային պետք է ներդրավել խրճիթ-ընթերցարանի ակտիվը:

Պետք է խմբակի համար ընտրել լավ գիտակ ղեկավար: Նու կարող է առաջ քաշվել պարտիական կամ կոմերիտական կազմակերպություններից, Մարտնչող անաստվածների միության քջիջից: Այդպիսի ղեկավար կարելի է ընտրել և տեղի մանկավարժներից: Եթե դժվար է ղեկավար ընտրել աեղի աշխատողաներից, այդ ղեկավում պետք է դիմել Մարտնչող անաստվածների միության ըլջանային կազմակերպությանը:

Ղեկավարը պետք է նորմ տանի խմբակի ծրագրի մասին, խրճիթ-ընթերցարանի կամ Մարտնչող անաստվածների միության բջջի օգնությամբ ճարի համապատասխան զրականություն և կազմակերպի խմբակի պարագմունքները:

Որպեսզի խմբակի պարապմունքները կազմակերպված անցնեն, անհրաժեշտ է ընտրել խմբակի ավագ կամ քարտուղար, նրա պարտականությունն է, ուսումնական պիտույքների մասին հոգալը. հաճախորդների և նրանց առաջարրությունների կատարման հաշվառումը:

Մենք արդեն մատնանշել ենք վերկում, որ պետք է կապակցել խմբակային աշխատանքը անկան աշխատանքի հետ:

Լավ է նաև, եթե խմբակի մասնակիցները ժամանակ առ ժամանակ բրիգադներում, գաշտային պայմաններում, ղեկավարի հսկողությամբ զրույցներ անցկացնեն: Դա կովորեցնի խմբակի անդամներին գործնական աշխատանքի: Խմբակի աշխատանքի համար որպես ուսումնական ձեռնարկ պետք է հանձնարարել «Հակակրոնական գասագիրք»:

ԱՆԱՏԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ: Այդ մեթոդը մեծ առա-

վելություն ունի այն տեսակետից, որ թույլ է տալիս մեզ հակարոնական պլրոպագանդայով ընդգրկել հավատացյալ մարդկանց, որոնց սովորաբար զժվար է զրավել հակակրոնական զրույցի կամ դասախոսության համար:

Ահա թե ինչ է պատմում հակակրոնականներից մեկը հավատացյալների հետ կատարած իր աշխատանքի մասին:

«Կարասութաղարի սովետական տնտեսությունում, Ղըմում, գասախոսությունից առաջ սովետական տնտեսության քաղաքացնի պետի տեղակալը խնդրեց ինձ զրուցել կրոնի մասին նրա զոքանչի—շատ հավատացյալ կնոջ հետ: Ես գնացի: Սկզբում նա ուղեց ծածկվել բայց փեսան ասաց, որ նա պետք է գնա կնոջ հետ և խնդրում է հյուրին թեյով հյուրասիրել: Պառավը մոտեցավ սեղանին և սկսեց թեյ պատրաստել Մենք մենակ մնացինք: Ես հարցրի, թե որտեղացի է նա: Նա ասաց, որ Տուլայից է: Ամուսինն աշխատում էր գործարանում, բայց վաղ մահացավ և նա փոքրահասակ երեխանների հետ շատ է տանջվել: Ես պատմեցի, թե ինչպես ինքս ամել եմ կարիքի և սովածության մեջ գյուղում: Երեխանները շատ էին, իսկ հայրս և մայրս՝ ձիազուրկ գյուղացիներ, բացի գյուղացիությունից ոչինչ չէին իմանում, աղքատ էին ավրում և միշտ աստծուց լավ կյանք խնդրում:

—Իսկ թե ինչպես էի աղոթում ես, արցունքներ թափում, բայց երեսում է, որ իմ աղոթքը հաճելի չէր աստծուն,—ընդհատեց նա:

—Իսկ քանի, քանի չքավորներ ինչպիսին եք դուք և իմ հարազատները աղոթում էին գառն արցունքներով և նույնպես ապարդյուն: Իսկ ահա այժմ ես չիմ աղոթում և վատ էլ չիմ ապարում: Վատ չեն ապրում և ձեր աղջիկն ամուսնու հետ: Իսկ նրանք էլ չեն աղոթում: Եվ բանվորներն ու գյուղացիները մեր Սովետական Միության մեջ շատ ավելի լավ են սկսել ապրել նախկինի համեմատ, ոչ թե աղոթքի շնորհիվ, այլ շնորհիվ նոր աշխատանքային կյանքի կազմակերպմանը՝ սոցիալիստական իրավակարգի, կոմունիստական պարտիայի, նրա առաջնորդների, որոնք նույնպես չեն աղոթում, ասածուն չեն հավատում, և պայքարում են կապիտալիզմի այդ մնացորդների դեմ, որոնք խանգարում են նոր կյանքին: Ես պատմեցի նրան կենքին և Ստալինի վերաբերմունքի մասին գեպի կրոնը, բացարեցի կրոնի ծագումը: Պառավը ասաց, որ կենքին և Ստալինին նա սիրում է, բայց հավատում է աստծուն, առաջվա նման աղոթում է և

կարծում է, որ առանց աստծու ապրել չի կարելի, թեկուզ և տեսնում է, որ նոր կյանքը կառուցվում է առանց աստծու, և նրա աղջիկն ամուսնու հետ չեն հավատում աստծուն: Այդ ժամանակ ես հրավիրեցի նրան գալ ակումբ իմ դասախոսությանը: Մկրտում նա հրաժարվում էր, ասելով, որ ակումբ չի գնում և որ առանց այնէլ նա սարսափում է, որ ինձ հետ խոսքով ընկավ, ասոված նրան կպատժի գրա համար:

Այդ ժամանակ աղջիկը փեսայի հետ վերադարձան և ինձ հետ միասին սկսեցին համոզել մորը դասախոսության գնալ: Նա համաձայնվեց գալ մի տայախանով, որ իսկույն կհեռանա, եթե նրան դուք չգա: Դասախոսության ժամանակ նա նստած էր իր աղջկա կողքին և ամբողջ ժամանակ ինչ որ բան էր ասում նրա ականջին: Նստեց նա մինչև վերջ, մինչև որ ես չպատասխանեցի բոլոր տված հարցերին: Դասախոսությունից հետո ես հարցրի աղջկան, ինչի մասին էր խոսում նրա ականջին մայրը:

—Մայրս անձանաչելի էր, նա ամբողջ ժամանակ համաձայնվում էր ձեզ հետ և կրկնում իմ ականջին «Ճիշտ է, ճիշտ, ինչպես այդ բոլորը ճիշտ է: Ինչքան ես տգետ ես: Այժմ ես կլսեմ ձեզ և խելոք մարդկանց, դասախոսությունների կդնամ»:

Կոլտնտեսային ակումբի, խրճիթ-ընթերցարանի ինչիրը այն է, որ հսկի այդպիսի ազիտատորների աշխատանքին, հաճախակի նրանց հավաքի, քննարկի, թե ինչպես է ընթանում նրանց մոտ աշխատանքը, խորհուրդներ և ցուցումներ տա նրանց:

\* \*

Կրոնի դեմ հաջողությամբ պայքարելու համար՝ յուրաքանչյուր կոլտնտեսային ակումբ, խրճիթ-ընթերցարան պետք է սիստեմատիկորեն ուսումնասիրի եկեղեցականների և աղանդավորների գործունեությունը: Առանձնապես պետք է հսկել կրոնավորների կողմից Ստալինյան կոնստիտացիան աղավաղելու և սովետների մեջ խցկվելու փորձերին:

Շատ կարենոր է, որ կոլտնտեսային ակումբը, խրճիթ-ընթերցարանը իրենց շուրջը հավաքեն և ստեղծեն հակակրոնական ակտիվ: Առանց ակտիվի օգնության ակումբի վարեհը և խրճիթ-վարը չեն կարող մենակ հակակրոնական աշխատանք ծավալել: Իսկ այդպիսի ակտիվ հավաքելու և անեցնելու լավագույն ձևը հանդիսանում է Մարտնչող անաստվածների միության ըջիւը (ՄԱՄ):

Յուրաքանչյուր կոլտնտեսային ակումբ, յուրաքանչյուր

խրճիթ-ընթերցարան պետք է ձգտի պարտիական կազմակերպության օդնությամբ այդպիսի բջիջ ստեղծել: Ամեն մի շրջանին կենտրոնում կարելի է ստանալ «Հրահանգ Մարտնչող անաստվածների միության ըջիջի աշխատանքի մասին»: Այնտեղ նկարագրված է, ինչպես կազմակերպել բջիջը և կանոնավորել նրա աշխատանքը:

Բջիջը կօգնի ինչպես հարկն է դնել կրոնավորների գործունեության, առանձին աշխատավորների վրա նրանց կողմից աղղելու մեթոդների ուսումնասիրությունը:

Բջիջը կարող է իր անդամների միջոցով կանոնավորել հավատացյաների հետ տարվող անհատական աշխատանքը, այցելել նրանց տունը, զրուցներ ունենալ կանանց հետ և այլն:

Պետք է իշել, որ ոչ միայն հակակրոնական աշխատանքը, այլև կոլտնտեսային ակումբի, խրճիթ-ընթերցարանի ողջ աշխատանքն ամբողջությամբ հանդիսանում է որպես հուժկու միջոց աշխատավորների գիտակցության մեջ կրոնական մնացուկները հաղթահարելու համար:

Երբեմն այնպես են լինում, որ կոլտնտեսային երիտասարդությունը գնում է եկեղեցի, կամ աղանդավորների մոտ միայն այն պատճառով, որ այնտեղ «գեղեցիկ երգում են», իսկ խրճիթ-ընթերցարանը անգործունեության և մատնված: Պետք է, որ կոլտնտեսային ակումբը, խրճիթ-ընթերցարանը լավ աշխատեն, որպեսզի այնտեղ կարելի լինի ստանալ թարմ թերթ, նոր գիրք, տեղեկանք այս կամ այն հարցի վերաբերյալ որպեսզի այնտեղ կազմակերպված լինի գեղարվեստական ինքնազործունեությունը: Այդ ամենը կօժանդակի հավատացյալ աշխատավորների ուշադրության հեռացմանը կրոնական կազմակերպություններից:

Պետք է, որ կոլտնտեսային ակումբը կամ խրճիթ-ընթերցարանը իսկական կուտուրական կենտրոն լինի ոյուղում: Միայն այս պայմաններում կարելի է հաջող տանել հակակրոնական պրոպագանդան: Այդ տեսակետից հետաքրքիր է Մոսկվայի մարզի Կուրովյան շրջանի Զավոլիենե կոլտնտեսության խրճիթ-ընթերցարանի վարիչ Ա. Պարֆենովիչի փորձը:

Ընկեր Ա. Պարֆենովիան նշանակված է եղել Զավոլիենյան խրճիթ-ընթերցարանի և կոլտնտեսային ակումբի վարիչ 1937 թ.: Խրճիթ-ընթերցարանի և կոլտնտեսային ակումբի շենքը անուշադրության էր մատնված: Գույք շատ կար, բայց նա կարիք էր զգում վերանորոգման:

Սկզբում ընկեր Պարֆենովան սկսեց լրիվ կարգի բերել շենքը և գույքը: Գյուղսովետը բաց թողեց անհրաժեշտ միջոցներ: Ընկեր Պարֆենովան կոլտնտեսականների մեջ գտավ ներկարարներ, ներգրավեց աղջիկներին սփոռցներ և վարագույրներ կարելու, պարզեց, թե երիտասարդությունից և մեծահասակներից ով է հետաքրքրվում խրճիթ-ընթերցարանով: Այդ մարդիկ հետագայում դարձան քաղլուսվարական աշխատանքի ակտիվիտեներ:

Գյուղում լուրեր տարածվեցին, թե խրճիթ-ընթերցարանում ավելի լավ կլինի, քան կոլտնտեսականների աներում: Հենց առաջին երեկոյին շատ ժողովուրդ եկավ: Ընթերցարանը բոլորին զարմացրեց: Տնաշյուս ուղեգորդեր հատակում, մութ-կանաչավուն յուղաներկի պանել պատերի վրա, ձյունափայլ սպիտակացրած առաստաղ, բոլոր լուսամուտներում մուգ-կանաչավուն, մինչև հատակը հասնող վարագույրներ, հարմար սեղաններ, ծածկված տնայնագործ ձեռվ պատրաստած սփոռցներով, կաղնի աթոռներ կիսափափուկ նստացներով և թիկնոցներով, տակառիկների մեջ ծաղիկներ, ընկեր լենինի կիսանդրին բարձր պոստամենտի վրա պատած կարմիր կտորով, ընկեր Ստալինի և Համ Կ(ր) Պ Կենտկոմի քաղըրյուրոյի անդամների նկարները շրջանակներում և աղակով: Ռազիոսելորդուկտոր, թերթեր, ժուռնալներ, շախմատի և դամախաղի տախտակներ սեղանների վրա, կախված լամպեր լուսամփոփներով: այդ ամենը տրամադրում էր հաճախակի լինել խրճիթ-ընթերցարանում: Եվ զարմանալի չէ, որ մտնելով խրճիթ-ընթերցարան, յուրաքանչյուր հաճախորդ հանում է վերարկուն միջանցքում, ձեռք անպայման թափէ տալիս վալին-կաների ձյունը, իսկ անձը և եղանակին աշխատում է մաքրել կոշիկների ցիւը:

Խրճիթ-ընթերցարանը միայն իր արտաքին տեսքով գրավեց կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների հարգանքը:

Կոնսուլտացիաներից մեկում քաղլուսաշխատանքի կարինետում ընկեր Պարֆենովան լուսմ էր զեկուցում հակակրոնական պրոպագանդայի մասին: «Ճիշտ է»—մտածում էր Պարֆենովան ականջ դնելով զեկուցողի խոսքերին, մենք բոլորովին մոռացել ենք հակակրոնական աշխատանքի մասին. նա հիշեց, թե ինչպես նվաստացած և հլու կանգնած էին աղոթատանը գտակի ծիսակատալության ժամանակ շատ կոլտնտեսականներ: «Դետք է զբաղվել հակակրոնական աշխատանքով», որոշեց նա:

Ընկեր Պարֆենովան դիմեց շրջանային դասախոսական

բյուրոյին՝ ինդրելով դասախոս տալ: Գործը ձմռանն էր: Տվյալն դասախոս, որը պետք է կարդար դասախոսություն «Ծննդյան տոնը և կրոնի դասակարգային էությունը» թեմայի մասին: Առաջանար փակցրին, հրավերներ ու զարկեցին բոլոր բրիգադներին: Նշանակված ժամին լսողները հավաքվեցին: Դասախոսը ժամանակին եկավ և դասախոսությունը սկսվեց:

Նայելով հավաքվածների մասսային, ընկեր Պարֆենովան լսողների դեմքերից դատում էր, որ մեծ հետաքրքրություն կա դեպի թեման և աբգեն կանխազուշակում էր հաջողությունը: Սակայն նրա հաշիվները չարգարացան: Դասախոսությունը մինչև վերջը լսեցին միայն մի քանի ակտիվ մարդկեր, իսկ շարքային կոլտնտեսականներն աստիճանաբար գնում էին դեռ դասախոսության առաջին կեսից:

Թեման հետաքրքրի է, բայց դասախոսն անհաջող դուրս եկավ, որոշեցին Պարֆենովան և ակտիվիտեները:

Որոշվեց նոր տարվա սկզբին այլ դասախոս հրավիրել: Ծըր-ջանային դասախոսական բյուրոն այդ անդամ էլ ընդպառնեց: Տվյալն նոր դասախոս, հանճնարարելով զբույց անցկացնել «Կըունի դասակարգային էությունը» թեմայի շուրջը:

«Թեման շատ կարևոր է և հետաքրքրի» խրատականորեն հայտնեց նրան դասախոսական բյուրոյի այդ ժամանակված վարիչը:

Դասախոսությունն անցավ ավելի վատ, քան առաջինը: Լըսողներն, արգեն առանց ձնշվելու, ինչպես առաջին անդամն էր, խմբերով ցըլում էին իրենց տները, դասախոսությունն սկսվելուց 15 րոպե հետո:

Ի՞նչ անել: Ինչումն է բանը: Մի գուցե կրկին դասախոսն է վատ, կամ մեզ մոտ բոլորն անհավատացիաներ են—մտածում էր ընկեր Պարֆենովան:

Նա հետաքրքրվեց հակակրոնական աշխատանքի գրության մասին շրջանում: Պարզեց, որ շրջանում կան Մարտնչող անաստվածների միության 600 անդամներ: Բայց Մարտնչող անաստվածների միության շրջանային խորհուրդը չի կարողացել նրանց ցիւց դաստիարակել ակտիվ մարտնչող անաստվածներ: Մարտնչող անաստվածների միության կոլտնտեսային բջիջների մեծ մասն անգործունեության էին մատնված այնպես, ինչպես և Զավոլենեյում: Ակտիվ էին միայն մի քանի մարդ շրջանային կենտրոնի ինտելիգենտներից: Բայց նրանք միայն ստանում էին

հանձնարարություններ՝ դասախոսություններ կարգալ մերթ մեկ, մերթ մյուս կողմանտեսությունում, գլխավորապես մեկ, բոլորի առաջնորդին առած թեմայի վերաբերյալ այսինչ տոնը և կրոնի դասակարգային էությունը: Դա ձանձրույթ էր առաջացնում հակակրոնական աշխատանքում:

Ընկ. Պարփենովան որոշեց դյուլսովետի կուլտհանձնաժողովի ընդլայնացած նիստ հրավիրել և քննարկել, թե ինչ անել Զավոլենեյում հակակրոնական պրոպագանդայի ասպարիզում: Միաժամանակ նա դիմեց Համ Կ(ը)Պ կուրովյան շրջկոմ: Շրջկոմ այցելելու արդյունքների մասին նիստում նա պատմեց հետեւյալը.

Ես եղա Մարտնչող անաստվածների միության շրջանային սովետում, բայց այստեղ ինձ ոչ մի ինելացի խորհուրդ չտվեցին: Դիմեցի այն ժամանակ պարտիական շրջկոմի քարտուղարին, նա խոստացավ առանձնացնել մեզ, պետքական մարդկանց և խոսել կոլտնտեսության պարտիական կազմակերպության հետ, որպեսզի մեզ օգնեն: Այնուհետև նա ինձ ասաց. «Դրույթ վերցրու ամենաօրյա պրոպագանդայի, կրօնական հայացքները 10 օրում չի կարելի փոխել: Աշխատիր պատասխանել ամենախորհրդավոր հարցերին, որոնք կոլտնտեսականի մեջ կապված են կրօնի հետ: Միջոցառումների ցիկլն այնպես դասավորի, որ գրանք կատարես մնացած մյուս քաղաքական լուսավորական աշխատանքի հետ միասին և որ ամբողջությամբ առած 2—3 ամսում տաս միջոցառումների ավարտված մի շրջան: Հետեւյալ եռամսյակի համար նախագծի նոր ցիկլ»:

Ընկեր Պարփենովան հրապարակեց Խրճիթ-ընթերցարանի 1939 թ. առաջին եռամսյակի աշխատանքի պլանի նախագիծը: Պարտշրջկոմի քարտուղարի խորհուրդը նա հաշվի առավ: Խըմբակների պարապմունքները, կոնտրլտացիաները, ժողովները հաջորդում էին հակակրոնական միջոցառումներին:

Այդ մասում կոլտնտեսականը մեղանից չի կարող նեղանալ: Նա չի ասի, որ մենք «իցկում» ենք միայն հակակրոնական պրոպագանդա, —նշեց կուտահանձնաժողովի անդամ, կոլտնտեսության հաշվետար ընկ. Ֆ. Տ. Սմիրնովը:

Բայց ահա միջոցառումների ներդաշնակություն չստացվեց և քաղախատանքի հետ կապակցում չկա, —ասաց կոլտնտեսության նախագահ ընկեր Ռւզարովը: Դասախոսությունների թեմաները պատահականորեն են ընտրված: Շրջկոմի քարտուղարը ճիշտ խորհուրդ էր տվել: պետք է տալ միջոցառումների ներ-

դաշնակ սիստեմ որպեսզի կոլտնտեսականների մեջ կուտակվեն գիտելիքներ և զարգանա աշխարհայցք, որը հիմնված է գիտության տվյալների վրա:

Դա ճիշտ է, —պաշտպանեց նրան կոլտնտեսության պարտկազմակերպիչ ընկ. Օբրազգովը, —բայց ամենակարևորը հակակրոնական պրոպագանդայում՝ դա հիմնական օղակի շոշափումն է: Իսկ այժմ գլխավորը ողջ մասսայական-քաղաքական աշխատանքում դա ստալինյան երրորդ հնդամյա պլանի կատարման համար տարվող պայքարն է: Զե որ կոմունիստական հասարակաբարգի կառուցման հիմքը կենդանի մարդիկ են, այդ մենք ենք, սովետական հասարակ մարդիկ: Մարդուն՝ կոմունիզմի համար պայքարողին, մարդուն՝ բնության վրա տիրողին ել պետք է նվիրել հակակրոնական պրոպագանդայի վերաբերյալ կիրառվող միջոցառումների առաջին ցիկլը:

Դրա հետ համաձայնվեցին խորհրդակցության բոլոր մասնակիցները:

Որոշված էր առաջին հակակրոնական զրույցը նվիրել «Սովետական հասարակ մարդ» թեմային: Զավակինյան տարրական դպրոցի վարիչ ընկ. Զինովիլ շարունակեց Օբրազգովի միաբը:

Իսկ երբ մենք ցույց տանք, թե ինչպես է խանգարում կը ըստ սովետական հասարակ մարդուն, ապա բնական կիմնի ցույց տալ կրօնի հիմունքների կենդությունը, «հոգու» շինծու գոյությունը և զրա հետ կապված պատկերացումը կյանքի և մահվան մասին պետք է մերկացներ:

Այդպիսով թելագրվեց երկրորդ հակակրոնական դասախոսության թեման՝ «Կյանքը և մահը զիտության լուսաբանությամբ» և կրօնի պատկերացումը»:

—Մարդը «հոգի» չունի, կասի կոլտնտեսականը, դասախոսությունը լսելիս, իսկ ինչ կա «հոգու» փոխարեն, ինչու է ապրում, գործում մարդը, ինչումն է նրա կենսական ուժը, —խորհում էին այնուհետև ակտիվիտաները:

Այդ հարցերին պատասխանելու համար պլանում մտցնել դասախոսություն ակադեմիկ ի, Պ. Պավրովի ուսմունքի մասին:

Այնուհետև նշվեցին դասախոսություններ՝ «Միջուրինը, Լիսենկոն, Ցիցինը, որպես գյուղատնտեսության հեղափոխողներ», «Կրօնական ծիսակատարություններից առողջությանը համոզ մնալը», «Տերտերական ֆարազաներով լրտեսներն ու գիվերսանտ-

Այդ ամենը լավ է, — ասաց ընկեր Վարդառվան, և այս ձահճրաւի չի լինի արդյոք՝ միայն դասախոսություններ են լինում:

Նըս հետ համաձայնվեցին, որ դասախոսությունները պետք է լրացնել ցուցահանդեմներով, դիտողական պիտույքներով:

Առաջին հակակըոնական զրոյցի հաջողությունից կամ առաջին հակակըոնական զրոյցի հաջողությունից է կախված ողջ միջոցառությունների ցիկլի վիճակը: Պիտք է գրագել որքան կարելի է շատ լազո՞ներ, իսկ ինքը զբույցը հետաքրքիր դարձնել:

Վասյա Ժուլելը պատրաստեց «Սովհետական ռամականություն» մեծ պլակատներ, այս զբույցը կայտնալու է 1939 թվի փետրվարի 25-ին Զավոլենյան ակումբի շենքում: Զբույցը դեկան վարում է պարտ, կարինեալ վարչէջ ընկ. Միկիելը: Երեք օր շարունակ բրիգադիերները կոլտնտեսականներին առաջադրվանքներ էին տալիս, ազդաբարում էին դասախոսության մասին: Ակտիվիստները պատրաստեցին և ուղարկեցին գրավոր հրավիրատոմաներ ստախանովականներին, հարվածայիններին և այն չափահաս կոլտնտեսականներին, որոնց ներկայությունը զբույցին առանձանապես ցանկալի էր:

Օրույցի թեմայի վերաբերյալ կազմակերպվեց ցուցանունը՝ Յուցահանդեսի ձախ՝ վերին անկյունում տեղավորեցին Վ. Ի. Աշխարհի պորտրեն և գրեցին նրա հետեւյալ խոսքերը. «Աշխատանքի արտադրողականությունը գա վերջին հաշվով ամենակարևորը, ամենից գլխավորն է նոր հասարակակարգի հազթանակի համար»; Աջ՝ վերին անկյունում տեղավորեցին Ի. Վ. Ստալինի պորտրեն և նրա հետեւյալ խոսքերը. «Սոցիալիզմը կարող է հաղթանակել միայն աշխատանքի բարձր արտադրողականության բազայի վրա»: Ցուցահանդեսի ողջ պատկերազն նյութը ցույց էր ատլիս, թե ինչպես երենց գործի տեխնիկան տիրապետող, աշխատանքի բարձր արտադրողականություն տվող սովետական հասարակ մարդիկ կենսագործում են կյանքում կենինի և Ստալինի խոսքերը. Պահատի միջին մասը զբաղեցնում էր Մուկովյան կրկմի նկարը, որի սուրբինի աստղերը դառնել են ուղեցույց,

ստղեր սղջ աշխատավոր մարդկության համար։ Կրեմլի նկարի ուակ տեղափորձված էր ՍՍՌՄ-ի քարտեզը, իսկ նրանից ներքեմ՝ սուբյակտական շինարարության աճման ցուցաբերումը։

Դասախոսությունը լսելու համար հավաքվեցին մոտ 150 արդ, մեծ մասամբ տարիքավոր կողմնականներ և կողմնառեւ բնիներ։ Պատմելով սովորական մարդկանց՝ ստախանովական- իրի, Սովետական Միության հերոսների համարձակության և նշանվիրության մասին, ըսկե Միլսենը ցույց էր տալիս նրանց որպարենները ցուցահանդեսում, բերում էր վառ էպիզոդներ ըանց կյանքից։ Ողջ զասախոսությունը կառուցված էր կոնկ- հետ փաստերի վրա։

Ըստ Միակերպ զրուցից հետո Զավոլենյան դրամատիկական մըբի մասնակիցները կարգացին ուսանավորներ, պատմվածքներ հատվածներ՝ մեր երկրի անվանի մարդկանց հուշերից և կենապղբություններից:

Մեկ հնդօրյակից հետո «Կյանք և մահ» դասախոսությամբ սրունակվեց հակակրոնական դասախոսությունների ցիկլը:

Այդ թեման լավ իմացող դասախոս չճարվեց ոչ կոլտնտեսությունում և ոչ էլ շրջանային կենտրոնում: Ընկ՝ Պարփենուան դասախոս ստանալու համար դիմեց Մոսկվա: Ուղարկված ասախոս ընկ, Խստբատովը իր դասախոսության ընթացքում ցույց տալիս պլակատներ, որոնց վրա նկարված էին կրոնական արդիականց պատկերացումները «հոգու» մասին, անզրդիրիմյան դանքի մասին, ցույց էր տրված մարդկային մարմի կազմույունը: Բացի դրանից, դասախոսը ցույց էր տալիս գորտերի կատարված գիտական փորձերի մի սերիա:

Մեծ տպավորություն թողեց դասախոսությունը: Մի քանի  
ո կորանտեսականները միմիայն խոսում էին այն բանի մասին,  
ա «Շողի», թե չկա: Հետազա դասախոսությունները՝ «Պավ-  
լի ու Նրա ուսմունքը», «Միջուրինը», Լիսենկոն և Յիշգինը որ-  
ես գյուղատեսության հեղափոխողներ» և այլն,—խորացրին  
ամրացրին կորանտեսականների հետաքրքրությունը գեպի հա-  
սկրոնական թիմանները և նոր գիտելիքներ տվին նրանց: Այդ  
ուրոք դասախոսություններն ընթանում էին դիտողական պի-  
ույքների գույցագրումով:

«Կինը և կրոնը զասախոսությունն արգեն անցկացվեց տեսական ակտիվի ուժերով, Համ Կ(բ)Պ շրջկոմը հանձնարարեց սրդալ այդ դասախոսությունը պարտիայի անդամ ընկ. Խու

տորսկայային, որն աշխատում էր Մելանժեյան կոմբինատում։ Անցյալներում ընկ, Խուտորսկայան ոչ մի դաստիոսություն կարգացած չկար, Պարտիական կարինեատի վարիչն օդնեց նրան ընտառ համապատասխան գրականություն և կազմելու կոնսպեկտ։ Պարֆենովան Մովկայում ճարեց դիավողիտիվսերի սերիա ընկ, Պարֆենովան Գարեգին կազմելու կոնսպեկտ։ Պարտիոնայի վերաբերյալ Կուրովյան միջնակարգ դպրոցը տվեց պրոեկցիոն լապտեր։

Դասախոսության առաջին մասը, որը նվերած էր կրոնի կողմից ճորտագրված կնոջը, ընկ, Խուտորսկայան ուղեկցեց դիավողիտմների ցուցադրումով։ Դասախոսության երկրորդ մասը՝ կինը Սովետական իշխանության օրոք՝ ընկ, Խուտորսկայան իշխուտրացիայի ենթարկեց կինը կոլտնտեսությունում մեծ ուժ է ցուցադրումով։ Դասախոսությունից հետո ընկ, Պարֆենովան ընթերցեց Մ. Գորկու «Հետեւություն» պատմվածքը, որի մեջ նկարագրված է մինչունուցիոն ժամանակվա կնոջ նկատմամբ տեղի ունեցած ծաղրուծանակի բազմաթիվ դեպքերից մեկը։

«Ունեցել է արդյոք աշխարհն սկիզբ և կունենա նա վերջ» դասախոսությունն Զավոլենյուում անցավ չտեսնված հաջողությամբ։ Նրա մեջ հանրագումարի էր բերում հակակրոնական առաջին ցիկլը։ Լուղները ծանոթանում էին գիտության ամենաբարդ բնագավառներից մեկի՝ աստղաբաշխության հետ։ Մովկայի աստղագիտարանի դասախոս Լարիոնովը օժանդակում էր դասախոսության հաջողությանը, նա արագորեն տիրեց լսարանին։ Հայտնելով աստղաբաշխության ասպարիզում գիտական հայտնաբերումների մասին, ընկ, Լարիոնովը լսարանի հետ միասին սկսում էր ստուգել նրանց ամենապարզ, շարքային կոլտնտեսականներին մատչելի եղանակներով։ Նա լուղների մեջ ձիւտ միտք էր հզացնում, ինքը հարց էր տալիս նրանց, նրանց հետ միասին «կասկածում»։ Երբեմն թվում էր, որ լսողը միայն ինքն է, իսկ ողջ առողջապահության՝ կոլեկտիվ դասախոս։ Իսկ այնուհետև լուղների պատմածից և պատասխաններից ընկ, Լարիոնովը հանում էր հետեւություններ, որոնց հետ համաձայնվում էին բոլորը, որովհետեւ դրանք իրենց՝ լսողների ասածների ուղղակի և տրամաբանական հետեւություններն էին հանդիսանում։ Այսպես, բոլորը եկան այն հիմնական հետեւությանը, որ աշխարհը սկիզբ չի ունեցել իսկ հետեւապես չի եղել և «արարիչ» աստված, որը իրը թե ստեղծել է աշխարհը։ Աշխարհը հավիտյան է։ Մարդոն այդ աշխարհի տերն է։

Դասախոսությունը շարունակվեց մեկ ու կես ժամ, իսկ այնուհետև համարյա թե երկու ժամ լսողները հարցեր էին տալիս Լարիոնովին։ Լուղները խնդրեցին ընկ, Պարֆենովային կազմակերպել էքսկուրսիա դեպի Աստղադիտարան։ Դա ցույց է տալիս, որ ընկ, Լարիոնովը կարողացավ խորը հետաքրքրություն առաջցնել լսողների մեջ։

Զավոլենյան խրճիթ-ընթերցարանի հակակրոնական պրոպագանդայի անմիջական արդյունքներից մեկը հանդիսանում է այն փաստը, որ ի տարբերություն 1938 թվի, 1939 թ. զատկվագիշերը Զավոլենյան աղոթարանը դատարկ էր։ Դա հաստատում է դասախոսության գործոն լինելը, որպես հակակրոնական պրոպագանդայի ամենամատչելի ձևերից մեկի։ Ժիտված է քաղաքական լուսավորական մի շարք աշխատողների այն պնդումը, թե հավատացյալ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները իբր թե խուսափում են հակակրոնական զասախոսությունները հաճախելուց։ Զավոլենյան փորձը ապացուցեց, որ նրանք խուսափում են միայն այն դասախոսություններից, որոնցից ձանձրույթի, ձևականության հոտ է փչում։

Այդ փորձը ցույց է տալիս, թե հետաքրքրությունը գետի հակակրոնական դասախոսությունները ստեղծվում է լսողների պահանջները հաշվի առնելու, հակակրոնական պրոպագանդան կոլտնտեսականների շահերին սերտորեն կապակցելու միջոցով։ Զրույցների և դասախոսությունների զեկավարները պետք է լավ պատրաստված լինեն։ Հենվելով խրճիթ-ընթերցարանի, ընջանակին գրադարանի օգնության վրա, ըրջանային ակտիվիտի օգնության վրա, սովետական ինտելիգենցիայի շարքերից ելած տեղական դասախոսները պետք է մանրակերկիտ կերպով նախապատրաստվեն տվյալ առողջորդիայի առաջ ելույթ ունենալու համար։

Զավոլենյան խրճիթ-ընթերցարանի աշխատանքի պայմանները ոչնչով չեն տարբերում որևէ այլ խրճիթ-ընթերցարանի պայմաններից։ Նույնական աշխատանք կարելի է կատարել յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանում, ամեն մի կոլտնտեսային ակումբում։ Պետք է միայն խուսափել ուրիշի վորձի կույր ընդուրինակությաց, իսկ ձևերի ընտրության և բովանդակության մշակում։

## ԿՈՆՏՐՈԼ ՀԱՐՑԵՐ

1. Կապիտալիզմի ինչպիսի մնացուկներ դեռ վերջնականապես չեն հաղթահարված մարդկանց գիտակցության մեջ մեզ մոտ և ինչումն են արտահայտվում նրանք:

2. Ի՞նչումն է կրոնական մնացուկների ուսակցուն դերը:

3. Ի՞նչումն է կրոնի դասակարգույթին շահագործողական էությունը:

4. Ի՞նչու ամեն մի կրոն թշնամի է կոմունիզմին:

5. Մարքս-լենինյան գիտությունը ինչպես է բացատրում կրոնի ծագումը, նրա արմատները և ինչ գեր է խաղում նա հասարակության մեջ:

6. Ի՞նչ տարբերություն բնության և հասարակության իդեալիստական սխալ և մատերիալիստական խիստ գիտական ու միակ ճիշտ բացատրության միջև:

7. Ի՞նչու կապիտալիստական երկրներում պետության և կառավարող շահագործող դասակարգերի կողմից կրոնը մեծ օժանդակություն է ստանում և ուշադրության արժանանում:

8. Ի՞նչպես է կապիտալիստական երկրներում կրոնը փորձում թուլացնել աշխատավորների պայքարը շահագործողների դիմ:

9. Բերեք փաստեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կրոնը և կրոնական կազմակերպությունները օգնում են շահագործողներին պայքար մղելու աշխատավորների դեմ և ակտիվ դեր են խաղում սոցիալիզմի երկրի դեմ պատերազմ հրահրելու մեջ:

10. Ի՞նչու մեզ մոտ անաստվածության (աթերզմի) աճը չտեսնված թափ ստացավ:

11. Ի՞նչու կրոնական մնացուկներն առանձնապես վնասակար են մեր երկրում:

12. Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ինչպիսի միջոցառություններ օժանդակեցին անաստվածության աճմանն ու ամրապնդմանը և խախտեցին այն սոցիալական արմատները, որոնք մնում են կրոնը:

13. Ի՞նչ է զրված Ստալինյան Կոնստիտացիայի 124-րդ հոդվածում խղճի ազատության մասին մեր երկրում:

14. Ի՞նչու եկեղեցականները ամեն կերպ աշխատում են խեղաթյուրել Ստալինյան Կոնստիտուցիայի իմաստը:

15. Ի՞նչու կրոնի դեմ պայքարելիս անհրաժեշտ է խուսա-

փել հայլատացյալների կրոնական զգացմունքները ծաղրելուց:

16. Մանրամասն պատմեցնեք հակակրոնական պրոպագանագայի հիմնական ձևերի մասին խրձիթ-ընթերցարանում և կոլտնտեսային ակումբում:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ակտիվի հետ միասին կազմեցնեք խրձիթ-ընթերցարանի կամ կոլտնտեսային ակումբի հակակրոնական աշխատանքի պլանը մոտակա 3 ամիսների համար:

2. Պայմանավորվեցնեք տեղական ուսուցչի, զյուղատնտեսի, բժշկի և Մարտնչող անաստվածների միության հետ, որ նրանք կարդան դասախոսություն հակակրոնական թեմայի վերաբերյալ Պարտիական կազմակերպության և գտափոսի հետ միասին նշեցնեցնեք գասախոսությունների թեմաները, կազմեցնեք նրանց պլանը Օգնեցնեք գասախոսին դասախոսության համար համապատասխան դրականություն ընտրելու:

3. Նայեցնեք զրբերի կաղմը խրձիթ-ընթերցարանի, ակումբի զրադարանում և սուսպեք, թե կա արդյոք հակակրոնական գրադարանություն: Հնարավորության չափ լրացրեք գրադարանը հակակրոնական թեմաներ ունեցող զրբերով և ըրոշուրներով:

4. Զեննարկեցնեք խրձիթ-ընթերցարանին կամ կոլտնտեսային ակումբին կից անաստվածի տնկյուն կազմակերպելուն: Ներգրավեցնեք այդ աշխատանքներին գյուղական ակտիվին և ինտելիգենցիային:

5. Կազմակերպեցնեք էքսկուրսիա դեպի մոտակա հակակրոնական թանգարանը, մոտակա վանքը, փորձնական-ցուցադրական ազգամասը, էլեկտրոկայանը և այլն: Աշխատեցնեք որպեսզի այդ էքսկուրսիայում մասնակցեն որքան կարելի է շատ հավատացյալներ:

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՏ ՑՈՒՑԱԿ

Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը կրոնի և նրա դեմ պայքարելու մասին:

Կ. Մարքս և Փ. Էնգելս. Հ. կրիտике գեղելևսկոյ ֆիլոսոփիայի որաւա. В книге—  
Կ. Маркс и Ф. Энгельс. Соч., т. I. Стр. 399—402.

Այդ իր վաղ աշխատությունում (1843 թ.) Մարքսը բացատրում է, թե կրոնը հասարակութիւնի արտացոլումն

է մարդկանց զիտակցության մեջ, որ նրա արժամանելը սոցիալական կարգի հո:

4. **ՄԱՐՔՍ**. Коммунизм „Рейнского обозревателя“. В книге—  
К. Маркс, и Ф. Энгельс. (оч., т. V. Стр. 164—176.

Այդ հոգվածում Մարքսը տվել է քրիստոնեության սոցիալական սկզբունքների քննաղատությունը, ցույց է արված թե քրիստոնեությունը միշտ և ամենուրեք արդարացրել է մարդու շահագործումը մարդու կողմից:

Կ. ՄԱՐՔՍ. ԳՈՐՋԻ ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՈՒՅԹՈՒՆ. Հայպետհրատ, Երևան, 1937 թ., էջ 157: Այդ աշխատանքում տրվում է խղճի ազատության բուրժուական հասկացողության կործանիչ քննադատությունը: Մարքսը ցույց է տալիս, թե խղճի իսկական ազատությունը չի կարող իրագործվել բուրժուական պետության մեջ և ընդգծում է խղճի ազատության հասկացողության հիմնական առարկերությունը բուրժուազիայի և բանվոր դասակարգի պարտիայի մոտ:

Ֆ. ԷՆԳԵԼՍ. Անհի-Դյուրինգ, Դիտության հեղաշրջումը պարոն  
Դյուրինգի կողմից, Երևան ՀԿ (բ) Պ Հրատարակ., 1936 թ., էջ 42:

Այդ աշխատանքի երրորդ բաժնում, «Պետովթյուն», ընտանիք, դաստիարակություն» ենթահատվածում էնգելսը ցույց է տալիս, թե «կը ունեմ ոչ այլ ինչ է, եթե ոչ ֆանտաստիկ արտացոլում մարդկանց գլուխներում արտաքին այն ուժերի, որոնք գերիշխում են նրանց վրա իրենց ամենօրյա կյանքում»: Էնգելսը հայտաբերում է Դյուրինգի՝ սոցիալիստական հասարակարգում կրոնն ազգի լեռու մասին եղած դատողությունների անհեթեթյունը: և հետագիմականությունը:

<sup>5</sup> Б. Էւգելս. *Бруно Бауэр и раннее христианство*. М. Партиздат 1933 г., стр. 14.

Հոդվածը գրված է քրիստոնեության ծագման պատմության զերմանական նշանափոր հետազոտող Բըռենո Բառերի մահվան առթիվ և ներկայացնում է կրոնի պատմության նկատմամբ մարդու կուտական մեջողը փայլուն կերպով կիրառելու հիմնալի օրինակ:

<sup>11</sup> *S. Гюгель. К истории раннего христианства.* В книге—К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. XVI, ч. 2. Стр. 409—431.

ԼԵՆԻՆ. Социализм и религия. М. Госпалитиздат, 1939, гл. 32 стр.

Այդ հավաքածուն պարունակում է Անինի երեք անժան հոդվածները՝ «Սոցիալիզմը և կրոնը» (1905), «Բանվորական պարտիայի վերաբերմունքը գեղարվածությանը» (1909) և «Դասակարգերն

ու պարտիաները և նրանց վերաբերմունքը դեպի կրոնը։ Այդ հոդվածներում լենինը բացահայտում է կրոնի դասակարգային էությունը և նրա սոցիալական արժատները։ Ցույց տալով կրոնի հետադիմականությունը, նա ընդգծում է, որ բանվոր դասակարգի պարտիան պետք է անշեղ պայքար մղի կրոնի դեմ, որպես կոմունիզմին թշնամի ուժի։

ч. 1. **Левин.** Два письма А. М. Горькому (1913). Соч., т. XVII, стр. 81—86.

Այդ նամակները անողոք կերպով մերկացնում են իդեալիստական փիլիսոփայությունը, «աստվածաշնարարությունը» և «աստվածախուզությունը»: «Ամեն մի կրոնական իդեալ, ամեն մի իդեալ ամեն մի աստծու մասին, անգամ ամեն մի սեթևեթանք աստծու հետ ամենաանասելի նողկություն է», — զբում է Լենինը Ա. Մ. Գորկուն և տալիս է հստակության և խորության ուշագրավ քնութագիր կրոնի էռեթյան, աստծո իդեալի, աստվածաշնարարության և աստվածախուզության մասին:

Ч. Н. ЛЕВИЧ. *О значении воинствующего материализма*. М.  
Госполитиздат. 1939., стр. 15.

Այդ հոդվածում, որը մարտնչող մատերիալիզմի մարտական ծրագիրն է, կենինը մանրամասն կանգ է առնում կրոնի դեմպայքարելու խնդիրների վրա, բացատրում է, թե մարտնչող աթելիզմը մարտնչող մատերիալիզմի էական մասն է:

Ի. ԱՏՎԱԼԻՆ. Մարքսիզմը և ազգային հարցը. Ի. Ստալինի «Մարքսիզմը և ազգային գաղութային հարցը» գրքում, հատընտիր հոդվածների և ճառերի ժողովածու, Երևան, Պետհրատ, 1938 թ.:

Հողվածը գրված է ընկեր Ստալինի կողմից 1912 թ. վերջին՝ 1913 թ. սկզբին, Ընկեր Ստալինն այդ հոչակավոր հոգվածում տվել է այն հարցի հատակ լրածումը, թե բոլշևիկները ինչ վերաբերմունք ունեն դեպի կրոնը: «Սոցիալ-դեմոկրատիան, ցույց էր տալիս նա, —միշտ բողոքելու է կաթոլիկությունն ու բողոքականությունը հալածելու դեմ, նա միշտ պաշտպանելու է ազգերի իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոնը, բայց նա միենառայն ժամանակ, ելնելով պրոլետարիատի ճիշտ ըմբռնված շահերից, ագիտացիու է մղելու թե կաթոլիկության, թե բողոքականության և թե ուղղափառության դեմ, այն հաշվով, հետամտելով սոցիալիստական աշխարհայացքի հաղթանակը:

Եվ նա այս բանն անելու է այն պատճառով, որ բողոքականությունը, կաթոլիկությունը, ուղղափառությունը և այլն

անկասկած «հակառակ են զնում» ծրագրի ձեշտ իմաստին, այսինքն պրոլետարիատի ճիշտ հասկացած շահերին» (էջ 65):

Ի. ՍՍԱԼԻՆ. Լեմինի մահվան առիվի: Ճառ՝ արտասանած Սովետների Համամիութենական Հ-րդ համագումարում 1924 թ. հունվարի 26-ին: Ի. Ստալին «Լենինի մասին» գրքում:

Այդ ճառում ընկեր Ստալինը տալիս է կրոնի արժատների խոր վերլուծությունը դասակարգային հասարակության մեջ «Տասնյակ և հարյուրավոր անդամ փորձել են աշխատավորները դարերի ընթացքում վար զցել իրենց ուսերից շահագործողներին և իրենց դրության տերը գտանալ Բայց յուրաքանչյուր անդամ, ջախջախված և անարգված, հարկադրված են եղել նրանք նաև հանջել ծածկելով հոգու վիրավորանքն ու ստորացումը, զայրույթն ու ոխը և հուսահատությունը և հառելով հայացքները գեպի անհայտ երկինքը, որտեղ նրանք հույս ունեին փրկություն գտնելու»: Այսուենեակ ընկեր Ստալինը լինգգծում է, որ Լենինի վեհությունը կայանում է առաջին հերթին նրանում, որ նա «Ստեղծելով Սովետների Ռեսպոբլիկա, զբանով խսկ ամրոջ աշխարհի ճնշված մասսաներին ցույց տվեց գործնականում, որ աշխատանքի թագավորությունը պետք է սահղել երկրի վրա և ոչ թե երկնքում»:

Ի. ՍՍԱԼԻՆ. Զրույց ամերիկյան առաջին բանվորական պատգամավորության հետ: Ի. Ստալին «Լենինիզմի հարցերը» գըրքում, Հայպետհրատ, 1937 թ., Երևան, էջ 289—291:

Պատասխանելով ամերիկյան բանվորական պատգամավորության 11-րդ հարցին, ընկեր Ստալինը սահմանում է Սովետականության և կոմունիստական պարտիայի վերաբերմունքը կըսնի հանդեպ:

Ի. Վ. ՍՍԱԼԻՆ. Զեկուցում ՍՍՌՄ Կոմստիտուցիայի նախագծի մասին: Սովետական Սոցիալիստական Ռեսպոբլիկաների Միության Կոնստիտուցիան (Հիմնական օրենքը), Երևան, Պետհրատ, 1938 թ., էջ 50—51:

Ի. Վ. ՍՍԱԼԻՆ. Հաշվետու զեկուցում պարտիական XVIII համագումարում Համ Կ(բ) Պ Կկ աշխատանքի մասին: Երևան, Պետհրատ, 1939 թ.:

## Մասսայական բաղաբական գրականություն

Антирелигиозный учебник. Для кружков и самообразования. Под. ред. М. М. Шейнмана. М. Государственное антирелигиозное издательство (ГАИЗ), 1938. 435 стр.

Գիրքը պարունակում է կարևորագույն նյութ հակակրոնական պրոպագանդայի հիմնական հարցերի վերաբերյալ՝ կոմունիզմի և կրոնի, գիտության և կրոնի անհաջողելիության մասին, կրոնի և կրոնական կազմակերպությունների ուսակցություն դերի մասին, նյութեր կրոնի և եկեղեցու պատմություններ, աթելիզմի պատմություններ և բնագիտության ինդիքների մասին:

Մ. ԳՈՐԿԻ. Օրելիս. Сборник. М. „Молодая гвардия“. 1937. 130 стр. Ժողովածուի առաջին հատվածում զետեղված Ա. Մ. Գորկու հոգվածները, ճառերը և նամակներն ուղղված են կեղծավոր տերտերական բարեկազտության դեմ, ասկետիզմի եկեղեցական քարոզի դեմ, խալիարամության դեմ: Գորկին անողոքաբար խարազանում է եկեղեցուն, որն օրհնում է մարդկության հանգեցիկ կատարած սուկալի ոճիրները, մզում ժողովուրդներն իրար ոչնչացնելու և միենույն ժամանակ հոչակում է սաեր և թողություն»:

Կաлендарь антирелигиозника на 1939 год. М. ГАИЗ. 1939.

КАНДИДОВ Борис. Церковь и шпионаж. О некоторых фактах контрреволюционной и шпионской деятельности религиозных организаций. М. ГАИЗ. 1938. 190 стр.

Ю. КОГАН и Д. МЕГРУЖАН. О свободе совести. М. ГАИЗ. 1938. 64 стр.

ԲՐՈՅՈՐՈՒՄ հանրամատչելիորեն բացատրվում է, թե միայն ՍՍՌՄ-ում է իրագործված խնձի խսկական աղատությունը, որի համար միշտ պայքարել են լավագույն առաջավոր մարդիկ: Բնիքում են փաստեր այն մասին, թե ինչպես ճնշվում էր խնձի աղատությունը և ամեն մի ազատ միտք ցարիզմի ժամանակ:

Ի. ԿՐԻՎԵԼԵՎ. Պրածա օ ևանգeliախ. Изд. 3-е. М. ГАИЗ 1938. 96 стр.

Ավետարանի քննադատական վերլուծումը, որը մերկացնում է ավետարանական ուսմունքի հակասությունները և դաշտակարգային էությունը:

Ի. ԿՐԻՎԵԼԵՎ. Женщина и религия. М. ГАИЗ. 1937. 50 стр.

Ю. МИЙСКИЙ. О сектантах. М. ГАИЗ. 48 стр. 35 է.

Հեղինակը հանրամատչելի ձեռվ վառ օրինակների վրա ցույց է տալիս, թե ինչպես աղանդավոր «եղբայրները» խարում են հավատացյալներին իրենց կեղծավոր ճառերով, որոնցով նրանք ծածկում են իրենց գարշելի գործերը:

Փ. ОЛЕЩУК. Борьба церкви против народа. М. Госполитиздат, 1939. 112 стр.

ԲՐՈՅՈՐՈՒՄ պարունակում է մեծ նյութ, որը բնութագրում

է ուղղափառ պատերի, աղանդավոր «եղբայրների», մոլլաների, քահնձների, պատորների, բարբինների, լամանջերի և շամանների կոնտրուլուցիոն գործունեությունը:

Ф. ОЛЕЩУК. Коммунистическое воспитание масс и преодоление религиозных пережитков. Журн. «Большевик». 1939. № 9. Стр. 38—48.

Ф. ОЛЕЩУК. Молодежь и религия. М. ГАИЗ. 1938. 56 стр.

Н. РУМЯНЦЕВ. Жил ли Иисус христос. М. ГАИЗ. 1938. 56 стр.

Բրոշյուրում բերվում են գիտական ապացույցներ Հիսուս քրիստոսի հեքիաթային և ոչ պատմական լինելու մասին և բացատրվում է նրա առասպելական կերպարանքի առաջադման ոլատճառները:

Н. РУМЯНЦЕВ. Происхождение рождества христова. М. ГАИЗ. 1938. 44 стр.

Համառոտ կերպով շարադրվում է ծննդյան տոնի ծագման պատմությունը: Հատուկ գլուխ է նվիրված այդ հարցի բացարձությանը, թե ինչու տարեգրությունը տարվում է ոչ մի ժամանակ գոյություն չունեցող «քրիստոսի ծննդից»:

И. И. СВОРОДОВ-СТЕПАНОВ. Мысли о религии. М. ГАИЗ. 1936. 346 стр.

Ժողովածուն պարունակում է Սկվարցով-Մտեպանովի հանրամատչելի հակակրոնական աշխատությունները, որոնց մեջ մերկացվում է կրոնի և նրա ուսմունքի, բարոյականության, սրբերի, աստվածների և այլնի հակագիտական լինելը և վնասը:

Спутник антирелигиозника. М. ГАИЗ. 1939. 336 стр.

Ժողովածուն պարունակում է այնպիսի նյութեր, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր պրոպագանիստի և ազիտատորհակակրոնականի համար: Նրա մեջ տրված են մարքսիզմի-լինիսիզմի կլասիկների հիմնական կարծիքները կրոնի և նրա գեղագայքարելու մասին, քաղվածքներ կոմինաերնի, Համ Կ(բ)Պ և Համ ԼԿԵՄ ծրագրերից և պարտիայի կարեռագույն դիրեկտիվներից հակակրոնական պրոպագանդայի խնդիրների մասին, հակակրոնական դասախոսությունների մեթոդական մշակումներ, նյութեր կազմակերպական աշխատանքների հարցերի վերաբերյալ, նույն թվում հակակրոնական զրույցների թեմաների և դրականության մանրամասն ցուցակը: Բազմակողմանի տեղեկանքային տեղեկություններ:

П. Н. ФЕДОСЕЕВ. О религии и борьбе с ней. М. ГАИЗ. 1938. 132 стр.

Բրոշյուրում շարադրվում է մարքսինինյան ուսմուն-

քը կրոնի ծագման, նրա սոցիալական արժատների ու սեակցիոն էության մասին, կրոնական մնացուկների հաղթահարման պայմանների մասին: Տրվում է օպրտառնիստական խնդաթյուրումների քննադատությունը հակակրոնական պրոպագանդայում:

А. ЮРИН. Под маской религии. А. ГАИЗ. 1939. 80 стр.

Բրոշյուրը պարունակում է լնդարձակ փաստական նյութ, որը բնորոշում է եկեղեցական և աղանդավորական պարագուիների իսկական գենքը, նրանց սար կոնտրուլուցիոն մասարարական գործունեությունը:

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ. Коммунизм и религия. М. „Молодая гвардия“ 1937. 45 стр.

Համառոտ ակնարկ որը բացատրում է կոմունիզմի և կրոնի անհաշտելիությունը:

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ. Сталинская Конституция и вопрос о религии. М. ГАИЗ. 1936. 16 стр.

Հանրամատչելի բրոյուր է, որի մեջ բացարձած են ՍՍՌՄ կոնստիտուցիայի հոգվածների իմաստն ու նշանակությունը, որոնք խոսում են խղճի ազատության և պաշտամունքի սպասարկության վերաբերյալ:

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ. Карл Маркс о религии. М. ГАИЗ. 1937. стр. 45.

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ. Как рождается, живут и умирают боги. М. ГАИЗ. 1938. 260 стр.

Տարբեր ժողովուրդների կրոնական ուսմունքների համեմատության միջոցով հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես միանման պայմաններում տարբեր ժողովուրդների մոտ ծագել են նման հավատներ ու կրոնական պաշտամունքներ:

ԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԸԿԻ. Ավետարան հավատացյալների ու անհավատացյալների նամար:

Բացահայտվում է դասակարգային ծագումը և դասակարգային գերը ավետարանի, որը հանդիսանում է շահագործողների կողմից աշխատավորներին մթագնող զենքերից մեկը:

ԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԸԿԻ. Л. Н. Толстой и толстовцы. М. ГАИЗ. 1938. 39 стр.

Բրոշյուրը միացնում է 3 հոգված, որոնցով ցույց տալով լ. Ն. Տոլստոյին որպես «կապիտալիստական հասարակակարգի և եկեղեցու չարքիքի կրքու դիմակազերծ անողի», միաժամանակ ընկեր Յարոսլավսկին մերկացնում է տոլստոյական «չարքիքին բռնությամբ չդիմադրելու» քարոզի հետադիմականությունը:

## Պարբերական հրատարակություններ

„Եզերոյնիկ“. Տասնօրյա հակակոսնական թերթ: Օրգան ՍՍՌՄ Մարտնչող անաստվածների միության կենտրոնական խորհրդի: Հրատարակություն 14-րդ տարի: Լույս է տեսնում ամսական 3 անգամ:

„Եզերոյնիկ“. Աժապիր: ՍՍՌՄ Մարտնչող անաստվածների միության կենտրոնական և Մոսկվայի խորհուրդների օրգան: Հրատարակության 17-րդ տարի:

„Անտիրելիցիոզնիկ“. Ամենամայա գիտամեթոդական ժուռնալ: Օրգան ՍՍՌՄ Մարտնչող անաստվածների միության կենտրոնական խորհրդի: Հրատարակության 14-րդ տարի:

## Գիտական-հանրամատչելի գրականություն

Կ. Լ. ԲԱԵՎ և Վ. Ա. ՌԻՌԱԿՈՎ. Պրածա օ հեծ (քրոտե եւ սեծ ո աստրոնոմի). Մ. ԳԱԻՅ. 1936. 68 էտր.

Այդ փոքրիկ բրոշյուրը հաշվի է առնված անպատճառատ ընթերցողի համար: Պարզ և մատչելի ձևով նրա մեջ շարադրվում էն ամենատարրական տեղեկություններ երկրի ձևերի, չափերի և հիմնական շարժումների մասին, երկրային մթնոլորտի, արևի, լուսի, աստղերի և աստղային տիեզերքի մասին:

Թ. ԳԵԿԵԼԵ. Միրօւ զարգակ. Մ. ԳԱԻՅ. 1937. 536 էտր.

Համաշխարհային հոչակ ստացած Հեկկելի գիրքը հանդիպաւմ է որպես փայլուն մի փորձ՝ հանրագումարի բերելու և մատերիալիստորեն ընդհանրացնելու XIX դարի բնագիտական բոլոր գիտելիքները:

Մ. ԳՐԵՄԱԾԿԻ. Կառ պրուզաւ շահութ. 2-օւ իզ. Մ. ԳԱԻՅ. 1938. 112 էտր.

Բրոշյուրում հանրամատչելի ձևով շարադրված է Դարվինի ուսումնաքը մարդու ծագման մասին և բազմաթիվ փաստերի վրա մերկացվում է աստվածաշնչային հեքիաթի սուտը՝ աստծու կողմէց մարդուն ստեղծելու մասին:

Գ. Ա. ՂՈՐԵՎ. Խառ և րելիգի օ վասլենոյ. Խառչո-պուլյար օւրք. Մ. „Մոլուա գվարդիա“. 1938. 102 էտր.

Գիրքը նվիրված է տիեզերքի, երկրի և արեգային սիստեմի ծագման մատերիալիստական հայացքի հիմնավորմանը: Յուլյու է տրված կրոնի պայքարը գիտության գեմ:

Գ. Ա. ՂՈՐԵՎ. Կոպերնիկովայ երесь օ պրոշալու և նաստած Պատմությունների համապատասխան պատճենագիր օւրք. Մ. ԳԱԻՅ. 1937. 300 էտր.

Գիրքը աստղաբաշխության յուրահատուկ հակակրոնական պատմություն է: Նրանում տրված է տերտերականության պայքարը գիտական աշխարհացքի գեմ սկսած կովերնեկոսից մինչև քարը գիտական աշխարհացքի պայքարը և այդ պայքարի սոցիալական իմերը օրերը և բացահայտվում է այդ պայքարի սոցիալական իմաստը:

Վ. ԼՈՒԿԵՎԻՉ. Գրօնու յալենու ուրօնու. Մ. ԳԱԻՅ. 1937

124 էտր.

Պարզ և մասսայական ընթերցողի համար մատչելի ձևով հեղինակը պատմում է փոթութեների, մըրիկների, երկրաշարժեների բի, հրաբխային ժայթքումների, «արյունախառն» անձրեների, բի, հրաբխային ժայթքումների, վայլերի և այլնի մասին: Բացատրելով, թե ինչն է տեսիլների, փայլերի և այլնի մասին: Բացատրելով, թե ինչն է նման երկույթների պատճառը, հեղինակը մեջկացնում է դրա հետ կապված կրոնական նախապաշտարմունքների ողջ տիստը:

Կ. Ա. ՏԻՄԻՐՅԱԶԵՎ. Կրատիկ օւրք տեօրու Դարվին. Մ. Սելյխօզգիզ. 1939. 144 էտր.

Պարզինի ուսմունքի բուսական, կենդանական աշխարհի ծաղման և էվոլյուցիայի փայլուն ժողովրդականությունը, ուսմունքի որն ուժեղ հարված հասցըրց բնության մասին եղած կրոպերի, որն ուժեղ հարված հասցըրց բնության մասին եղած կրոպերին:

## Գեղարվեսական գրականություն

Անտիրելիցիոզնա ուսուա և պրա. Սօստ. Ե. Դ. Վանևսկայ. Մ. ԳԱԻՅ. 1939 թ. 398 էտր.

Ժողովածուն պարունակում է համաշխարհային գեղարվիսատականության լավագույն հակակրոնական երկերը, հատական գրականության լավագույն հակակրոնական երկերը, հակակրոնական ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշները:

ԱԻՐԻ ԲԱՐԲԻՕ. Հա ուրեազունու ունկու. (Գրու „Բ օգնե“ գրեց) Մ. „Մոլուա գվարդիա“. 1937. 24 էտր.

Ցրանսիֆական կոմունիստ գրուվ ուշագրավ վեպի այդ գըր խում փայլուն կերպով ցույց է տրված քրիստոնեական եկեղեցու լիությունը, որը խարում է զինվորներին, օրհնում մարդկանց փոխադրձ ոչնչացման համար հանուն կապիտալի շահերի:

Գ. ԳԵЙНЕ. Ստիխ. Մ. „Մոլուա գվարդիա“. 1937. 40 էտր.

Սборник антирелигиозных стихов великого немецкого поэта XIX века: „Силезские ткачи“, „К Лазарю“, „В придворной Мюнхенской церкви венчания...“, „Мне снится сон, что я—господь“, отрывки из поэм „Диспут“ и „Германия“ и др.

Ա. ԳՈՐԿԻ. Մանկություն:



հակառակողուցիոն կազմակերպության մեջ հավաքագրելու մասին:

XIX գլխում՝ Կոնդրատ Մայդաննիկովի հուշերն իր երեսիայության մասին և երեխա հասակից նրան ներշնչած հնագանդության մասին: Միանձնուեիների կողմից կոնտրռեոլուցիոն լուրեր տարածելու մասին:

XXI գլխում՝ Տուրյանսկու տերտերի կողմից Դիմիդ Մոլչունին հաղորդումից զրկելու կոմիկական պատմությունը:

XXV գլխում՝ Կոմերիտական Վանյուշա Նայդենովի պատմը՝ վածքը հորթի հետ պատահած դեպքի, մասին որն հկեղեցում իրարացում է առաջացրել:

XXX գլխում՝ տերտերական տգիտության ազգեցության տակ Մարինա Պոյարկովայի՝ կոլտնտեսությունից գորո գալու մասին:

Я. ХАПЕК. Коза и всемогущий бог. Антирелигиозные юмористические рассказы. М. „Молодая гвардия“. 1937, 36 стр.

Սուր Երգիծանք կրօնի և նրա սպասավորների նկատմամբ, որոնք զիտակցարար խարում են հավատացյալներին:



Գառ. Խմբագիր՝ Ս. Նալբանդյան

Թարգմ. Ս. Թաղեսոյան

5 տպ. մամուլ, մեկ մամուլում 38400 էջ, հեղ. 4,8 մամ.

Հանձնված է արտադրության 1941 թ. հունվարի 2-ին

Ստորագրված է տպագրության 1941 թ. փետրվարի 10-ին:

Վ. 3240, պատ. № 334, տիրաժ. 1000

Լուսատոֆ տողարան,

Երևան, Տերյան № 127

ՀՀ Ազգային գրադարան



8620

2 F P

Ф. Н. ОЛЕЩУК  
АНТИРЕЛИГИОЗНАЯ ПРОПАГАНДА  
В ИЗБЕ-ЧИТАЛЬНЕ  
И КОЛХОЗНОМ КЛУБЕ  
И РОСИЗДАТ

Ереван, тип. изд. Наркомпроса Арм. ССР, Терян 127, 1940